

Կիպրահայ

ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՔԱՌԱՍՈՒՆԱՄԵԱԿ

ԿԻՊՐԱՀԱՅ


ՆԱՐԵԿ

Նարեկի Քառասունամեակ...: Կարօտալի վերահանդիպում, քաղցրաթախիծ յուշերու հեղեղ, անցած հի՛ն-հի՛ն օրերու վերապրում, այլե՛ վառ յոյսերու տեսիլք, հոգենորոգ ջանք ու կորով՝ ապագայ անխափան երթի...: Մանաւանդ՝ ուխտ ու երդում, շարունակելու Նարեկ վարժարանի հայակերտումի եւ մարդակերտումի սրբազան առաքելութիւնը...:



Այսպիսին էր ոգեկան մթնոլորտը՝ Նիկոսիոյ Նարեկ վարժարանի յոբելինական հանդիսութեան օրը, ուր ցնծութեան, յուշերու եւ յոյզերու, յոյսի եւ լոյսի վառ ապրումներ կը թեւածէին օդին մէջ ու կ'արձագանգէին հոգիներէն ներս...:

Յոբելինական այս հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Հոկտեմբեր 2012, կ.ե. ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Վարժարանի հանդիսասրահին մէջ, հովանաւորութեամբ՝ Կիպրոսի



Կրթական Նախարար Ն.Վ. Պրն. Եորդոս Տիմոթէնուսի եւ նախագահութեամբ՝ Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի:

Կիպրոսի Հանրապետութեան, Հայաստանի

վարժարանին, անգամ մը եւս

Հանրապետութեան եւ Նարեկ Վարժարանի քայլերգներու կատարումէն ետք, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ տնօրէնուհի Վերա Թահմազեան, որ համառօտ պատմականը ըրաւ Նիկոսիոյ Նարեկ շէշտելով անոր առաքելութիւնը՝ իրերայաջորդ սերունդներուն փոխանցելու հայոց լեզուն, գիրն ու գրականութիւնը, պատմութիւնն ու մշակոյթը, կրօնն ու Լուսաւորչեան հաւատքը, եւ երախտագիտութիւն յայտնեց Կիպրոսի պետութեան եւ կառավարութեան՝ իրենց ցուցաբերած ամբողջանուէր նիւթա-բարոյական աջակցութեան համար:



Կիպրոսի Թեմի Կաթ. Փոխ. Տ. Վարուժան Արքեպիսկոպոս կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.

Կաթողիկոսի Կոնդակը եւ փոխանցեց իր Օրհնութեան խօսքը: Սրբատառ Կոնդակին մէջ, յատկապէս կ'ըսուէր. «Նարեկ վարժարանի 40-ամեակը կենդանի վկայութիւն մըն է ու միաժամանակ յուշարար մը՝ հայ դպրոցին ունեցած վճռադրոշմ առաքելութեան ու

ճակատագրական դերին, որպէս քրիստոնէական ու ազգային ինքնութեան կազմաւորման անփոխարինելի հնոց: Մփիւռքի մէջ գործող մեր կրթական հաստատութիւններու շարքին, մեծ եղաւ դերը նաեւ այս վարժարանին, որպէս հայապահպանման ամուր կռուան ու հոգեմտաւոր զարգացման կենսատու աղբիւր՝ համայնքի կեանքէն ներս»:

Յաջորդաբար, իրենց Պատգամը փոխանցեցին՝ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Եօրղոս Տիմոսթէնուս եւ Կիպրոսի Խորհրդարանի Կրթական Յանձնախումբի Ատենապետ Նիկոս Թորնարիտիս, որոնք բարձր դրուատանքով անդրադարձան կիպրահայութեան ներդրումին՝ երկրի մշակոյթի, երաժշտութեան, արուեստներու եւ արհեստներու, տնտեսական եւ քաղաքացիական բոլոր ոլորտներէն ներս..., հայ մարդու քաղաքակիրթ կերպարին, անոր աշխատասիրութեան, անխոնջ կամք ու կորովին..., եւ պատրաստակամութիւն յայտնեցին միշտ զօրավիզ ըլլալու հայ դպրոցին ու հայ ժողովուրդին:



Սրտի խոր յուզումով խօսք առաւ նաեւ Կիպրահայ վարժարաններու Հոգաբարձութեան Ատենապետ Վարդան Թաշճեան, որ միաժամանակ բազմամեայ վաստակաւոր Տնօրէնն է եղած Նարեկ վարժարաններուն: Ան իր յարգանքի եւ երախտիքի խոնարհումը յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց քրտինքով ու նուիրումով, ջանք ու կամքով, ոգիով ու հոգիով՝ շունչ ու կեանք էին տուեր Նարեկ վարժարաններու հայեցի կրթութեան սրբազան գործին: Անոնց՝ որոնք մատղաշ հոգիներու ու միտքերու ակօսներուն մէջ, սերմեր էին ցաներ ազգային ինքնութեան եւ գիտակցութեան, մարդակերտումի եւ հայակերտումի...: Նմանապէս՝ Հայ Եկեղեցւոյ Գահակալներուն, հայ համայնքի պետական ներկայացուցիչներուն, հոգաբարձուներուն..., որոնք զօրավիզ էին եղած Նարեկի 40-ամեայ կեանքի անսայթաք ու անխափան երթին, եւ յատկապէս՝ Կիպրոսի բարեխնամ պետութեան եւ կառավարութեան, որոնք իրենց նիւթա-բարոյական անվերապահ նեցուկը պարգեւեր էին անոր:



Յայտագիրը շարունակուեցաւ Նարեկի բոյլ մը աշակերտներու եռալեզու արտասանութիւններով, որոնց մէջ յատուկ գնահատանքի է արժանի «Նարեկ» արտասանութիւնը, թէ՛ որպէս մտայղացում, թէ՛ ալ որպէս վերաբժեւորումը Մեծն Նարեկացիի եւ անոր Մատենի ոգիին՝ մատղաշ շուրթերով արտաբերուած...:

Այնուհետեւ, Տեսաերիզի վրայ ցուցադրութիւնը Նարեկի 40-ամեայ կեանքին արթնցուց վաղուց մոռցուած, աւելի ճիշդ անթեղուած, քաղցրաթախիծ յուշեր՝ դէմքեր ու դէպքեր, որոնք իրենց երեւոյթ թէ աներեւոյթ հետքն են թողեր Նարեկի քառասնամեայ լուսաւոր ուղիին վրայ...:



Ապա՝ Հայկական Պարերու եւ խմբերգներու կատարումը առաւել խանդավառեց եւ ջերմացուց սրտերը, մանաւանդ որ անոնց մասնակից եղան նաեւ Նարեկի նախկին շրջանաւարտները....փոխանցելով սերունդներու շարունակականութեան եւ յաջորդականութեան խորին խորհուրդը...:

Վարուժան Արքեպիսկոպոսի Պահպանիչ-աղօթքէն ետք, ներկաները դեռ երկար յամեցան դպրոցի շրջափակին մէջ սարքուած ընդունելութեան սեղաններուն շուրջ, ուրախ զրուցելով եւ պատմելով հին ու նոր դրուագներ...: Ընդունելութեան ընթացքին, Ծնողաց Վարչութիւնը, անակնկալ մը մատուցեց ներկաներուն եւ աշակերտութեան, հրամցնելով 40-ամեակի գեղեցիկ կարկանդակ մը, ոգեւորութիւնը հասցնելով իր բարձրակէտին...:

Յո՛յժ տպաւորիչ, բովանդակալից, հոգեյոյժ ու սրտառուչ Հանդիսութիւն մը՝ արդարեւ, որ երկար պիտի յամենայ վստահաբար բոլորին յիշողութեան մէջ, անգամ մը եւս արժեւորելով ՀԱՅ ԴՊՐՈՅԻՆ Էական, վճռորոշ եւ ապագայակերտ դերակատարութիւնը՝

ազգային-հաւաքական մեր կեանքէն ներս:

ԲԱՐԻ ՈՒ ԱՆԽԱՓԱՆ ԵՐԹ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ ՔԵԶԻ՝, ՍԻՐԵԼԻ ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆ

Երան Գույումճեան

«ԿԻՊՐՈՍԸ ՈՐՊԷՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԱՄՈՒՐՁ»

Այս խօսուն խորագրին տակ կայացաւ վերջերս Կիպրոսի մէջ՝ Խճանկարներու Առաջին Համակիպրական Ցուցահանդէսը, ինչպէս նաեւ՝ Համաշխարհային Խճանկարային Որմագոյներու Ցուցահանդէսը: Այս կարեւոր ցուցահանդէսի ծիրէն ներս, տեղի ունեցաւ նաեւ 13-րդ Համաշխարհային Խճանկարի Համագումարը:



18 Սեպտեմբեր 2012-ին, կ. ե.ժամը 8:00-ին, Աթինոյի Քալլինիկիօ քաղաքապետարանի թանգարանին մէջ, հանդիսաւոր բացումը կատարուեցաւ՝ վերոնշեալ Համակիպրական խճանկարային առաջին եւ Համաշխարհային խճանկարային որմագոյներու Ցուցահանդէսին, որ կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Կիպրոսի Կրթութեան եւ Սշակոյթի Նախարարին:

Կիպրահայ յայտնի արուեստագէտ-նկարչուհի ԱԶՆԻԻ ՓԱՓԱԶԵԱՆ մասնակցեցաւ այս Ցուցահանդէսին՝ խճապատկերային ինքնադիմանկարով մը, որ այնքան գեղեցկօրէն կ'արտայայտէ իր արուեստին բնորոշ

գունային, արտայայտչական եւ այլ առանձնայատկութիւնները: Ան նաեւ իր մասնակցութիւնը բերաւ 13-րդ A.I.M.C. Համաշխարհային Համագումարին: Նշենք որ Ցուցահանդէսը բաց պիտի մնայ մինչեւ 31 Հոկտեմբեր 2012:

Առ ի տեղեկութիւն, աւելցնենք որ Համաշխարհային ժամանակակից խճապատկերի Միութիւնը՝ երկու տարին անգամ մը, հերթականօրէն կը կազմակերպէ Համագումար մը, իր անդամ-երկիրներէն մէկուն մէջ: Առաջին անգամ ըլլալով, Համագումարը այս տարի կայացաւ Կիպրոսի մէջ: Այսպէս, 13-րդ Համաշխարհային Համագումարը տեղի ունեցաւ



Աթիէնայի Քալիսիկիօ քաղաքապետարանի թանգարանին մէջ՝ 28, 29, 30 Սեպտեմբեր 2012-ին:

Համագումարին մասնակցող արուեստագէտներն ու զեկուցաբերները Կիպրոս եկած էին մեծաւ մասամբ Եւրոպական Միութեան երկիրներէն, ինչպէս նաեւ՝ Եգիպտոսէն, Պրագիլէն, Ճաքոնէն, Գանատայէն, Զուիցերիայէն, Ռուսաստանէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եւ Աւստրալիայէն: Համագումարի ընթացքին, անոնց ամենէն ակնաւոր ներկայացուցիչները ներկաներուն ուշադրութեան յանձնեցին այն իրականութիւնը, թէ ժամանակակից խճապատկերը արուեստի ինքնութիւնը ձեռն է: Անոնք յատկապէս շեշտեցին այդ առանձնայատուկ արուեստի դերը՝ ճարտարապետութեան եւ քաղաքային միջավայրին մէջ: Զուգահեռաբար՝ վերլուծական կերպով ներկայացուցին հին, աւանդական եւ բիզանդական խճանկարի զարգացումը մինչեւ մեր օրերը: Ընդգծելու ենք, որ Համագումարը կայացաւ Կիպրոսի Եւրոպական Միութեան Նախագահութեան ստանձնումին առիթով:

Ընդհանուր այս միջոցառման՝ թէ՛ Ցուցահանդէսին, թէ՛ Համագումարին կազմակերպումը կը միտէր գերազանցօրէն աշխարհին ներկայացնելու՝ Կիպրոսի պատմական, քաղաքակրթական եւ մշակութային հարստութիւնը, ինչ որ յոյժ կարեւոր խնդիր է անտարակոյս, մշակութային կամուրջ ստեղծելու համար տարբեր երկիրներու հետ:

Թղթակից

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԻՄԱՅԱՆՔ ԹԷ՝

ԵԱՆՆՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ պարգևատրուած է որպէս Կիպրոսի լաւագոյն դահուկորդը՝ տոնոց մէջ: Լուսանկարին մէջ, Նիկոսիոյ քաղաքապետը՝ Տիար Կոնստանտինոս Եորկատճիս

կը պարգևատրէ ԵԱՆՆՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԸ, մրցանակաբաշխումի յատուկ արարողութեան մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր ամսուան մէջ, 2012-ին: «ԱԶԱՏ ԽՕՍՔ»ը ջերմօրէն կը շնորհաւորէ կիպրահայ Եաննօ Գույումճեանը իր այս պատուաբեր յաջողութեան համար եւ իրեն կը մաղթէ նորանոր յաջողութիւններ:



Խմբագրական

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Հետեւեալ զեկոյցը ներկայացուցաւ մեր կողմէ՝ Հոկտ. 4-6 կայացած, Լրագրողներու Համահայկական 6-րդ Համաժողովին, Աղաւնաձորի մէջ

ՄԱՍՈՒԼԸ ՈՐՊԷՍ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՈԳ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՐԹՈՒՑԻՉ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

Սրտագին ողջոյն՝ Լրագրողներու 6-րդ Համաժողովը կազմակերպող Սփիւռքի Նախարար, պատուարժան Տիկ. Հրանոյշ Յակոբեանին, Պատկան Մարմնի ներկայացուցիչներուն, մասնակիցներուն եւ ներկաներուն: Համաժողով՝ որ կարենոր հարթակ է, կը խորհիմ, ներհայկական բազմաձայն զրոյցով՝ քննարկելու համագային մեր հիմնախնդիրները,



ախտանշելու մեր հաւաքական վերքերն ու ցաւերը, որոնելու եւ բարձրաձայնելու ճշմարտութիւններ, որոնք կրնան լուսաբանել մեզ, թէ ո՞ր ենք այսօր եւ ո՞ր կ'երթանք, որպէս հայութիւն եւ հայոց երկիր՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին: Քանզի՝ ախտանշումն ու ինքնաճանաչումն են, ըստ իս, այն կարենոր նախադրեալները, որոնք կրնան խթանել ազգային նորոգ գիտակցութիւն եւ դիմադրականութիւն,

արդիւնաւետութեամբ դիմագրաւելու համար մեր առջեւ ծառացած հիմնախնդիրներն ու մարտահրաւերները: Իսկ լրագրողը, իմ խորին համոզումով, դէպքերու եւ իրադարձութեանց, փաստերու եւ երեւոյթներու չոր արձանագրողն ըլլալէն շատ աւելի՝ հրապարակախօս է, որ

կոչումն ունի արթնցնելու հանրութիւնը՝ անոր անտարբերութեան, ինքնախաբէութեան եւ պատրանասիրութեան թմբիւրէն, զայն ազատագրելու իր քարացած կարծրատիպերէն եւ զայն մղելու խորունկ ինքնաճանաչման ու սթափումի...:

Իր այս ճիգին մէջ, հրապարակախօսը պիտի որոնէ ու խօսի ճշմարտութիւնը եւ միայն ճշմարտութիւնը..., ինչ որ իրմէ կը պահանջէ՝ թրուածիւնի նման անհրաժեշտ յանդգնութիւն, անաչառ ու կշռադատ խոհականութիւն եւ խղճմտանք...:

Այսօր, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, հարց տալու ենք, թէ արդեօ՞ք մենք կը կարենանք լիարժէք կերպով ՏԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՍԵՐԸ ըլլալ մեր Դատին՝ արտաքին ճակատի վրայ, եթէ չենք կրցած վերակազմակերպել մեր ներքին ճակատը, եթէ չենք կրցած կարգի բերել մեր Տունը, ազգային-հաւաքական մեր կեանքը, չենք կրցած իրարու հետ գործակցելու ճիշդ մեքանիզմներ գտնել...ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՃՆՈՒԹԻՒՆ գոյացնել մեր հիմնահարցերուն շուրջ, ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԻՆ շուրջ...եւ, ըստ այդմ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ մշակել այդ ուղղութեամբ:

Այս գիտակցութեամբ ալ, Լրագրողներու նման Համաժողովները կրնան ծառայել որպէս հարթակ, ներազգային բազմախօսութեամբ՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք,



բազմակողմանիորէն քննարկելու համահայկական մեր հիմնահարցերը, բնորոշելու համազգային մեր տեսլականը, ուր Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը, մեզմէ իւրաքանչիւրը կ'ունենայ իր տեղն ու դերը անոր կենսագործման մէջ: Սա որոշապէս հրամայական խնդիր է, ճգնաժամային մեր ժամանակներուն մանաւանդ, երբ աշխարհաքաղաքական գերիզօր ոյժերը առաւել կը լարուին մեր երկու հանրապետութեանց շուրջ, երբ նոր-օսմանականութիւնը կը զարթնու իր ծաւալողապաշտ քաղաքականութեամբ, երբ առաւել տագնապահար վիճակի մէջ կը յայտնուին հայրենամերձ մեր հայագաղութները, երբ օրէ-օր կ'ահագնանայ Սփիւռքի ձուլման ընթացքը, նոր թափ կը ստանայ Հայաստանի Հանրապետութենէն արտագաղթը...:

Թոյլ տուէք հարցադրումներս ու մտորումներս պայմանականօրէն կեդրոնացնել երեք առանցքներու շուրջ՝ Սփիւռքահայութեան իրավիճակ, Հայաստանի Հանրապետութիւն եւ Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններ:

1/ «ՄՓԻԻՌՔԱՀԱՅՈՒԹԻՒՆ» ըսելով, ես նկատի ունիմ գերազանցօրէն արեւմտահայութեան ժառանգորդ տարագիր հատուածը մեր ժողովուրդին՝ բազմատարր ու բազմազան, որ կ'ապրի աշխարհի չորս ծագերուն սփռուած հայագաղութներուն մէջ իր ազգային կառոյցներով՝ դպրոց, եկեղեցի, ակումբ, մամուլ եւ այլ, սակայն իր ամբողջութեանը մէջ՝ անկազմակերպ ու անտիրական: Արդարեւ, Յեղասպանութենէն շուրջ ահա շուտով 100 տարիներ ետք, կարելի է հարց տալ, թէ արդե՞ք կրցած ենք ստեղծել Սփիւռքի մէջ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ մեր հիմնահարցերուն շուրջ, ունի՞նք համահայկական մտահոգութիւններով առաջնորդուող գիտակից եւ հեղինակաւոր ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ, եւ այդ կարծիքը բարձրաձայնող ԱԶԱՏ ՄԱՍՈՒՆ, որ ըլլայ ՎԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ եւ դառնայ ազդու հակակշիռ, տեսակ մը «Չորրորդ Իշխանութիւն»՝ ազգային կեանքի մէջ էական դերակատարութիւն ստանձնած աշխարհիկ թէ հոգեւոր իշխանութեանց գործունէութեան: Պատասխանը ժխտական է դժբախտաբար, որովհետեւ ազգային կեանքի ղեկավարութիւնը ստանձնած անձանց մեծամասնութեան մօտ՝ տակաւին կը յամենան նեղ-հատուածական, նեղ-խմբակային կամ նեղ-անձնական մտածելակերպն ու գործելակերպը, համահայկական լայնախոհ մտածողութեան եւ գուցէ քաղաքացիական խոր յանձնառութեան պակասը:

Հոս պարտիմ նշել, որ բացառութիւնները միշտ յարգելի են, եւ ներկայիս՝ շնորհիւ համացանցային ընկերային կայքերուն եւ տեղեկատուական արհեստագիտութեան ընձեռած ժամանակակից հնարաւորութիւններուն, հոս-հոն նշմարելի կը դառնան ազատ ու անկախ մամուլի առկայծող նշոյլներ, որոնք կրնան տակաւ ընդարձակուիլ եւ դառնալ յուսալիօրէն լոյսի ճառագայթներ՝ հայ հանրային կարծիքը լուսաբանելու կոչուած...:

Յամենայնդէպս, էական հարցադրումները կը շարունակեն մնալ եւ կը սպասեն բաղձալի լուծումներու: Հայագաղութներուն մէջ, պիտի շարունակենք մատղաշ սերունդը դաստիարակել այնպէս, որ անոր ունեցած հաւատարմութիւնը՝ ակումբի մը, կամ կուսակցութեան մը թէ կազմակերպութեան մը, գերազանցէ այն հաւատարմութիւնը, զոր պարտի ան ունենալ համահայկական տեսլականին, զոր ցարդ չենք կրցած յստակօրէն տարազել, զայն անով սնուցանելու եւ դաստիարակելու համար...: Այլ խօսքով՝ թերացած ենք մեր նոր սերունդին մօտ կազմաւորել համահայկական ինքնութիւն եւ անկէ բխող համահայկական մտածողութիւն եւ գիտակցութիւն: Եւ ասիկա՝ դպրոցներէն ու ընտանիքներէն սկսեալ...:



Հատուածական այս նեղ մտածելակերպին հետ զուգընթաց, ներկայիս համաշխարհայնացման եւ օտարամոլութեան ահեղ հոսանքներուն անձնատուր, օրէցօր կը խամրին ու կ'աղճատուին հայեցի դիմագիծն ու նկարագիրը, կը նահանջէ մեր լեզուն, հայ Բառն ու Բանը...: Օտարը այսօր մեր լեզուին մէջ է, մեր բարոյական-աւանդական արժեհամակարգին մէջ, մեր վարք ու բարքին մէջ...: Մէկ խօսքով՝ մեր ինքնութեան եւ էութեան մէջ: Եւ հարց կը ծագի, թէ արդե՞ք, ի վերջոյ, մենք պիտի վերածուինք, Վազգէն Շուշանեանի դիպուկ բառերով, «անազգ փերեզակներու» անդիմագիծ, ուղեկորոյս եւ ապաքաղաքականացած զանգուածի:

Ա՛լ ժամանակը չէ՞ արդեօք, հաւաքական շահի գիտակցութեամբ, վերակազմակերպուելու քաղաքականօրէն, ձեւաւորելով՝ ընտրովի կայացած ՀԱՄԱՍՓԻԻՔԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՅԶԱԿԱՆ ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ, որ կարենայ ներդաշնակել եւ ուղղորդել մեր ցարուցքի ճիգերը՝ հայապահպանման եւ Հայ Դատի Պահանջատիրութեան ուղղուած: Նման Մարմնի մը գոյառումը էապէս պիտի նպաստէր Սփիւռքի տարագիր հայութեան մօտ ՏԱՐԱԳԻՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ գիտակցութեան, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀՈՒԹԵԱՆ մը ձեւաւորումին, նոր որակ ու մակարդակ պիտի տար մեր ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ պայքարին, Հայոց Ցեղասպանութեան բարոյական ճանաչումի ա՛լ քարացած կարծրատիպէն անցնելով՝ էապէս հողային հատուցման պայքարի պատրաստութեան, որովհետեւ մեր բուն ՊԱՀԱՆՋԱՏՐ՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումներէն անդին ու գերիվեր, թուրքին կողմէ բռնախլուած՝ հայուն հայրենական հողերու վերադարձն է իր տիրոջ: Ա՛լ յստակացնելու չէ՞նք, որ հողի՛ն համար էր որ գործադրուեցաւ Ցեղասպանութիւնը - ա՛յն հողին, որ կը կոչուէր Արեւմտահայաստան եւ ուր հազարամեակներ շարունակ կ'ապրէր արեւմտահայութիւնը՝ իր լեզուով, մշակոյթով, աւանդութիւններով ու արժէքներով, տունուտեղերով, կալուածներով ու հաստատութիւններով...համախումբ ազգային կեանքի բաղադրիչ բոլոր տարրերով: Եւ վերջապէս, նման ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԶԱԿԱՆ ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ մը գոյառումը՝ ճակատագրականօրէն պիտի նպաստէր ՍՓԻԻՌՔԻ ՀԶՕՐԱՑՄԱՆ, ինչ որ այնքան կարեւոր է Հայաստանի ալ հզօրացման համար եւ՝ փոխադարձաբար, որովհետեւ, ըստ իս, միայն լաւապէս կազմակերպուած, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԶԱԿԱՆ, ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ ՍԸ ներքոյ խտացած սփիւռքը կրնայ հայօրէն տեսնելու յոյսը փայփայել եւ Արեւմտահայաստանի ազատագրութեան Դատ հետապնդել արդիւնաւետ կերպով՝ մէկտեղելով իր բոլոր լծակներն ու հնարաւորութիւնները:

2/ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ- Հայ մամուլին բուն սեւեռակէտը միշտ ալ պիտի ըլլայ Հայաստան աշխարհը, քանզի հայոց պատմութիւնը կը կերտուի Արարատի փեշերուն՝ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ վրայ....հայագաղութները, սփռուած աշխարհի չորս ծագերուն, չեն կրնար երբեք դառնալ հող հայրենի.....: Ահա թէ ինչու Հայրենի Հողը մեր սրբօրին սրբոցն է.....: Անոր վրայ կայացած՝ ազգային անկախ պետականութեան տէր ըլլալը ամէն հայու բաղձանքն է որոշապէս, որովհետեւ ազգային անկախ պետականութիւնն է որ կը հնարաւորէ ազգի բարձրագոյն մակարդակի ինքնակազմակերպումը, կ'երաշխաւորէ անոր յարատեւ երթը պատմութեան մէջ եւ կը դառնայ ամէնէն ամուր կռուանը ազգի գերագոյն շահերու, իտեալներու եւ իրաւունքներու հետապնդումին: Ազգային պետականութիւնը որոշապէս պէտք է որ խարսխուած ըլլայ ազգային-մշակութային-բարոյական արժէքներու արժեհամակարգին վրայ, համահունչ ըլլայ հանրութեան ցաւերուն ու իղձերուն, տազնապներուն ու երազներուն: Այլապէս, ան կը դառնայ վարչախումբի մը շահերուն միայն ծառայող վարչակարգ եւ կ'օտարուի հասարակութենէն:



Եւ ճշմարիտը: Հայաստանի ներկայ Հանրապետութեան ստեղծումի առաջին իսկ օրերէն, մեր երկրին մէջ ներխուժած վայրագ դրամատիքութիւնը՝ իր անմարդկային դիմագիծով, ստեղծեց այնպիսի համակարգ մը, ուր շահամոլութիւնն ու ընչաքաղցութիւնը, բռնութիւնն ու ահաբեկումը, մշակութային-բարոյական խորթ ու խաբեպատիր ոչ-արժէքները խաթարեցին հայ աւանդական, բարոյական-հոգեւոր արժէքներու համակարգը: Եւ պէտք է հարց տալ որպէս մամուլ: Այսօր ունի՞նք ժողովրդանուէր, օրէնքի գերակայութեամբ ապրող, մարդկային իրաւունքները յարգող, ազատ ու արդար հասարակարգ, որ խարսխուած ըլլայ ընկերային ու տնտեսական արդարութեան եւ արդարադատութեան վրայ: Եւ պիտի հարց չտա՞նք, թէ այդ ինչպէ՞ս է, որ մինչ մեր երկիրը կը վիստայ՝ շռայլ ու շուայտ կեանքով ապրող իշխանական վերնախաւի մը առանձնատուններով, ճաշարաններով, վաճառատուններով, բախտախաղի սրահներով..., միւս կողմէ՝ բնակչութեան գերակշիռ մասը կ'ապրի թշուառ կեանքով, օրուան հացին հետամուտ: Եւ, ամէնէն ահաւորն ու մտահոգիչը գուցէ՝ շատ-շատեր, ահագնացող թիւերով, կը բռնեն արտագաղթի կորստաբեր ճամբան, տակաւ հայաթափելով մեր փոքրիկ Հանրապետութիւնը: Զուգահեռաբար, հարց պիտի չտա՞նք, թէ ինչպէ՞ս եղաւ, որ հայոց լեզուն, հայ տոհմիկ մշակոյթը, գիրն ու գրականութիւնը, որոնք հայութեան ու հայկականութեան ինքնութիւնն իսկ են, դարձած են աղքատ ազգականի կարգավիճակ ունեցող արժէքներ, մինչ ամերիկեան գռեհիկ ու գռեհկացնող մշակոյթը, բարքերն ու սովորոյթները կը քաջալերուին քիչ մը ամէն տեղ, ներխուժելով մեր լեզուին մէջ, մեր վարք ու բարքին ու ապրելակերպին մէջ...:

Յանձնառու մամուլին էական կոչումը չէ՞ արդեօք՝ պաշտպանել ազգային անկախ պետականութիւնը, եւ յանուն այդ պետականութեան պաշտպանութեան՝ վերահսկել երկրին մէջ տիրող ազգային-մշակութային-բարոյական-իրաւաքաղաքական համակարգը, քննութեան տակ պահել իշխող կառավարութիւնը..., արթուն ու զգաստ պահել քաղաքացիական հասարակութիւնը, որուն հաշուետու ըլլալու է՝ անոր քուէով իշխանութեան հասած կառավարութիւնը: Սա չէ՞ վերջապէս պարտադիր օրէնքը ժողովրդավարութեան: Ահա թէ ինչու մամուլը պարտի նաեւ քաջալերել քաղաքացիական այն բոլոր շարժումներն ու նախաձեռնութիւնները, որոնք միտումնաւոր են պաշտպանելու քաղաքացիին ունակոյթնութեան իրաւունքներն ու արժանապատուութիւնը, հայրենի բնաշխարհի բնութիւնն ու հարստութիւնները, պատմա-մշակութային ժառանգութիւնը..., որոնք կը պատկանին բոլոր սերունդներուն՝ ներկայ եւ գալիք, եւ ոչ թէ՝ խումբ մը մենաշնորհեալ մարդկանց:

3/ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌՔ ՓՈԽՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ- Ինչպէս ըսինք, Հայաստանը Սփիւռքով է զօրաւոր եւ՝ փոխադարձաբար: Իսկ Սփիւռքը հսկայական ներուժ ունի, ոչ միայն նիւթական-տնտեսական առումով, այլեւ՝ փորձառութեանց, նոր գաղափարներու, մտքի եւ գիտելիքի, կապերու եւ ցանցերու առումով: Սփիւռքը միշտ ալ հայրենիքի կողքին է եղած, անոր զօրավիճ ու զօրակից: Վկայ՝ այն նկատառելի օգնութիւնը՝ դրամական, մարդկային, բարոյա-հոգեբանական, գոր ան ցուցաբերեր է Հայաստանի եւ Արցախի գոյգ հանրապետութիւններու զարգացման համար: Բայց, այսօր, հարց պիտի չտա՞նք, որպէս մամուլ ու հրապարակագիր, թէ ինչո՞ւ տակաւ կը նուազի Սփիւռքի խանդավառութիւնը օգնելու Մայր հայրենիքին: Վստահութեան պակասը, ՀՀ-էն ներս տիրող փտախտը, կամայականութիւններն ու օրինազանցութիւնները: Ըստ իս, կայ նաեւ աւելին: Արդեօք Սփիւռքը պէտք է դիտուի ՀՀ իշխանութեանց կողմէ լոկ որպէս տնտեսական օգնութեան աղբիւր, ժողովրդային լեզուով, որպէս կրթան կով: Արդեօք Սփիւռքը այլ բան չունի տալիք



յանուն մեր զոյգ հանրապետութեանց զարգացման, ինչպէս նշեցի աւելի վեր: Այլ կարելոր հարցում մըն ալ հետեւեալն է. Սփիւռքը պէտք չէ՞ ըսելիք ունենայ այն բոլոր հիմնախնդիրներուն շուրջ, որոնք կ'առնչուին Հայաստանի եւ հայութեան լինելութեան եւ ճակատագրին հետ: Զուգահեռաբար, հարց տալու չէ՞նք, թէ Սփիւռքը ի՞նչ ի՞նչ կ'ակնկալէ Մայր հայրենիքէն..., թէ ի՞նչ ձեռով հայրենիքը կրնայ նպաստել սփիւռքին, անոր հայապահպանման ճիգերուն, անոր ամենօրեայ մտահոգութիւններն ու տագնապները փարատելու ուղղութեամբ: Օրինակ, Հայաստանը ունի՞ որեւէ ծրագիր ՏԷՐ ըլլալու հայագաղութներուն, երբ անոնցմէ մին վտանգուած ըլլայ ֆիզիքապէս, ինչպէս եղաւ պարագան սուրիահայ գաղութին:

Հայաստան-Սփիւռք ճշմարիտ միասնութիւնը կրնայ կեանքի կոչուիլ, ըստ իս, եթէ մենք մշակենք համահայկական ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ, սկսելով թերեւս ամենէն տարրականէն՝ հայեցի կրթութեան համահայկական տարածքի ձեւաւորումէն: Տարածք՝ որ ըլլայ թէ՛ արեւելահայերէն, թէ՛ արեւմտահայերէն, եւ ընդգրկէ հայաշխարհի ազգային արժէքները, ինչ որ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԼԱԿԱՆԻ դաստիարակութեան հիմքը կրնայ ըլլալ՝ հայ նոր սերունդին մօտ: Համահայկական զարգացման այդ ծրագիրը պիտի ընդգրկէ շատ մը ոլորտներ, ներառեալ Հայ Դատի Պահանջատիրութիւնը...մինչեւ Հայաստանի եւ հայութեան ազգային անվտանգութեան հիմնադրոյթները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այսօր, ամէն ժամանակէ աւելի, մամուլը պիտի կարենայ վերադաստիարակել հանրութիւնը համահայկական շահերու գիտակցութեամբ, պետական մտածողութեամբ, համահայկական տեսլականով՝ նեղ-անձնական, հատուածական շահերու գաւառամտութենէն անցնելով համահայկական շահերու ըմբռնումին. Զգացական եւ տեղայնական հայրենասիրութենէն անցնելով վերլուծական դատողութեան եւ լայնահորիզոն ծրագրաւորուած աշխատանքի գիտակցութեան. Օտարամոլութեան եւ օտարը գերադասելու ստրկամիտ վարքագիծէն անցնելով ազգային-մշակութային-բարոյական իրա՛ւ արժէքներու վերադարձին եւ մեր հաւաքական ոյժերուն ապահինելու արիութեան. Դաւանելով վերջապէս Հայաստան-Արցախ-Սփիւռք ԵՌԱՄԻԱՄԱՆՈՒԹԻՒՆԸ, որպէս համազգային անվտանգութեան եւ զարգացման համակարգ, հիմնուած փոխ-անկեղծութեան, փոխադարձ յարգանքի եւ փոխադարձ վստահութեան վրայ: Խորապէս համոզուած եմ, որ ներհայկական այս եռամիասնական ամրութեամբ է պայմանաւորուած մեր ներքին, թէ արտաքին հիմնախնդիրներու կարգաւորումը, որոնց մէջ է նաեւ Հայ Դատի Պահանջատիրութիւնը, ուր իւրաքանչիւր միաւոր՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք, պիտի ունենայ իր ուրոյն պարտականութիւնը, դերերու իմաստուն եւ ծրագրաւորուած բաշխումով...:

Եզրափակելով խօսքս, պիտի ուզէի մէջբերել Գարեգին Նժդեհի խորիմաստ խօսքերը ուղղուած հայ մտաւորականութեան. «Հիմա (մեզի) պէտք է վերադաստիարակիչ հրապարակախօսութիւն:

Հրապարակախօսութիւն, որ անսխալ կերպով ախտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի..., որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրա հոգեւոր սպառազինումի ահագանգը...մինչեւ որ հայութիւնը՝ խրոխտաբար կանգնած իր բարձրաւանդակին վրայ ապացուցէ աշխարհին, թէ ինքը արի է- տէրը իր հայրենիքին եւ ճակատագրին»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

Խնդրողի դերից մենք պիտի դառնանք պահանջողներ

«Առաջին լրատուական»-ի զրուցակիցն է «Մոդուս Վիվենդի» կեդրոնի ղեկավար Արա Պապեանը:



- Պարոն Պապեան, Ֆրանսիայի արտգործնախարար Լորան Ֆաբիուսն օրերս Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դաւութօղլուի հետ Փարիզում կայացած հանդիպման ժամանակ յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը «յարութիւն չի առնի»: Ինչպէ՞ս էք գնահատում այս յայտարարութիւնը:

- Իմ կարծիքով՝ դա աւելի շատ խոստում է, որովհետև որեւէ մէկն այսօր չի կարող ասել՝ օրինագիծը «կը վերակենդանանայ», թե՞ ոչ: Ամենայն հաւանականութեամբ հարցը նորից կը քննարկուի: Պարզապէս այսօր ֆրանսիացիները հարցեր ունեն լուծելու Թուրքիայի հետ, յատկապէս տնտեսական և ռազմական պայմանագրերի մասով և նման խոստումներ են տալիս: Բայց դա միայն կախուած չէ գործադիր իշխանութիւնից: Կայ օրէնսդիր իշխանութիւն, որի վրայ հայերի ազդեցութիւնը շատ աւելի մեծ է: Ես կարծում եմ՝ առաջիկայում հարցը նորից կը քննարկուի:

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն պէտք է լինի այս դեպքում հայերի պահուածքը:

- Ես ուզում եմ, որ մենք մի փոքր այլ տեսնակիւնից հարցին մօտենանք՝ արդեօք մեզ այսօր անհրաժեշտ է նման բնոյթի օրէնքների ընդունումը, թե՞ ոչ: Մեր նպատակն է ստանալ որոշակի հատուցումներ: Հիմա, թէ այդ հատուցումներն ինչպիսիւն կը լինեն՝ դա աւելի բարդ հարց է: Բայց պէտք է ստանանք հատուցումներ: Կեանքում նպատակը միայն այն չէ, որ յանցագործն ընդունի, որ յանցանք է կատարել, այլ այն է, որ յանցագործը պատժուի, և ամենակարելորդ՝ տուժողը որոշակի հատուցումներ ստանայ: Մենք աւելի շատ շեշտադրումը պիտի փոխենք՝ ճանաչելուց գնանք դէպի հատուցումներ: Եւ այստեղ խնդրողի դերից մենք պիտի դառնանք պահանջողներ: Պէտք է նաեւ պահանջենք Ֆրանսիայից: Ֆրանսիան մեզ լաւութիւն չի անում՝ ճանաչելով Յեղասպանութիւնը: Ֆրանսիան ունի միջազգային պարտաւորութիւններ հայերի և Հայաստանի նկատմամբ, այդ թում՝ նաեւ Յեղասպանութեան հարցով: Մենք յաճախ ենք համեմատութիւններ անում հրեական Հոլոքոսթի հետ և նմանութիւններ գտնում Հայոց ցեղասպանութեան ու Հոլոքոսթի միջեւ: Բնականաբար, բոլոր ցեղասպանութիւններն ունեն նմանութիւններ, բայց կայ էական տարբերութիւն հայկական Յեղասպանութեան և Հոլոքոսթի միջեւ: Հայերը Օսմանեան կայսրութեան մէջ ապրելով՝ արդէն 1878 թուականի Պեդլինի կոնգրեսից յետոյ գտնուում էին միջազգային պաշտպանութեան ներքոյ: Այդ թում՝ նաեւ Ֆրանսիայի, որը հետագայում վերահաստատուեց 1914 թուականին: Ֆրանսիան պարտաւորուել էր հայերին պաշտպանել, բայց չի կատարել իր պարտականութիւնը: Եւ Ֆրանսիայի պարտականութիւնը



չկատարելու պատճառով հայերը տուժել են: Այսինքն՝ ոչ միայն Թուրքիայի պատասխանատուութեան հարցն է, այլ նաեւ Ֆրանսիայի պատասխանատուութեան հարցը կայ այստեղ: Ֆրանսիան մեզ լաւութիւն չի անում՝ ճանաչելով Ցեղասպանութիւնը, այլ նրա գործողութիւնների հետեւանքով մենք մարդկային և նիւթական տասնեակ և հարիւրաւոր միլիարդ տոլարների վնաս ենք կրել: Ֆրանսիան պիտի դա հատուցի կամ պարտաւորեցնի Թուրքիային հատուցել: Այն է մեր սխալը, որ մենք խնդրում ենք Ֆրանսիային, որպէսզի նա ինչ-որ բարեգործի տեսքով ասի՝ վայ, եղել է Ցեղասպանութիւն: Ֆրանսիայի պարտաւորութիւնների հարցը կայ յատկապէս Կիլիկիայի խնդրում: Ֆրանսիան ստանձնել էր Կիլիկիայի մանդատը, պարտաւորուել էր Կիլիկիայում պաշտպանել հայերին:

Խօսքը վերաբերում է պատերազմից յետոյ ստեղծուած վիճակին, երբ Սան Ռեմոյի վեհաժողովը 1920 թուականի Ապրիլին որոշեց, որ Կիլիկիան պէտք է ֆրանսիական ենթամանդատային տարածք լինի: Բայց Ֆրանսիան չկատարեց իր պարտաւորութիւնները: Ես կարծում եմ, որ մենք հիմա աւելի շատ պիտի խօսենք և գրենք Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի պարտաւորութիւնների մասին: Այդ բոլոր երկրները պարտաւորութիւններ են ստանձնել, այդ բոլոր երկրները ընդունել են իրենց դերակատարութիւնը հայերին պաշտպանելու հարցում: Ես մի կենցաղային օրինակ բերեմ: Կայ յանցագործ, որը յարձակուել է ինչ-որ ընտանիքի վրայ, սպանել է ընտանիքի որոշ անդամներին և ունեցուածքն էլ գողացել է: Վստահաբար յանցագործը մեղաւոր է, բայց կայ անվտանգութեան ծառայութիւն, որը ստորագրել է պայմանագիր^ա պարտաւորուելով պաշտպանել այդ ընտանիքին, բայց չի կատարել իր պարտականութիւնը: Արդեօք այդ ծառայութիւնը մեղաւոր չէ՞, իհարկէ մեղաւոր է: Նոյնը վերաբերում է Ֆրանսիային: Այսօր և Հայաստանը, և Ֆրանսիայի հայ համայնքը պիտի հարցը բարձրացնեն: Մենք ինչո՞ւ ենք մեզ լաւ զգում, երբ մի քանի տասնեակ միլիոն տոլարի վարկ են տալիս մեզ: Բայց հաշուի չենք առնում, որ իրենց պատճառով մենք մի քանի տասնեակ միլիարդ տոլարի վնասներ ենք կրել: Թող իրենք հատուցեն:

- Այսինքն՝ եկել է ժամանակը, որը հայերը պահանջատէր դառնան, բայց մենք շարունակում ենք խնդրողի դերո՞ւմ մնալ: Չէ՞ք կարծում, որ Հայաստանն անձամբ Թուրքիայից պէտք է փոխհատուցում պահանջի՝ առանց երրորդ երկրներին խառնելով այս հարցին:

- Իսկապէս, հարցի շահարկում է գնում: Վստահաբար Ֆրանսիան մի քանի տարի յետոյ հետ է կանգնելու Թուրքիային տուած խոստումներից և անելու է այն, ինչ այդ պահին իրեն յարմար է: Բայց այստեղ կարեւորագոյն խնդիրը հետեւեալն է՝ մենք Ցեղասպանութեան ճանաչումը դարձրել ենք ինքնանպատակ: Կարծես թէ մեզ համար Ցեղասպանութեան ճանաչումն ամենամեծ նպատակն է, այնինչ դա պարզապէս միջոց է՝ հատուցումներ ստանալու համար: Հիմա, եթէ կան հատուցում ստանալու այլ ճանապարհներ, մենք պէտք է գնանք այդ ճանապարհներով: Այո՛, ճիշտ էք, Հայաստանը, իհարկէ միջազգային հանրութեան օգնութեամբ, պիտի կոնկրետ խնդիրներ դնի: Օրինակ՝ մի քանի օր առաջ Դաւութօղլուն նորից վերահաստատեց թուրքական այն տեսակէտը, թէ հայերը, իրենց բառերով ասած, «պիտի դադարեցնեն Ղարաբաղի օկուպացիան և զօրքերը դուրս բերեն այնտեղից»: Պատասխանէք, որ՝ եղբայր, դա ասում է այն պետութիւնը՝ Թուրքիան, որն օկուպացրել է Հայաստանի Հանրապետութեան տարածքը, տիրացել Հայաստանի տարածքի 130 հազար քառակուսի կիլոմետր տարածքին: Կայ միջազգային փաստաթուղթ,

դա իրաւական վճիռն է, որով ամրագրուած է, որ Հայաստանի տարածքի մի մասը օկուպացուել է: Եւ այդ երկիրը դեռեւս համարձակուում է խօսել երրորդ երկրի, այսպէս կոչուած, օկուպացիայի մասին, ինչը իրականութեանը չի համապատասխանում: Ի տարբերութիւն Հայաստանի, Ատրպէյճանը չունի որեւէ միջազգային փաստաթուղթ, որով երբեւէ Ղարաբաղը՝ լինի լեռնային կամ դաշտային, Ատրպէյճանի մաս հանդիսացած լինի: Հետեւաբար, եւ ընդհանրապէս կարծում եմ, որ մեր քաղաքականութիւնը, որը մենք 90-ական թուականներին վարել ենք, այդ զիջողական դիրքորոշումը բերեց նրան, որ այսօր արդէն Թուրքիան լկտիաբար սկսել է մեզ մեղադրել: Եթէ իրենք 90-ականների սկզբին դեռեւս մեղքի զգացում ունէին և բավարարում էին միայն նրանով, որ հայերն իրենց նկատմամբ պահանջներ չունեն, ապա այսօր, յատկապէս այդ տխրահռչակ արձանագրութիւններն ստորագրելուց յետոյ, իրենք արդէն լրիւ ներքաշուեցին հայ-ատրպէյճանական հակամարտութեան մէջ և եկել մեզ դաս են տալիս: Եւ կարծում եմ, որ մենք պետք է հակադարձենք և պետք է հակադարձենք իրաւական փաստարկներով:

Պարոնուհի Քերոլայն Քոքս. «Առաւելութիւն եմ համարում Ինձ Համար, Որ Հայ Ժողովրդի Հետ եմ Եղել»

Հարցազրոյցը՝ ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ-Ի

- Պատմութեան ընթացքում շատ թշնամիներ է ունեցել մեր ժողովուրդը: Սակայն քիչ չէին բարեկամները նաեւ, որոնցից մէկն էլ՝ անձամբ Դուք: Ինչպէ՞ս կարող էիք բնութագրել Ձեր զգացմունքները հայ ազգի նկատմամբ: Ի՞նչ է Ձեզ համար նշանակում Հայաստանը, եւ ինչպէ՞ս պատահեց, որ Դուք պատասխանատուութեան պէս մի բան զգացիք հայութեան հանդէպ՝ կամենալով ինչ-որ կերպ օգտակար լինել մեզ:



- Առաւելութիւն եմ համարում ինձ համար, որ հայ ժողովրդի հետ եմ եղել կարեւոր այն ժամանակահատուածում, երբ դուք պաշտպանում էիք ձեր պատմական Արցախը: Պատերազմի ընթացքում եւ բազում անգամներ եմ ձեր ժողովուրդին այցելել՝ մարդկանց հասցնելով հումանիտար օգնութիւն, եւ ինքս եմ ականատես եղել այն ամէնին, ինչի մասին յետոյ հարկ եմ համարել խօսել բարձրաձայն: Վերոյիշեալ այցելութիւնների ընթացքում էլ զգացել եմ միշտ, թէ ինչպիսի ոգեշնչման առիթ է հանդիսացել անձնապէս ինձ համար ձեր ժողովրդի արժանապատուութեան զգացողութիւնը, ձեր ազգի զաւակների

կողմից ցուցաբերուող խիզախութիւնը, հիւրասիրութեան դրսեւորման վառ ու հրաշք օրինակները, եւ, այո, առաւելութիւն եմ համարում, որ այդ օրերին շատ ու շատ հերոս-հերոսուհիների հետ եմ հանդիպել ու շփուել: Աշխատանքիս մէջ առաջնային պարտականութիւնս եմ համարում օգնութիւնն այն մարդկանց, ովքեր ենթարկուում են հետապնդման ու տարբեր կարգի ճնշումների: Այդ իմաստով ոչ միայն Ղարաբաղի հայերն են ուշադրութեանս կենտրոնում յայտնուել, այլեւ Բիրմայի, Սուդանի, Հիւսիսային Նիգերիայի, Հիւսիսային Ուգանդայի եւ այլ երկրների բնիկ ժողովուրդները:



- Մեր նորագոյն պատմութեան էջերում Ձեր անունն իր ուրոյն տեղն ունի եւ Ղարաբաղի հետ է կապուած սերտօրէն՝ հայկական մի վայր, որ յայտնի մի տեղ է զբաղվեցնում Ձեր կենսագրութեան էջերում: Ինչպէ՞ս կարելի է բացատրել այն երեւոյթը, որ մէկ անգամ Արցախին ծանօթանալուց յետոյ, Ձեր հետաքրքրութիւնը նրանով շարունակական դարձաւ այնուհետ: Ինչպէ՞ս էք Դուք, Լեւի Քոքս, Լեւոնային Ղարաբաղը ներկայացնում Ձեր երկրում եւ այլուր: Որո՞նք են, աւելի լայն իմաստով, մինչ այժմ Արցախից ստացուած Ձեր տպաւորութիւնները:

- Ճնշումներ իրագործող վարչակարգերի գոհերին օգնութեան եւ պաշտպանութեան իմ պարտականութիւնները ի կատար ածելու առաջադրանքով եւ 70 անգամ արդէն Արցախ եմ այցելել: Յատկապէս վերջին տարիներին այն արդիւնքներով եմ տպաւորուած խորապէս, որոնք ձեր ժողովուրդը ձեռք է բերել, վերակառուցելով քարուքանդ եղած իր երկիրը եւ մարդկային քանդուած ճակատագրերը: Դրա հոյակապ վկայութիւններից մէկը Վարդան Թադէոսեանի կողմից ծաւալուած հրաշալի գործունէութիւնն է, ում մասնագիտական մօտեցման շնորհիւ հիմնադրուեց Ստեփանակերտի Վերականգնողական Կենտրոնը: Դա այնպիսի մի նուիրուածութեամբ է արուել, որ միջազգային մակարդակով հիմա որպէս "առաջատար փորձի կենտրոն" է յայտնի: Ամէն անգամ երբ Արցախ եմ այցելում, ինձ մշտապէս հիացնում է ձեր ժողովուրդի յամառութիւնն ու հնարամտութիւնը, ինչպէս նաեւ այն ոճը, որով մարդիկ այդտեղ կարողանում են պահպանել ու պաշտպանել իրենց ոգին ու տեսակը. Արցախն այսօր ոչ միայն մոխրից յարութիւն առած փիւնիկի է նման, այլեւ մի հրաշքի, երբ փլատակների մոխրից մարդիկ կարողանում են գեղեցկութիւններ վեր հանել:

- Այսօր էլ դեռ աշխարհի ամենատարբեր վայրերում կրկնում է հրեշաւոր այն երեւոյթը, որ Ռաֆաէլ Լեւկինը ց ե դ ա ս պ ա ն ու թ ի լ ն է անուանել: Այդ երեւոյթի շարունակականութեան հիմնական պատճառն արդեօք այն չէ՞, որ համայն մարդկութիւնը մինչ օրս չի ընդունել հայերի դէմ իրագործուած ոճրագործութիւնը: Եւ որո՞նք են, ըստ Ձեզ, Մեծ Եղեռնի համընդհանուր ճանաչումանն արգելող հանգամանքները:

- Հայերի ցեղասպանութիւն. դուք տեղեակ էք երեւի, որ այս թեմայի շուրջ եւ շատ եմ խօսել եւ հնարավոր ամէն քայլի դիմել, որպէսզի հարցը համաշխարհային ճանաչում ստանայ: Աշխատել եմ այն ժողովուրդների շրջանում, որոնք կրել են բռնութեան հետեւանքները եւ այդ ընթացքում եւ, ցաւօք, շատ այլ իրավիճակների հետ եմ հանդիպել, որոնք կարող ենք "ցեղասպանութեան փորձեր" համարել: Այդպիսին են, օրինակ, Բիրմայի էթնիկ խմբերի դէմ իրականացուած դաժան ռազմական յարձակումները, կամ խտրականութիւնները, որոնց առաջացման պատճառն էր հանդիսացել Հիւսիսային ու Հարաւային Սուդանի միջեւ տեղի ունեցած պատերազմը, ինչպէս նաեւ՝ մեկուսացուած տարածքներում արձանագրուած փաստերը (Նուբայի Սարեր, Հարաւային Կապոյտ Նեղոս, Աբիէյ, որը հիմա կոչւում է Դարֆուր): Առաջին պատերազմի ժամանակ երկու միլիոն մարդ գոհուեց, եւ չորս միլիոնն էլ տեղահանուեց: Այդ պատերազմի ակնյայտ նպատակները աֆրիկեան ժողովուրդների արաբականացումն ու որպէս հետեւանք՝ մահմեդականացման տարածումն էր այն շրջաններում, որտեղ մարդիկ չէին յարում այս կրօնին: Ես չեմ կարծում, որ հայոց ցեղասպանութեան ճանաչման ձախողումը ինչ-որ կապ ունի այդ պատերազմի հետ, բայց ընդունում եմ, այնուամենայնիւ, որ ցանկացած ցեղասպանութեան ճանաչման ձախողումը կարող է ոգեշնչել նրանց, ովքեր հաւատում են, որ իրենք կարող են իրագործել յանցանքն ու



անպատիժ մնալ: Ես հաւատում եմ նաեւ, որ կան շատ խոչընդոտներ, որոնք խանգարում են իսկապէս հայկական ցեղասպանութեան ճանաչմանը պետութիւնների եւ կազմակերպութիւնների կողմից, նրանք հաւանաբար, խուսափում են նեղացնել Թուրքիային, կամ վախենում են իրենց առեւտրային եւ ռազմավարական շահերը վտանգի տակ դնել:

- Դուք ազնուական էք՝ պարոն-ուհի: Իսկ ի՞նչ է պարտադրում այդ տիտղոսը: Ինչո՞ւ է ազնուական իր կեանքում... ազնուականը:

- Ես ազնուական տոհմից չեմ եւ ոչ էլ ազնուական ընտանիքում եմ ծնուել. Լորդերի Պալատի անդամ եմ նշանակուել եւ այդպէս ստացել բարոն-ուհու տիտղոսը: Կարծում եմ, որ պատուաբեր է, ինչպէս նաեւ՝ պարտադրող բրիտանական խորհրդարանի պալատներից մէկի անդամ լինելը: Ես այդ առաւելութիւնը փորձել եմ օգտագործել "ձայնագործների ձայնը" լինելու նպատակով:

- Միալուած չեմ լինի, եթէ ասեմ, որ ընձեռնուած բոլոր հնարաւորութիւնների պայմաններում էլ շատերն են թերեւս իրենք իրենց շարունակում անպաշտպան զգալ: Գուցէ կիսուէի՞ք Ձեր փորձով. ո՞րն է դէպի առաջ տանող ոյժը: Անձամբ Դուք ո՞ր աղբիւրից էք Ձեր ուժերը ստանում կամ վերականգնում:

- Ես քրիստոնէայ եմ, եւ իբրեւ այդպիսին պարտաւորուած եմ զգում ինձ յիշել աստուածաշնչեան այն պատուիրանը, որը պահանջում է ինձանից խօսել զրկուածների համար, օգնել հիւանդներին, հոգ տանել, որպէսզի մերկը հագուստ ստանայ, իսկ անօթին՝ կերակուր:

- Եթէ իմ տեղը Ձեզ հետ ոեւէ լրագրողուհի հարցազրոյց ունենար, նա անկասկած կ'ուզենար իմանալ. Յատկապէս ի՞նչը պետք է հաշուի առնի իր համար քաղաքական կամ հասարակական գործունէութեան դաշտն ընտրած ոեւէ կին, եթէ նա իրօք յաջողութեան հասնել է ուզում:

- Քանի որ քաղաքական կեանքի թեման շօշափեցիք, ապա կ'ասեմ, որ իմ համոզմամբ, առանձնակի ոչ մի տարբերութիւն չկայ տղամարդկանց եւ կանանց միջեւ: Երկուսի պարտականութիւնն էլ քաղաքականութիւնը՝ եթէ դա է նրանց ընտրութիւնը, որպէս իրենց ծառայութեան դաշտ ընդունելն ու օգտագործելն է:

- Եւ որպէս նախորդ հարցի շարունակութիւն. որեւէ նպատակի հասնելուց յետոյ, երեւի թէ բոլորս ենք անբաւարարութեան պէս մի բան զգում, կամ նոյնիսկ, հիաթափութիւն վերապրում: Ձեզ մօտ էլ է՞ պատահում:

- Ինչպէս ասացի արդէն, իմ գործունէութեան անմիջական նպատակը տարբեր կարգի ճնշումների տակ ապրող եւ հետապնդման տառապանքները կրող մարդկանց օգնութեան հասնելն է, իսկ նման մի գործունէութիւն, դժբախտաբար, նպատակակէտի վերջ պարգապէս չունի: Այնպէս որ անխուսափելի է ձեր կողմից նշուած այդ անբաւարարութիւնը, մանաւանդ, երբ զգում ես, որ կարիքի մէջ գտնուող մարդկանց համար չես հասցրել աւելին անել:



- Ասում է, որ համակարգիչը փոխեց մարդու կենցաղը, նրա սովորություններն ու առ հասարակ կեանքը: Ձեր դեպքում որեւէ բան փոխե՞լ է իրօք: Եթէ այո, ապա ի՞նչը:

- Ես համարում եմ, որ ծայրայեղ արժեքաւոր մի բան է համակարգիչը. խնայում է մարդու ժամանակը գրելու եւ հաղորդակցուելու ընթացքում:

- Վերջում ի՞նչ կը ցանկանայիք աւելացնել:

- Ես յուսով եմ, որ կը շարունակեմ օգտագործել ամէն մի հնարաւորութիւն, որպէսզի կարողանամ գործել նրանց համար, ովքեր պայքարում են տարբեր բնոյթի բռնութիւնների ու հետապնդումների դէմ եւ որոնց վիճակը լրատուութեան միջազգային գործակալութիւնների կողմից մեծամասամբ արհամարում է (տեղեկութիւնները դրա մասին դուք կը գտնէք, այցելելով www.hart-uk.org կայքէջը): Յոյս ունեմ, որ ուժերիս ներածին չափով շարունակելու եմ Հայաստանի եւ Արցախի ժողովրդի արդարադատութեան ու ազատութեան համար բարենպաստ պայմաններ ստեղծելու փորձը: Կը շարունակեմ պայքարս Հայոց Ցեղասպանութեան եւ ներկայումս աշխարհի ցանկացած այլ վայրում կատարուող համանման յանցանքների ճանաչման ու դատապարտման համար:

Յօդուածներ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒ

Աւելի քան երկու շաբաթ է անցեր լրագրողներու 6-րդ Համաժողովի օրերէն, սակայն մտքիս մէջ կը յամենան եւ տակաւ կը բիրեղանան տպաւորութիւններ, դիտարկումներ եւ հարցադրումներ....միտք-ապրումներ ու պատկերներ, որոնք կը ստիպեն գրի առնել զանոնք, հաղորդ դարձնելու համար ի մասնաւորի ընթերցող հանրութիւնը անոնց առթած մտորումներուն եւ խորհրդածութիւններուն....:

Աներկբայ է, որ ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ իրականացուած Լրագրողներու համահայկական 6-րդ համաժողովը, որ կայացաւ Հոկտեմբեր 4-6, Ադանաձորի մէջ, «Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագիրը կրող վերտառութեամբ, խորապէս գնահատելի երեւոյթ էր՝ ի մի հաւաքելու Սփիւռքահայ մամուլի շուրջ 90 ներկայացուցիչներ, փոխճանաչման եւ փոխգործակցութեան հիմքեր ստեղծելու եւ ամրապնդելու տեսակետէն մանաւանդ, Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ կամ ընդհանրապէս ալ: Սակայն՝ հարցադրումը կը մնայ: Ո՞ր էին հայրենական յայտնի լրատուամիջոցները, եթէ չհաշուենք անոնց հատ ու կենտ ներկայացուցիչները: Արդեօ՞ք իրապէս ալ հրաւիրուած էին անոնք, ինչպէս մեզի հաւաստիացուց Սփիւռքի նախարարուհի Տիկ. Հրանդ Յակոբեան, թէ՞ սա կոչուած էր ըլլալու լոկ համասփիւրքեան Համաժողով....եւ փակ դռներու ետին...Ադանաձորի գեղատեսիլ բնութեան մէկ անկիւնը, մեկուսացած արտաքին աշխարհէն...:

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Համաժողովի բացումը կատարուեցաւ Երեւանի պետական համալսարանի «Շիշմա Չարենց» սրահին մէջ՝ Հոկտեմբեր 4-ին: Տիկ. Հրանտշ Յակոբեան, միշտ ժրաջան ու գործունեայ, յատկապէս ըսաւ իր բացման խօսքին մէջ. «Մեր խնդիրն է, որ մենք բոլորին



ներկայացնենք, որ սա միայն հայոց ցեղասպանութիւնը չէ, այլեւ մարդկութեան դէմ կատարուած հրէշագործութիւն, որի դատաւարտումն ու ճանաչումը Երկիր մոլորակը հեռու կը պահեն նման յանցագործութիւններից»: Ան անդրադարձաւ այն խնդրին որ Հայաստանէն ներս ստեղծուած շրջափակման իրավիճակը պատճառ կը դառնայ նիւթական ահաւոր, միլիարտներու հասնող կորուստի, որուն մասին լրագրողները պէտք է շատ գրեն ու խօսին..., ինչպէս եւ գրելու են անոնք Թուրքիոյ

այն ազնիւ մտաւորականներուն մասին, որոնք կը խորհին որ ժամանակն է առերեսուելու պատմութեան հետ:

Նախարարուհիին խօսքէն ետք, հնչեց ՀՀ նախագահի ուղերձը ուղղուած համաժողովի մասնակիցներուն: Ուղերձին մէջ կ'ըսուէր յատկապէս. «Ցեղասպանութիւնը շարունակուում է նաեւ այսօր, հետեւաբար լռել չենք կարող: Մահմանների փակ լինելը, պատերազմի սպառնալիքը, ռազմատենչ յայտարարութիւններն ու քնած սպային կացնահարելը Ցեղասպանութեան հետեւանքներ են»: Ապա Նախագահը կոչ կ'ընէր լրագրողներուն, նշելով. «Հայ ժողովրդի արդար դատը եւ Հայոց ցեղասպանութեան իրաւական պաշտպանումը, արցախեան հիմնախնդրի ճշմարտացի լուսաբանումը, նաեւ հայ-թուրքական յարաբերութիւններն ու հակահայկական քարոզչութեան դէմ պայքարի հարցերը պէտք է դառնան ամենօրեայ քննարկման նիւթ: Եւ այս գործում չափազանց կարեւորում եմ զանգուածային լրատուամիջոցների դերը, ձեր նախաձեռնող ու ակտիւ գործունէութիւնից շատ բան է կախուած»:

Հնչեցին նաեւ ԼՂՀ նախագահի ուղերձը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի եւ Ներսէս Պետրոս ԺԹ կաթողիկոսի օրհնութեան եւ ողջոյնի խօսքերը, խօսք առաւ նաեւ ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնեանը:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Բացման հանդիսաւոր նիստէն ետք, համաժողովի մասնակիցներս ուղղուեցանք դէպի ՀՀ կառավարութեան շէնքը, ներկայ գտնուելու անոր մէկ նիստին: Շէնքին առջեւ խումբ մը հայրենի սեւազգեստ կանայք, ցուցատախտակներ բռնած իրենց ձեռքին, կը բողոքէին բանակի ծառայութեան մէջ զոհուած իրենց որդիներուն արդարադատութեան ի խնդիր...: Ուրիշներ սրտակեղեք աղաղակով ուղղակի կը պոռային ձեռքերնին վեր պարզած, դիմելով կառավարութեան պատկան անձանց. «Դո՛ւք էք մեր դժբախտութեան պատճառը», «Ա՛լ կը բաւէ, հեռացէ՛ք» եւ այլ վանկարկումներով...եւ ածականներու շարան



մըն ալ տեղացնելով....: Ինչպէ՞ս մեկնաբանել այս երեւոյթը: Ժողովրդավարութեան սովորական դրսեւորո՞ւմ, թէ՞ անիրաւուածի ու անարդարուածի հոգիի ճիշ ու աղաղակ....:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Խորապէս հոգեյոյզ, իմաստալից եւ խորհրդաւոր էր բոլորիս հաւաքական Խոնարհումը՝ Ծիծեռնակաբերդի յուշարձան-համալիրին մէջ, մեր նահատակներու յիշատակի անմար



բոցին առջեւ, ծաղկեպսակի եւ ծաղիկներու տեղադրումը այնտեղ, որպէս ուխտ ու երդում հաւատարիմ մնալու անոնց անթառամ յիշատակին: Նմանապէս, Համաժողովին անունով՝ եղեւինի հաւաքական տնկումը պուրակին մէջ...«Մեռելներուս իբրեւ խաչ, ես այս ծառը տնկեցի» խօսքերուն խորին խորհուրդով...: Տպաւորիչ էր այնուհետեւ մեր այցելութիւնը Յեղասպանութեան թանգարան, որ տարուէ-տարի կը համալրուի նոր փաստաթուղթերով, լուսանկարներով, գիրքերով եւ այլ վաւերագրական տուեալներով եւ տակաւ կը դառնայ պերճախօս

վկան ու ապացոյցը գործադրուած հրէշագործութեան:

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԴ

Համաժողովի մասնակիցներս տեղաւորուեցանք Աղանաձորի համալիրի մեզի տրամադրուած սենեակներուն մէջ: Հիասքանչ բնութիւն, աշնանային գոյներու համանուագ...: Սակայն, ինծի այնպէս կը թուէր,



թէ մեկուսացած էինք դուրսի աշխարհէն, երեւանեան կեանքէն, հայրենական լրատուամիջոցներու այլ հաւանական մասնակիցներէն...:

Երկու օրուան ընթացքին, յաջորդաբար զեկուցումներով հանդէս եկան շուրջ 51 մասնակիցներ՝ տարբեր երկիրներ ու լրատուամիջոցներ ներկայացնող: Տեղի ունեցան նաեւ բաց քննարկումներ: Բոլորը միակարծիք էին, որ անհրաժեշտութիւն կար ճիշդ օգտագործելու աշխարհասփիւռ հայ

լրագրողական մտքի ներդրը՝ լրագոյնս ներկայացնելու համար 20-րդ դարու առաջին Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հիմնահարցը:

Համաժողովի մասնակիցները, որպէս գործնական քայլեր, որոշեցին առաւել զօրացնել եւ նպատակաւորօրէն դարձնել Հայոց Հարցին վերաբերող հրապարակումները, անդրադառնալ պատմական իրողութիւններուն, ինչպէս նաեւ Յեղասպանութիւնը ապրած մարդկանց ժառանգներու պատմութեան, այն բոլոր պատմական ու քաղաքական իրողութեանց, մշակութային, ընկերային ու հոգեբանական խնդիրներուն, որոնք հետեւանքն էին Յեղասպանութեան եւ թողուցին իրենց հետքը համաշխարհային

պատմութեան մէջ: «Յիշել, յիշեցնել եւ պահանջել» լոգունգ-պատգամը՝ արտաբերուած վերջերս Արամ Ա Վեհափառին կողմէ, դարձնել լիարժէք իրականութիւն: Աշխատանք տանիլ օտար լրատուադաշտը հայանպաստ դիրքաւորելու ուղղութեամբ, մանաւանդ որ Թուրքիան ալ կը նախապատրաստուի իր «ճշմարտութիւնը» քարոզելու աշխարհին: Խօսք եղաւ նաեւ հատուցման թղթածրարը պատրաստելու շուրջ: Անդրադարձ եղաւ, նմանապէս, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի սանձազերծած տեղեկատուական պատերազմին արժանի հակահարուած տալու հրամայական անհրաժեշտութեան: Նիստերը եւ ելոյթները գերազանցօրէն կեդրոնացան, սակայն, Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին վրայ:

Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացէն անդին, սակայն, կարելի է հարց տալ մեր կողմէ, թէ՛ ալ ժամանակը չէ՞ որ մեր հաւաքական, համակարգուած ճիգերը



կեդրոնացնենք մեր արդար ԴԱՏԻ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԵԱՆ վրայ, հիմք ընդունելով Ուիլսոնեան Իրաւարար Վճիռը, որ ի գօրու կը մնայ մինչեւ այսօր..... Ի վերջոյ, ՀՈՂԻՆ համար էր որ գործադրուեցաւ Յեղասպանութիւնը...այն հողին, որ կը կոչուէր ԱՐԵՒՍՏԱՀԱՅԱՍՏԱՆ, ուր հազարամեակներ շարունակ ապրեր էր մեր ժողովուրդը՝ իր դպրոցներով ու եկեղեցիներով, կազմակերպութիւններով ու հաստատութիւններով, տուն ու կալուածներով...:

Յեղասպանութեան ճանաչումը աղերսել այս կամ այն

պետութենէն կամ միջազգային կառոյցէն, հարիւր տարի ետք կատարուածէն, ողորմութիւն մուրալ չէ՞ արդեօք....կամ բարոյական ցաւակցութիւն հայցել չէ՞....: Հայ Դատի Պահանջատիրութիւնը մինչդէռ՝ իրաւունք մը հետապնդել պէտք է նշանակէ գերազանցօրէն, իրաւագրկեալ հայ ժողովուրդին կողմէ:

Հոկտեմբեր 6-ին, Լրագրողներու 6-րդ համագումարին մասնակիցները հանդէս եկան յայտարարութեամբ մը, ուր մասնաւորաբար կ'ըսուէր. «Համաժողովի ընթացքում ներկայացուած՝ Յեղասպանութեան նուիրուած մասնագիտական երեք տասնեակից աւելի զեկուցումները, դրանց քննարկումները եւ մտքերի փոխանակութիւնը, հերթական անգամ հաստատեցին Հայաստանի Հանրապետութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Սփիւքի հայ լրագրողների՝ հետզհետէ աշխուժացող համագործակցութիւնը ի շահ համազգային հիմնախնդիրների լուծման եւ ի շահ Հայոց Յեղասպանութեան ճանաչման, դատապարտման...»: Բացի ասկէ, կոչ եղաւ՝ 100 հազար թաքուն կրօնափոխ հայերուն՝ վերադառնալու իրենց հայկական ինքնութեան եւ արմատներուն: Միաժամանակ, նկատի ունենալով Յեղասպանութեան վերապրողները ընդունած առաջին երկրին՝ Սուրիոյ մէջ տիրող ներկայի տագնապալի վիճակը, համաժողովի մասնակիցները իրենց անվերապահ եւ հաստատական աջակցութիւնը յայտնեցին Սուրիահայերուն:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ



Ինչը փաստում է, որ լրագրողները գտնում են պատերազմի առաջին ճակատում: Նրանք ովքեր կը կարողանան մարդկանց ուղղորդել իրենց գաղափարներով...նրանք էլ կը կարողանան ուղղորդել եւ կառավարել



Ժամանակակից աշխարհը:...Միասին պարտաւոր ենք մեր խօսքը եւ մեր ճշմարտութիւնը հասցնել բոլորին: ...Ձեր արհեստավարժութիւնից, ձեր օփերաթիւ աշխատանքից շատ բան է կախուած: Դուք տեղեկատւութիւն տալիս էք ոչ միայն աշխարհին, այլ նաեւ մեզ: Ձեր վերլուծութիւններով, քննադատութեամբ բացայայտում էք այն խնդիրները, որոնք առկայ են եւ ցոյց էք տալիս այն ուղիները, որով մենք պէտք է գնանք առաջ»:



Գուցէ ամէնէն անմոռանալի հանդիպումը մեզի՝ սփիւռքահայ լրագրողներու համար, մեր հանդիպումն էր ՀՀ պաշտպանութեան նախարար Սէրան Օհանեանի հետ՝ Պաշտպանութեան Նախարարութեան հոյաշէն ու վիթխարի կառոյցէն ներս, որ ինքնին ոյժ ու հօգործիւն ներշնչող կառոյց է իր բոլոր իմաստներով...: Ո՞վ կրնայ հերքել այն անուրանալի փաստը, որ մեր ժամանակներուն, Հայաստանի ու

հայրութեան մեծագոյն նուաճումը մեր հայկական յաղթանակած բանակն է, որով կրցանք յաղթահարել գոհի կերպարը մեր մէջ եւ լեցուիլ ազգային հպարտութեամբ...:

ՀՀ պաշտպանութեան նախարարը ողջունեց ներկաները, բարձր գնահատելով համաժողովի աշխատանքները եւ լրագրողներու առաքելութիւնը: Այնուհետեւ, ան համբերութեամբ եւ մանրակրկիտ պատասխանեց լրագրողներու հարցումներուն, որ կ'ընդգրկէին՝ հայկական զինուած ոյժերէն ներս հոգեւորականներու դիպուկահարներու առկայութիւնը, բանակի Պրն, Սէրան Օհանեան կարեւորեց՝



հայ բանակի ազգային գաղափարախօսութիւնը եւ առանձնայատկութիւնները շեշտելու, անոնցմով հայ զինուորը դաստիարակելու անհրաժեշտութիւնը:

Հետաքրքրական էր լրագրողներուս այցը ՀՀ Ազգային Ժողով, ուր մեզ ողջունեց ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը, որ կարեւորեց սփիւռքեան մամուլի դերը՝ Սփիւռքի մէջ դաստիարակուող մարդու աշխարհայեացքի ձեւաւորման գործին մէջ: Ան ըսաւ ի մասնաւորի. «Բազմաթիւ հերոսներ սփիւռքեան մամուլի շնորհիւ են դաստիարակուել որպէս հերոս: Այսօր բազմաթիւ են մարտահրաւերները, եւ մենք պիտի միասնական լինենք՝ դիմակայելու դրանց, հասնելու Հայոց Յեղասպանութեան եւ ժխտողականութեան դատապարտմանը»:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Որպէս եզրակացութիւն, կարելի է հարց տալ, թէ արդեօ՞ք Համաժողովը հասաւ իր նպատակին: Համաժողովը, անվարան, հնարաւորութիւն ընձեռեց, որ հայ աշխարհասփիւռ լրագրողներ համախմբուին մէկ յարկի տակ, մօտէն ծանօթանան իրարու, տեսակէտներ փոխանակեն, խօսին մեր հասարակաց ցաւերուն ու խնդիրներուն, նպատակներուն ու ընելիքներուն մասին, լուծումներ առաջարկեն, սթափ հայեացքով նային մեզ շրջապատող իրականութեան եւ մենք մեզի...: Իմ խորին համոզումով, մենք դեռ երկարաշունչ, լաւապէս ծրագրաւորուած ու համակարգուած աշխատանք ունինք կատարելիք հասնելու համար մեր անկատար տենչերուն ու երազներուն, որոնց յստակ բանաձեւումը անգամ դեռ չենք կրցած կատարել: Հայոց Յեղասպանութեան համընդհանուր ճանաչո՞ւմ ու դատապարտո՞ւմ, անոր ժխտումը քրէականօրէն պատժելի արարք դարձնելու որոշման ընդունո՞ւմ...գոյքային եւ հողային հատուցո՞ւմ...: Հայ Դատի Պահանջատիրութիւնը տակաւին կը սպասէ իր յստակ տարազումին՝ գէթ մեր բոլորին կողմէ ընդունուած ու բանաձեւուած: Սակայն, կայ այլ էական հիմնահարց մը, որուն դաժան իրականութեան աչք փակելը, զայն ամենայն կարեւորութեամբ չմատնանշելը՝ աններելի եւ ճակատագրական բացթողում մը պիտի ըլլար ոչ միայն խղճամիտ լրագրողին, այլ առհասարակ՝ ամէն մէկ սրտացաւ հայու համար: Ատիկա հայրենիքի հայաթափումն է այսօր, երբ հոծ թիւով զանգուածներ՝ յուսալքուած ու անհեռանկար, կ'արտագաղթեն Մայր հայրենիքէն, վտանգելով հայրենիքի ու հայութեան ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆԸ: Ինչպէ՞ս կոչել այս արիւնահոսութիւնը...ՍՊԻՏԱԿ ԵՂԵՌՆ...ՆԵՐՔԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.....Սա ալ տեսակ մը ցեղասպանութիւն չէ՞ արդեօք, այս անգամ մեր սեփական ձեռքով գործադրուած, որուն մասին մտածելու ենք ազգովին, լուծումներ որոնելու ենք ամենայն լքջութեամբ ու պատասխանատւութեամբ, զօրաշարժի ենթարկելով մեր միասնական ոյժերը՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք..., եթէ անկեղծ ենք մեր ՀԱՅԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՐ ԱՐԴԱՐ ԴԱՏԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՋ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Նամակ Հայ Ազգին

Անինա Յովհաննիսեան, Երեւան

Մենք այսօր գնում ենք կործանման, եւ դա զգում է նոյնիսկ դպրոցականը: Ամէն օր մեր հանրապետութիւնը լքում են տասնեակ մարդիկ, ովքեր ոչ թէ գնում են Հայաստանից, այլ փախնում են՝ իրենց ետեւից փորձելով ոչնչացնել ամէն ինչ, ինչը կը ստիպի նրանց հետագայում վերադառնալ իրենց հայրենիք:



Այս ամէնի ֆոն-ի վրայ մենք տեսնում ենք բազմաթիւ շքեղ մեքենաներ, նորակառոյց առանձնատներ, շքեղ խանութ սրահներ եւ այլ հարստութիւն խորհրդանշող երեւոյթներ, որոնք օտարերկրացու վրայ առատութեան եւ ժողովրդի հարստութեան տպաւորութիւն են թողնում: Բայց

երբ մենք ուսումնասիրում ենք մեր տնտեսութիւնը, պարզ է դառնում, որ Հայաստանում գործող ընկերութիւնների գերակշռող մեծամասնութիւնը կենտրոնացուած է մի խումբ անձանց ձեռքերում եւ էական չէ, որ դրանց սեփականատէրերը կարող են լինել այլ անուն-ազգանուն ունեցող անձինք, ովքեր ուղղակի դրածոյի դեր են կատարում:

Ժողովրդի մօտ 10%-ը կազմող այս զանգուածն առանց մի վայրկեան անգամ հետագայի մասին մտածելու կուլ է տուել ամէն ինչ՝ կրթութիւնից սկսած շաքարաւազով վերջացրած: Արդիւնքում մեր հասարակութիւնն օրեցօր բեւեռնում է եւ աւելի ու աւելի հեռանում միմեանցից, ինչի արդիւնքում էլ սրում են այս երկու խմբերի միջեւ թշնամական յարաբերութիւնները: Նոյնիսկ ընտանիքներն են կազմում խմբերի միջեւ, դրանցից դուրս ամուսնութիւնների թուաքանակը գնալով նուազում է: Այս ամէնի արդիւնքում մեր հասարակութիւնն այսօր բաժանուել է գերհարուստների եւ գերաղքատների, վերջիններն ամէն կերպ ձգտում են փախնել այստեղից, քանզի նոյնիսկ մտաւոր, գիտական, հմտութիւնների եւ կարողութիւնների պոտենցիալ ունենալու դէպքում էլ դատապարտուած են աղքատութեան՝ առաջ գնալու հնարաւորութիւնների մաքսիմում-ը կարող է լինել կիսաստրկական աշխատանքը, իսկ աշխատավարձն էլ՝ կազմել 150,000 դրամ, ինչն այսօր նոյնիսկ առաջին անհրաժեշտութեան ապրանքներ ձեռք բերելու համար զգալիօրէն չի բաւականացնի:

Ստացում է, որ մեր հասարակութեան զգալի մեծամասնութիւնը՝ մօտ 90%-ը, պոտենցիալ Հայաստանը լքողներ են, եւ նրանց ետ է պահում միայն հնարաւորութեան բացակայութիւնը, ինչն էլ ժամանակի խնդիր է: Միւս խումբը, ով չափից շատ լաւ է զգում իրեն Հայաստանում ոչ միայն չի մտածում գնալու մասին, այլ նաեւ բթամիտ լինելու պատճառով չի կարողանում կանխատեսել մեծամասնութեան հեռանալու արդիւնքում իր եւ իր սերունդների վտանգի տակ լինելու փաստը: Պետութիւնը չի կարող գոյատեւել մի խումբ մարդկանց քմահաճոյքների հաշուին կամ ծառայել մի խումբ մարդկանց: Այս տիպի պետութիւնները միշտ կործանուել են, իսկ այդ խմբի ու նրանց ընտանիքի անդամների հետ էլ մեղմ ասած դաժան են վարուել:



Ուստի եւ կ'ուզենայի, որ այս յօդուածը կարդար թէ այդ խումբը, ով ոսկու փայլից կուրացած բթացել է, թէ այն խումբը, որն արդէն վաղուց թքել է Հայաստան պետութեան վրայ եւ միայն ֆիզաքապէս եւ ժամանակաւոր է այստեղ: Առաջին խումբը լաւ կը լինէր, որ գիտակցէր, որ հազարամեայ պատմութիւն ունեցող երկրագունդ մոլորակում դեռ ոչ մէկ, ոչ մի անհատ, ընտանիք, կենդանի չի կարողացել արիւնով, անարդարութեամբ, խորտակած ճակատագրերով եւ այլոց երեխաներին սոված պահելով ձեռք բերուած հարստութիւնը պահել, հատուցումը միշտ համարժէք է եղել՝ սա կեանքի չգրուած օրէնքն է եւ ոչ մի կապ չունի ոչ կրօնի, ոչ բարոյականութեան եւ ոչ էլ խրատագիտութեան հետ:

Յուսահատուած խմբին էլ կ'ուզենայի, որ երբեք չկորցնեն իրենց կամքի ոյժը եւ, անկախ ամէն ինչից, չատեն Հայաստանը, քանզի մեր հայրենիքի եւ ազգի մասին մենք չենք կարող դատել ճակատագրի բերումով ներքեւից վերեւ միամտօրէն յայտնուած անձանցով: Սա բոլորիս երկիրն է, թէ փողի գերին դարձած սողունների, թէ բարձր արժեքների համար կեանք տուողների եւ թէ ստեղծուած իրավիճակի դէմ պայքարողների: Այս պահին մեզ պէտք են մեր ազգի բոլոր ներկայացուցիչները, ովքեր գիտակցում են հարցի լրջութիւնը, մեզ պէտք է օգնել միմեանց, օգնել մեր ազգին, որպէսզի չվերածուենք մահացած հասարակութեան եւ մեռեալ պետութեան:

Աղբիւրը՝ <http://maxinfo.am>

Հայաստանի Պատասխանը. Ո՛չ Մատրիտեան Սկզբունքներին

Ստեփան Սարգսեան, Երեւան,

Հայաստանի Հանրապետութիւն «Հայրենասէր»

կազմակերպութիւն

Հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած մարդասպան Սաֆարովի ազատ արձակմանը հայկական իշխանութիւնների նուազագոյն պատասխանը պէտք է լինի



մատրիտեան սկզբունքներից եւ դրանցում արտացոլուած հայակործան գաղափարներից վերջնականապէս հրաժարուելը: Ատրպէյճանահունգարական այս խայտառակ գործարքը եւս մէկ անգամ եկաւ փաստելու բազմիցս արդէն հերքուած այն դրոյթը, որ ոչ մի երրորդ պետութիւն կամ կառոյց չի կարող երաշխաւորել հայի անվտանգութիւնն ու պատիւը:

Սա՛ է Սաֆարովի պատմութեան հիմնական դասը: Մինչդեռ, արցախեան հակամարտութեան շուրջ ընթացող բանակցությունների ողջ ընթացքում հայկական կողմի ընդունած կեցուածքն ու դիրքորոշումները խարսխուած են հէնց միջազգային երաշխիքների դրոյթի վրայ:

Մատրիտեան սկզբունքների ամենավտանգաւոր կէտերից են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից դուրս ազատագրուած պատմական հայկական շրջանների

վերադարձը Ատրպէյճանին եւ ազերի բնակչութեան վերադարձը այդ տարածք: Բազմիցս խօսուել է, թէ ինչ կարելորագոյն պաշտպանական գործառնոյթ ունեն այդ ազատագրուած շրջանները Հայաստանի անվտանգութեան համար: Առանց այս շրջանների, արցախա-ատրպէյճանական ճակատը բազմապատկուում է մի քանի անգամ՝ համապատասխանօրէն բազմապատկելով սահմանն ապահովելու համար անհրաժեշտ մարդկային եւ ֆինանս-ական ռեսուրս-ների չափը: Եթէ Հայաստանի պիտոճէ-ի համար ծանր բեռ են պաշտպանական ծախսերը ներկայումս, այն դէպքում պաշտպանութեան ապահովումը կը դառնայ գործնականում անհնարին: Արդիւնքում կ'ունենանք վերջնականապէս կորցուած ռազմական հաւասարակշռութիւն, յուսալքուած Սիւնիքի մարզի բնակչութեան արտագաղթ եւ դիրքերի փոփոխութեան արդիւնքում Ատրպէյճանի ռազմական յաջողութեան աւելի մեծ հաւանականութիւն: Իսկ թէ վերադարձած ազերի բնակչութիւնը ինչպիսի պարարտ հող կը նախապատրաստի ատրպէյճանական դիվերսիոն խմբերի համար Սիւնիքի եւ Արցախի շրջանների ուղղութեամբ բազմապիսի յարձակումների համար, Տաւուշի մարզում



պարբերաբար իրականացուող ատրպէյճանական գործողութիւնները յուշում են: Կարծում եմ, նաեւ, պարզ է, թէ ինչի կը բերեն հային կացնահարող մարդասպանին հերոսացնող ազերուն եւ արցախահայութեանը համատեղ ապրեցնելու փորձերը:

Իսկ մատրիտեան սկզբունքներն ինչպէ՞ս են նախատեսում կանխել վերը նշուած զարգացումը. անվտանգութեան միջազգային երաշխիքներ՝ միջազգային խաղաղապահների տեսքով: Հէնց

այստեղ է, որ Սաֆարով մարդասպանի ազատումը կարող է ահագանգ լինել հայութեանը՝ տեսնելու միջազգային երաշխիքների վստահելիութեան աստիճանը եւ, դրանով պայմանաւորուած, այն մահացու վտանգը, որը պարունակում է մատրիտեան սկզբունքների առաջարկած ազատագրուած տարածքների յանձնումը: Իրավիճակը ամբողջապէս պատկերացնելու համար հարկ է նաեւ դիտարկել միւս տերութիւնների եւ միջազգային կառոյցների գործօնը (ԱՄՆ, ՆԱԹՕ), որոնք, ըստ որոշ հայ վերլուծաբանների, ուղղակի կամ անուղղակի ներգրաւուածութիւն ունեն մարդասպանի արտայանձնման պատմութեան մէջ: Այսինքն, նոյն այն միջազգային հանրութիւնը, որը, ենթադրաբար, պէտք է երաշխաւորի միջազգային իրաւունքն ու կնքուած համաձայնագրերը, շրջանցում է դրանք յանուն իր շահերի: Սակայն մեզ հունգարական այս անբարոյական առուծախը անհրաժեշտ չպէտք է լինէր, որպէսզի միջազգային երաշխիքների իրական արժէքը հասկանայինք: Հայոց պատմական փորձն արդէն բաւական հարուստ է նմանատիպ դրուագներով: Այդ փորձը նոյնիսկ վերաճել է ժողովրդական ասոյթի՝ Խրիմեան Հայրիկի թղթէ շերեփի պատմութեան տեսքով: Իսկ հայը դեռ հաւատում է ու՝ հիասթափուում:

Չեմ ցանկանում անդրադառնալ այն հարցին, թէ Հայաստանի ղեկավարութիւնը ինչու չկարողացաւ կանխել Սաֆարովի արտայանձնումը: Բազմաթիւ այլ վերլուծութիւններ դրա մասին գրուել են եւ դեռ կը գրուեն: Վերջին տարիներին Հայաստանում առկայ յետընթացը չէր կարող չանդրադառնալ նաեւ Արտաքին Գործերի Նախարարութեան անբաւարար աշխատանքի վրայ, որը մինչ այդ էլ պարբերաբար ստիպուած էր լինում երկրի քաղաքացիներին բացատրութիւն տալ Ատրպէյճանի դիւանագիտական այս կամ այն ձեռքբերման, ՄԱԿ-ում անցկացուած տարբեր ատրպէյճանամետ բանաձեւերի

կապակցութեամբ: Այս անգամ հերթական անատամ հակազդեցութիւնն ու քայլերը, ինչպիսիք են դիւանագիտական կապերի կասեցումը, վերապատրաստման դասընթացներից հայ պաշտօնեաներին ետ կանչելը, չեն բաւարարի: Դրանով մենք նմանուում ենք Թուրքիային, որը Հայոց Ցեղասպանութեան ամէն բանաձեւի աղթի մէկ կասեցնում է յարաբերութիւնները, մէկ՝ վերականգնում՝ այդպէս էլ ոչ մի արդիւնքի չհասնելով: Ատրպէճանը տարել է շօշափելի յաղթանակ՝ լինելով անբարենպաստ դիրքում: Մինչդեռ Հայաստանի պետականութեանը եւ հայ ազգի արժանապատուութեանը հասցուել



է մեծագոյն վիրաւորանք: Առանց շօշափելի պատասխանի ներկայիս իշխանութիւնները կը կորցնեն վստահութեան վերջին նշոյլը, քանի որ ոչ մի պետական հիմնարար գործառոյթ այլեւս չեն կարողանում կատարել:

Մատրիտեան սկբունքներից վերջնականապէս հրաժարումը նուազագոյն պատասխանն է, որ Հայաստանի իշխանութիւնները պէտք է տան, քանի որ,

- այն ամրապնդում է Հայաստանի

անվտանգութիւնը,

- այդ պատասխանը մեր ուժերի շրջանակներում է եւ իրատեսական է,

- այն շօշափելի պատասխան է եւ՝ Ատրպէճանին, որի վերջնականապատակն է Արցախի բռնագրաւումը, եւ՝ այն տէրութիւններին, որոնք ցանկութեան դէպքում կարող էին կանխել մարդասպանի արտայանձնման գործարքը եւ որոնք շահագրգռուած են արցախեան հակամարտութեան շուտափոյթ լուծմամբ՝ մեր հայրենի հողի յանձնման հաշուին:

Մատրիտեան սկբունքներից հրաժարումը պէտք է լինի ոչ միայն հռչակագրային (դեկլարատիվ), այլ գործնական՝ նախկինում հայաթափուած շրջաններում վերաբնակեցման եւ զարգացման լայնածաւալ պետական ծրագրի իրագործմամբ: Ցանկացած խաղաղութեան համաձայնագիր պէտք է պայմանաւորուած լինի ոչ թէ որեւէ երրորդ կողմի երաշխիքով, այլ Հայաստանի ինքնուրոյն ինքնապաշտպանութեան հնարաւորութեամբ: Ուրեմն մէկ անգամ եւս համոզուենք. արժէ՞ արդեօք նորից մեր ձեռքն առնել Խրիմեան Հայրիկի թղթէ շերտեր՝ փոխարէնը յանձնելով մեր սասունցիների սուրը՝ մեր ազատագրած անմատչելի լեռները: Միանշանակ՝ ո՛չ:

Ո՛չ մատրիտեան սկբունքներին:

Ո՛չ հայրենի հողը թշնամուն յանձնելուն

Աղբիւրը՝ <http://hetq.am>

ԱՆՂՐԱՆԻԿ

Առաջնորդ, շեֆ էր ծնուած Անդրանիկ:

Իր ձեռքի շարժումը լայն էր, տիրական, հայեացքը անխաբոյս։ Խօսքը՝ անկաշկանդ ու միշտ հրամայողական։ Ձայնը իշխանական ու անհոգորէն հզօր, հակառակ իր թովիչ քաղցրութեան:



Իր անհուն սերը դէպի ժողովուրդը, խոնարհ, քրտնաջան, հարստահարուած ժողովուրդը եռում էր նրա բոլոր խօսքերի եւ բոլոր պատմութիւնների մէջ: Սոսկական սեր չէր այդ, այլ տարերային պաշտամունք բնութեան, մարդու, վաստակի, քրտինքի, մի տեսակ անդադրում խնկարկումն մի գերագոյն էակի, որ իր իտեալն էր- Հայ ժողովուրդը, Հայ Հայրենիքը եւ նրա ազատութիւնը:

Անդրանիկ սոսկական յեղափոխական մարտիկ չէր, նա Հայոց Աշխարհի ընթոստացումն էր, հայ տրորուած, անարգուած հողի վիթխարի աղաղակը, թէ՛ «Էլ չեմ կարող, չեմ կարող տոկալ...»:

Վահագնից մինչեւ Արտաւազդ, եւ Արտաւազդից մինչեւ Սասունցի Դաւիթ եւ ապա մինչեւ Աղբիւր Սերոբ եւ Անդրանիկ, համայն հայ հերոսապատումն է թաւալում ոսկէ ծփանքով:

Մեր օրերի ժողովրդի հայեացքը Անդրանիկին դարձաւ, անուն էր, որ Սասնայ լեռներից ծաւալուեց ու հասաւ կորած խրճիթներին: Մի հարցնէք ինչպէս քամիները բերին: Ո՞վ էր Անդրանիկ, ո՞ր ծնուած, ո՞ւմ զաւակ, հարցնող չկար. Ոչ ոք գիտէր նրա ազգանունը, տարիքը, պատկերը: Նա միայն Անդրանիկ էր, անհայր ու անմայր, ասես մայր հողից հրաբուխի պէս ժայթքած: Նրա կերպարանքը ժողովուրդը յօրինել էր իր ուզածի պէս, իր վառ երեւակայութեամբ: Սասունի հերոսը՝ Դաւիթ ու Միւրի ժառանգն է, ուրեմն եւ նրանց պէս սոսկավիթխար, ձայնը՝ ահագնաղղորդ, բազուկը՝ խորտակիչ, աչքերը՝ կայծակի:

Անդրանիկ անպարտելի էր:

Անդրանիկ վաղուց հետէ մեր ժողովրդի համար դադրած էր անհատ լինելուց, նրա ուրոյն մարդկային գոյութիւնը լեցուած էր մի մեծ ազգային գաղափարի մէջ եւ այս պատճառով նրա հնչուն ու խորհրդանշող անունը դարձել էր ժողովրդական հերոսապատումի աւետարան, «ՍՈՒՐԲ ԱՆՈՒՆԴ ՊԻՏԻ ՅԻՇՈՒԻ ԴԱՐԷ ԴԱՐ»: Երբ մի ժողովուրդ իր նուիրական իտեալը կապում է մի անձի ճակատագրին, ապա պատմութիւնը դադարում է եւ սկսում է լեգենդների խորհրդաւոր եւ ոսկէ շարանը:

ԱԻ. ԱՀԱՐՈՆԵԱՆ (համադրուած)

Աղբիւր՝ ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻԻ ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Միջրների Հերըլտ»ի 1915-1918թթ Հայ ժողովուրդի Յեղասպանութեան եւ Վերածնունդի մասին Արձանագրած Վկայագրութիւններուն:

Մենք Ենք՝ Մեր Ցաւերը Շարքէն

"Ղեկավար խաղալու չտեսնուած ախորժակ մը եւ ախորժակ մեռնող 'ղեկավարներու' ջուլիր (մը):" Մ. Հայկենց Ահաւասիկ նորօրեայ մղձաւանջ մը եւս, որ մեզ հետ կ'ապրի շուրջ քառորդ (եւ աւելի) դար, սակայն աւելի խոցող ու ցաւցնող հետեւանքներով, երբ մեր շուրջ



կը տեսնենք իսկական ղեկավարական ամլութիւն մը կամ պարապութիւն մը: Ամէն ոք համոզուած ըլլալու է այս կոտտացող ցաւին, որ տակաւ կը խորանայ ու կ'աճի անտեսլապաշտ, անհեռատես եւ անիրապաշտ "ղեկավար"ներու նշմարուող ու գործող շարքով մը, քիչ մը ամէն տեղ եւ ամէն մակարդակի վրայ: Իսկ համոզուածութիւնը ո՞ր կարելի է տեսնել, եթէ ոչ իւրաքանչիւր շրջանակ իր պարունակին մէջ, սակայն, ընդհանրութեամբ մը, որ ինքնայատուկ սկսած է դառնալ սփիւռքահայ իրականութեան մէջ:

Բնական է, "ղեկավար"ներ չեն ծնիր, ոչ ալ "ղեկավար"ութիւններ կը կերտուին, սակայն, ո՞վ ըսաւ թէ չկան "ղեկավար"ական շնորհքներով ու կարողութիւններով օժտուած խոստմնալի տարրեր, որոնք կրնան կառոյցներ գլխաւորել կամ պատասխանատուութիւններ ստանձնել: Սակայն, աւելի կարելորդ այն է, որ նման պաշտօններու ու դիրքերու հասնողներ ըլլան անաչառ, պարկեշտ ու համեստ նկարագիրներով համակուած պարագլուխներ, որոնք կրնան լաւագոյնս դրսեւորել իրենց հանգամանքները՝ ղեկավարական թէ հասարակական ժողովրդականութեամբ: Կարիք կա՞յ, դարձեա՞յ, յիշելու եւ յիշեցնելու այն ղեկավարական համակարգերը, որոնք 40ականներէն մինչեւ 80ականները (մասամբ նաեւ 90ականները) ի վիճակի եղան համայնքային թէ գաղութային կեանքին մէջ ծրագրել ու կազմակերպել, հունաւորել ու արդիւնաւորել ազգային կառոյցներ, իրենց շինարարութեամբ, կենսունակութեամբ ու դաստիարակութեամբ: Աւելին՝ այդ գործընթացին զուգահեռ, կառուցողական այդ փաղանգներուն շնորհակալ գործերէն եղաւ նաեւ նոր սերունդներու քաջալերութիւնն ու զօրակցութիւնը՝ դեր վերցնելու կամ մասնակցելու ազգային կեանքին մէջ: Իսկ այսօր, երբ աչքի առաջ կ'ունենանք ազգային մեր կառոյցներու մեծամասնութեան կարգավիճակը, իր զանազան տարբերակներով, բայց մանաւանդ "վաստակ" եւ "անցեալ" ունեցողներով, անվարանօրէ՛ն, մենք զմեզ դէմ յանդիման կը գտնենք տխուր երեւոյթներու առջեւ:

"Ինչո՞ւ"ին պատասխանը պէտք է փնտռել, գերազանցապէ՛ս, ազգային կառոյցներու "ղեկավար"ներուն մօտ, նկատի ունենալով շատ-շատերուն անձեռնհասութիւնը, անատակութիւնն ու անմատչելութիւնը, դառնալու "ղեկավար" կամ գրաւելու "ղեկավար"ական աթոռ: Անոնք որոնք չեն գիտեր "ղեկ"ը վարել կամ չեն կրնար "ղեկ"ին ետեւ նստիլ եւ կամ կը շահագործեն "ղեկ"ը, ինչպէ՞ս կրնան վարել, ուղղել կամ կառավարել կառոյցներ եւ "ամբոխ"ներ: Դժբախտաբար, մեր չորսդին, հոս թէ հոն, "ղեկավար"ական մակարդակներու վրայ, չկա՞ն ազգային կառոյցներ վառողներ, անուղղանք եւ անյոյսներ, որոնք կը յաւակնին ըլլալ "ղեկավար" , մինչդեռ կը փայլին իրենց... միջակութիւններով ու խակութիւններով: Արդեօք ազգային մեր կառոյցներուն վրայ թառող "ղեկավար"ներուն մեծ մասը, արժանի՞ է անոնց, կ'արդարացնէ՞ պատասխանատուութիւնները, շինի՞չ է իր դերակատարութիւնը, յաջողա՞ծ է իր ընթացքին մէջ:



Հարցադրումներ կամ մտահոգություններ, որոնք ինքզինքնին կը պարտադրեն, հետզհետեւ աւելի թանձր ու կարծր գոյներով, որովհետեւ այդ կառոյցներուն թուլացումը, կը թուլացնէ նաեւ ազգային կեանքի դիմադրողականութիւնը:

Մետալին միւս, բայց նոյնքան եւ աւելի ցաւատանջ երեսը այն է, որ սովորաւորական եւ աթոռատենջական նկրտումները կը շարունակուին, մանաւանդ այնպիսիներու մօտ, որոնք իրենց եսին ստրուկը ըլլալով, իրենց հիւանդկախական հոգեբանութիւնը կը գերադասեն, ի գին իրենց անհատական մոլութիւններուն եւ ընչաքաղցութեան: Օրինակ՝ Մարդիկ ինքզինքնին "ղեկավար" հռչակած են՝ համբակային խմբակով մը շրջապատուած: Ուրիշներ "ղեկավար" ծնած ըլլալու դատարկապորտութեամբ կը զբաղին՝ ինքզինքնին նկատելով անգերազանցելի:

Ոմանք ալ "ղեկավար" դառնալու (կամ մնալու) համար կը դիմեն ստորնամիտ ամէն միջոցներու, ընդհուպ կառոյց ու մարդուժ դատարկելով: "Ղեկավար"ական այսօրինակ մոլուցքներով տառապածներ ինչպէ՞ս կրնան նպաստ բերել հաւաքականութեան (իմա՝ համայնքագաղութներուն), ինչո՞վ կրնան սատարել ազգապահպանումի կառուցողականութեան:

Եթէ ժամանակաւոր կամ կարկտան տնօրինումներով պիտի առաջնորդուին ազգային կառոյցները եւ կամ՝ կարճաշունչ եւ ինքնամփոփ կարգադրութիւններով, ալ ինչի՞ մասին կը խօսուի եւ ի՞նչ հեռանկարներ կը գծուին: Ուղղակի անհանդուրժելի է այլեւս, երբ "ղեկավար" հասկացողութիւնը, իր ամբողջական բովանդակութեամբ եւ յղացքով, կը շահագործուի... շահագործողներու կողմէ, իսկ համակերպողականութիւնը կը մնայ կացութեան տէրը, անտարբերութիւնը՝ տիրականը: Վերջին հաշուով, ազգային մեր կառոյցները, մնալու համար կանգուն եւ եռանդուն, նպատակասլաց ու հանրօգուտ, մասնակի կամ կողմնակի յառաջխաղացքներով չեն կրնար իրենց գոյութիւնը շարունակել, երբ կը ղեկավարուին... անդեկային... անդեկներով, որոնք "ջուիր"ի կշիռք եւ արժէք ունին:

Բազմավաստակ ազգային-հասարակական գործիչ, հմուտ հրապարակագիր ու տաղանդաւոր գրագէտ Մ. Հայկենցին վերոյիշեալ միտքը, որքա՞ն բարացուցական է, որքա՞ն իմաստալի, որքա՞ն ուսանելի, երբ մեր շուրջը կը տեսնենք "ղեկավար"ներու ջուիրներ, որոնցմէ մաս մը կառչած կը մնայ իր ղեկավարութեան, ուրիշ մաս մը՝ բռնագրաւած, սակայն, բոլոր պարագաներուն, երկուքն ալ վանողական, մերժողական կամ քանդողական ազդեցութիւն ձգելով այդ կառոյցներուն վրայ:

Բառնալու համար այս վտանգաւոր սահանքէն, այլեւ ճիշդ ուղին որդեգրելու, անհրաժեշտ է "ղեկավար"ական ղեկերը վստահիլ ԻՄԿԱԿԱՆ ղեկավարներու, իսկ ինքնաղեկ "ղեկավար"ները կամ դիմակազերծելու կամ ալ... վար առնելու: Չի՞ք այլ ելք, եթէ ազգային կառոյցները պիտի պսակուին վերանորոգուած եւ երիտասարդացած գործօններով այլապէս ամէն ինչ յումպտէս վատնում է, ուշ կամ կանուխ:

Գրական-Մշակութային

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «ՄԻՇՆԸՆԵՐԻ ՀԵՐԸԼՏ»Ի 1915-1918 ԹԹ.ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՎԿԱՅԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հայոց Յեղասպանութեան թղթածրարը՝ ամբողջական ու ամբողջական դառնալու համար, տակաւին կը սպասէ բազմաթիւ յայտնաբերելի նորանոր փաստաթուղթերու լոյսին ընծայման...:



Փաստաթուղթեր եւ վկայագրութիւններ, որոնք առ այսօր՝ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին, կը մնան թաքնուած՝ Հ. Յեղասպանութեան հետ առնչուած պետութեանց, հաստատութեանց արխիւներուն, մամլոյ էջերուն եւ անձնական յուշագրութեանց մէջ...: Այդ թղթածրարին մէջ, թանկարժէք յաւելում մը կը բերէ՝ հմուտ պատմաբան, վաստակաւոր կրթական մշակ եւ մտաւորական Փրոֆ. Դոկտ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻ, իր հեղինակած՝ «ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «ՄԻՇՆԸՆԵՐԻ ՀԵՐԸԼՏ»Ի 1915-1918թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՎԿԱՅԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ» բովանդակալից եւ ծաւալուն գիրքով, հրատարակուած 2012-ին, Պէյրութի մէջ: Գիրքը որ

նոր լոյս կը սփռէ Հայոց Յեղասպանութեան մտայղացման, ծրագրաւորման եւ գործադրութեան համապարփակ ճանաչողութեան ուղղութեամբ...քննական հայեացքով ներկայացնելով հայ ընթերցող հանրութեան՝ այն էական նեցուկն ու զօրավիգը, զորս ընծայեցին անհատներ, կազմակերպութիւններ ու պետութիւններ, յանուն Հայաստանի եւ հայ ժողովուրդի փրկութեան նուիրական գործին, անոր անպատմելի ողբերգութեան տարիներուն....ի հակադրութիւն սառնասիրտ դաժանութեամբ յառաջ տարուող պետական քաղաքականութեանց...:

Գիրքը կը բաղկանայ երկու գլխաւոր մասերէ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ կ'ընդգրկէ այն տեղեկագրութիւններն ու վկայագրութիւնները, զորս օտարագրի միսիոնարներն ու անոնց գործակիցները, երիտթուրքերու իշխանութեան խիստ գրաքննութեան պայմաններուն տակ, արձանագրած են՝ Ամերիկեան Միսիոնարական Պորտին կողմէ հրատարակուած ամսագրին՝ «Missionary Herald»-ին մէջ 1915-1918թթ., ուր Հայոց Յեղասպանութեան եւ տեղահանութեանց մասին կան այնքան սարսռալից, այլեւ աղբիւրագիտական տեղեկութիւններ, որոնց անգլերէնէ հայերէն թարգմանութիւնը ջանասիրաբար կատարած է Տիկ. ԵՒՆԻԿԷ ՏՕԳՈՒԶԼԵԱՆ-ԵԱԳՈՒՊԵԱՆ:

Ընթերցողը հիացումով եւ երախտագիտութեամբ կը համակուի՝ գիրքին մէջ յիշատակուած այն բոլոր միսիոնարներուն եւ անոնց գործակիցներուն հանդէպ, որոնք ի հեճուկս թուրքին յարուցած մշտական խոչընդոտներուն, ի գործ են դրեր ամէն ճիգ ու ջանք՝ ինչ-որ կերպով սատար կանգնելու մեր ժողովուրդին, անոր Գողգոթայի ճանապարհին վրայ..., մերթ իրենց հայանպաստ քարոզչական աշխատանքով, մերթ ալ ուղղակի նպաստելով անոր կրթա-դաստիարակչական, հոգեմտաւոր զարգացման ու լուսաւորութեան գործին, անոր գոյատեւման պայքարին, ի մասնաւորի որբահաւաքի եւ որբախնամի նախախնամական



աշխատանքին: Իրագել կը դառնանք այն փաստին, որ Ամերիկեան Պորտը, որ նաեւ զլիաւոր կազմակերպիչն էր Մերձաւոր Արեւելքի Նպաստի Յանձնախումբին, բազմաթիւ միջոցառումներով ու գործակցութիւններով, անընդհատ պիտի շարունակէր իր նպաստը, նախ՝ Արեւմտեան Հայաստանի ու Հայկական Կիլիկիոյ մէջ, ապա՝ տեղափոխուելով Կովկաս եւ Արեւելեան Հայաստան, պիտի շարունակէր իր ծառայութիւնները հոն եւս, մինչեւ Խորհրդային Հայաստանի առաջին տարիները, ու ապա նաեւ՝ Միջին ու Մերձաւոր Արեւելք, ուր իր առաքելութիւնը պիտի շարունակէր յաջորդ տասնամեակներուն ալ:


Այսօր, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, ժամանակն է, ինչպէս կը գրէ յարգելի հեղինակը իր «Փոխան-Յառաջաբախ»ն մէջ, «որ հայ պատմագրութիւնը իր պարտքը հատուցանէ եւ արդարութիւն ընէ Աստուծոյ Խօսքով զինուած այս ֆիտայիներուն հանդէպ», քանզի՝ ինչպէս ի յայտ կու գայ «Միշըների Հերըլտ»ի տեղեկագրութեանց էջերուն մէջ, օտարազգի միսիոնարներէն շատեր աւելի քան ֆիտայիներ են եղած՝ նուիրուած հայափրկութեան, հայակրթութեան, հայապահպանման եւ հայ արդար դատի բարձրաձայնումի սուրբ գործին...: Այդ միսիոնարները դեռ 19-րդ դարուն ոտք դրած են Օսմանեան կայսրութեան մէջ աւետարանչական առաքելութեամբ եւ տասնամեակներ շարունակ, ամբողջական նուիրումով ծառայէր են հայ ժողովուրդին, երբեմն մինչ ի մահ զոհաբերուելով անոր փրկութեան ի խնդիր: Դոկտ. Երուանդ Քասունի յատկանշականօրէն կը նշէ, որ Միսիոնարութիւնը միշտ ալ պահեց իր լաւատեսութիւնն ու հաւատքը, որ Դաշնակից պետութիւններու յաղթանակը պիտի երաշխաւորէր բռնագաղթուած ժողովուրդին տունդարձը եւ աւերուած հայրենիքին վերաշինութիւնը: «Պտուղը ամբողջովին չէ փճացած: Բաւական կորիզ կը մնայ, եւ այդ կորիզները կամ պիտի վերացանտին իրենց նախկին դաշտերուն մէջ, կամ ապագային պիտի հունձք տան Արարատ Լեռան հովանիին տակ», կը կարդանք «The Missionary Herald»-ի Յուլիս 1916-ի տեղեկագրութեան մէջ: Սրտայոյզ ու սրտակեղեք են անոնց տեղեկագրութիւնները, ուր անոնք հարազատի մը չափ ու դեռ աւելի կը կիսեն հայուն ցաւն ու տագնապը, կը սրբեն անոր արցունքները, կը կապեն անոր վերքերը, կը կերակրեն ու կը պատսպարեն զայն, գորովանքով հոգ կը տանին որբացած մանուկներուն մանաւանդ, քանզի կը հաւատան՝ «Այս երեխաներուն մէջ է որ հայ ազգի գոյատեւումի յոյսը կապուած է»: (The Missionary Herald, Մայիս 1917)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ամբողջութեամբ յատկացուած է քննական ակնարկով ներկայացնելու այն անձնաւորութիւնները՝ օտարազգի թէ հայազգի, աշխարհագրական վայրերը, դէպքերը եւ թուականները, որոնք անմիջականօրէն կ'առնչուին Առաջին Մասին հետ, եւ միահիւսուելով Ա. Մասին մէջ տեղ գտած վկայագրութեանց հետ, հնարաւորութիւն կ'ընձեռեն, որ ընթերցողը համընդգրկուն ընկալումը ունենայ 1894-1923 ժամանակաշրջանի պատմական հոլովոյթներուն, որոնք էական են լրիւ ըմբռնելու Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայրենահանումը, հուսկ վերապրումը մեր ժողովուրդի մնացորդացին: Քննական այս ուսումնասիրութիւնը հիմնաւորուած է՝ սկզբնաղբիւրներու, մենագրութիւններու եւ յօդուածներու հարուստ մատենագիտութեամբ մը, ինչ որ զայն կ'ընծայէ անաչառ, անկողմնակալ եւ հաւաստի աշխատասիրութիւն մը, յոյժ գնահատելի ու երախտարժան...:

Յայտնապէս, Դոկտ. Երուանդ Քասունիի միտք բանին է՝ իր քննական ակնարկով, 1915-1918-ի տեղեկագրութիւններն ու վկայագրութիւնները ներկայացնել պատմական աւելի համապարփակ շրջագիծէն ներս, իրադարձութեանց կամ եղելութիւններու նախընթաց ու յետագայ ժամանակագրութեամբ, իրողութեանց հոլովոյթն ու ընթացքը պատմական լայն համապատկերին մէջ դնելու համար: Այսպէս, ան իր քննական ակնարկը կը սեւեռէ՝ 1915-

1918 ժամանակաշրջանը կանխող տարիներուն, ներառելով 1894-96-ի Համիտեան կոտորածները, 1909-ի Կիլիկիոյ Աղէտը, ապա՝ յետագայ տարիներուն, մինչեւ Հայաստանի Խորհրդայնացումը, մինչեւ Լոզան:

Ընթերցողը՝ զլուխ առ զլուխ եւ էջ առ էջ, համապարփակ ընկալումը կ'ունենայ հայ ժողովուրդի Ցեղասպանութեան, զայն նախորդող եւ յաջորդող տարիներու իրադարձութեանց...: Արդարեւ, Հայկական Հարցը լուծելու միջոց էին Համիտեան կոտորածներն ու Ատանայի ջարդերը: Իսկ Համաշխարհային Ա. պատերազմը լաւագոյն առիթը պիտի ընծայէր համաթուրանական Իթթիհատականներուն՝ գործադրութեան դնելու հայ ժողովուրդին Ցեղասպանութիւնը: 20 Յունուար 1913-ին, Էնվեր կ'առաջնորդէր օրուան



կառավարութեան տապալումը եւ իշխանութեան կը բերէր Էնվեր-Թալէաթ-Ճեմալ եռեակը, Թուրքիա կը զինակցէր Գերմանիոյ՝ Համաշխարհային Ա. Պատերազմին, զոր պատեհ առիթ նկատելով, բռնապետական եռեակը կը հրահանգէր 1915-1918թթ. Հայ ժողովուրդի Ցեղասպանութիւնը: Էնվեր յետոյ պիտի յոխորտար. «Առանց թուրք զինուորի մը կորուստին, ես ոչնչացուցի թրքութեան թշնամի հայերը»: Այնուհետեւ դարձեալ, թրքական նպատակի հետապնդումը կը շարունակուէր...սակայն, Սարդարապատի մէջ, «Հայերի սխրագործութիւնները կանխեցին Երեւանի, Արարատեան դաշտի, Մեւանի աւազանի շրջանների զաւթումը թուրքերի կողմից»:

Պարտութեան մատնուած թուրքերը տակաւին իրենց կամքը կը թելադրէին՝ սեփական ժողովուրդէն կտրուած, թրքական բանակին դէմ տարուած Սարդարապատեան յաղթանակին անիրազեկ, Թիֆլիսի Հայ Ազգային Խորհուրդի ղեկավարութեան.....կը ստորագրուէր Պաթումի

պայմանագիրը, որով Հայաստանի Հանրապետութիւնը կը պարփակուէր 9000 քառ. Քլմ. տարածութեան մէջ, 6 քլմ. երկաթուղիով եւ 324,285 բնակիչով: Աւելի ետք, Հայկական Պատուիրակութիւնը միշտ ալ պիտի մնար աղէքսողի դիրքին մէջ: Իսկ «Թուրքերու կողմէ շնորհուած Հայաստանի Հանրապետութիւնը պահելու համար, Աւ. Ահարոնեան Թալաաթի առաջ մինչեւ իսկ պիտի զիջէր Արեւմտահայաստանը, ըսելով. «Ձեզ կը վստահեցնեմ որ Թուրքիոյ հայերու վիճակները մեզ երբեք չեն հետաքրքրեր: Մենք եկանք միայն խորհրդակցելու համար Կովկասեան հայերու հանրապետութեան մասին...»:

10 Օգոստոս 1920-ին կը ստորագրուէր Մեւրի դաշնագիրը, որ կը ճանչնար ԱՄՆ նախագահ Ու. Ուիլսոնի՝ անկախ Հայաստանի համար գծած սահմանները: Սակայն....«Յուլ մը մուտք գործեց Մեւրի յախճապակիի խանութը եւ փշրեց ամէն ինչ: Յուլը՝ Մուսթաֆա Քեմալ Փաշան էր, աւելի ուշ, ծանօթ՝ Քեմալ Աթաթուրք անունով»: Հետեւաբար, պատերազմին պարտուած Թուրքիան պիտի կարենար ոտքի ելլել, եւ Քեմալական Թուրքիան պիտի ուրանար Մեւրի Դաշնագիրը Լոզանի մէջ, ուրանալով Հայ Դատի եւ Արեւմտեան Հայաստանի գոյութիւնն իսկ: Իսկ յաղթական Դաշնակիցներ, արեւմտեան շահադէտ ու



նենգ դիւանագիտութեամբ, մոռացութեան պիտի տային իրենց փոքր դաշնակիցը, անտեսելով անոր արդար Դատը եւ իրենց մէջ պիտի բաժնէին պատերազմական աւարը...Կիլիկիան ալ յանձնելով Քեմալականներուն՝ թուրք-ֆրանսական դաւադիր բանակցութիւններով....:

Գիրքի ընթերցման աւարտին, ոչ միայն լայնահորիզոն ընկալումը կը ձեռքբերես հայ ժողովուրդի Գողգոթայի ճանապարհին, այլեւ խորունկ երախտապարտութեամբ կը համակուիս բոլոր անոնց նկատմամբ, որոնք գերագոյն նուիրումով ու անմնացորդ սիրով՝ իրենց առաւելագոյնը մատուցել են հայափրկութեան եւ Մեծ Եղեռնէն ճողոպրած տարագիր մնացորդացի վերականգնումի սրբազան գործին: Այսպէս՝ Բարի Սամարացիի իրենց ձեռքը երկարել են հայութեան՝ «Միշըների Հերըլտ»ին մէջ տեղ գտած անձնդիր, խորապէս մարդասէր ու հայասէր միսիոնարները, անհատներն ու կազմակերպութիւնները.....եւ տակաւին Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի, Իրաքի եւ Եգիպտոսի ասպնջական իսլամ եւ քրիստոնէայ արաբ ժողովուրդները, որոնք իրենց տան դռներն են բացել հիւրընկալելու բռնագաղթուած տարագիր հայը, անոր շնորհներ են աշխատանքի, ուսման ու տուն-տեղ ըլլալու արտօնութիւն, պարգէներ են քաղաքացիութեան իրաւունք ու վերահաստատել են անոր մարդկային արժանապատւութիւնը...., ինչպէս կը գրէ հեղինակը իր գիրքի ներածութեան մէջ: Եւ ասիկա ի հակադրութիւն օսմանեան, երիտթրքական թէ քեմալական Թուրքիոյ վարած հայաջինջ քաղաքականութեան եւ երոպական շահադէտ ու շահամոլ դիւանագիտութեան....:

Գիրքը անաչառ, կշռադատ վկայութիւնն է մեր ժողովուրդի պատմութեան ճակատագրական մէկ հատուածին...., որ կը դառնայ միաժամանակ ուսանելի դաս ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՈՒՆԿ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ հայ ներկայ եւ գալիք սերունդներուն համար: Նմանապէս՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐԱԳԻՏԱԿԱՆ հազուագիւտ մատեան է ան, զոր պատմաբանն ու հետազօտողը կրնան լիովին օգտագործել, կարելի ճշգրտութեամբ կառուցելու համար՝ այս թեմային հետ առնչակից իրենց թեզը: Իսկ հայ հանրութեան համար, ընդհանրապէս, անիկա կրնայ ծառայել որպէս ՈՒՂԵՆԻՇ ԵՒ ՈՒՂԵՑՈՅՑ՝ իր ազգային-հաւաքական ապագան կերտելու համար:

Երախտարժան այս ազգօգուտ ու հայանուէր աշխատութեան համար, մեր խորագգած շնորհակալութիւնները կը յայտնենք յարգելի Դոկտ. Փրոֆ. Երուանդ Քասունիին, իրեն մաղթելով քաջառողջութիւն, ստեղծագործական բեղուն աշխատանք, անխոնջ եռանդ ու կորով:

ՎԱՐՁՔԴ ԿԱՏԱՐ, ՅԱՐԳԵԼԻ ՄՇԱԿ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՈՍԿԵՂԱՐԻ ԱՆԿՐԿՆԵԼԻ ՇՔԵՂՈՒԹԻՒՆԸ Էդուարդ Ա. Գրիգորեան

ՓԱՅՏԻ ԽԱԲԿԱՆՔՈՎ՝

ԱՀԸ ՃԱՇԱԿԵՑԻՆՔ՝

ԲԱՅՑ ԿԵՆԱՅ ՓԱՅՏԻՑ

ՆՈՐՈԳՈՒԵՑԻՆՔ ԲՈԼՈՐՄ

ՓԱ՛ՌՔ ՔՈ

ՅԱՐՈՒԹԵԱՆԸ, ՏԷ՛Ր...

ՄՈՎՍԷՄ ԽՈՐԵՆԱՅԻ - ՕՐՀՆԵՐԳԵՐ

Առաջին դէպքը չէ, երբ մեր ժողովրդի համար աշխարհաքաղաքական եւ բարոյա-
հոգեբանական դժուարագոյն պայմաններում մեզ օգնութեան ձեռք է մեկնում
հակասութիւններով ու յաղթանակներով, նահանջներով ու ազգային-ազատագրական
պայքարի աննախադէպ վերելքներով լի մեր պատմութեան այն շրջանը, որ անսքող
հպարտութեամբ Ոսկեղար ենք կոչում մենք:



Եւ իսկապէս՝ մեր բազմադարեայ պատմութեան եւ ո՛չ մի շրջան
այդքան մեծ խորհուրդ, մարդկային հանճարի անկասելի սլացք եւ
ամենագոր ժամանակից վեր կանգնելու օրինակներ չի
պարունակում իր մէջ, որքան Ոսկեղարը:

Թերեւս այդ առասպելական, բայց նաեւ խիստ «հողեղէն»
հաւաքական հայ հանճարի բիրեղացումն է պատճառը, որ
որքան կանոնակարգում եւ աւելանում են պատմական այդ
շրջանի քաղաքական ու պատմա-բանասիրական հմուտ
վերլուծութիւններն ու ուսումնասիրութիւնները՝ նոյնքան եւ
աւելի մեծանում է այդ ուղղութեամբ դեռեւս կատարուելիք
գիտական ու մշակութային լուրջ ուսումնասիրութիւնների
պահանջն ու պահանջարկը:

Նկատի ունենալով մեր օրերի համամարդկային շատ ու շատ իրական արժեքների անկումն
ու ինչ-որ տեղ նաեւ միտումնաւոր աղճատման փաստերը՝ յոռետեսներին «պահանջ ու
պահանջարկ»-ի հետ կապուած խորհուրդ չի տրւում չարախնդալ կամ քմծիծաղել:

Մեր պատմութեան Ոսկեղարը շատ աւելի զօրեղ մարտահրաւերների է դիմակայել եւ
անյաղթահարելի թուացող շատ արգելքներ է յաղթահարել:

Այս մէկն էլ կ'անցնի:

Վկայ՝ այն եղերական ժամանանակները, երբ անմահ Կոմիտասն իր հանճարով ու ծով
համբերութեամբ մաքրում էր հայոց աստուածային շարականների վրայ նստած դարերի
փոշին, երբ Պարոյր Մեակը գրում էր իր «Եւ այր մի՛ Մաշտոց անուն...» պոէմը եւ Գրիգոր
Խանջեանը ստեղծում էր «Վարդանանք» մեծակտաւ, քանքարաւոր ստեղծագործութիւնը...

... Մեր ժամանակն անշուշտ շահեկանօրէն տարբեր է նրանց ապրած ժամանակներից,
թէպէտ բարոյական, հասարակական ու մշակութային ճշմարիտ արժեքների նոյնքան



Ճշմարիտ գնահատման առումով տարբերություններ գրեթե չկան: Եթե կան, ապա մեկ բանով՝ ազատ եւ անկախ Հայաստանում ճշմարիտ արժեքների խեղաթիւրման համար մենք բացի ինքներս մեզնից այլեւս ո՛չ ոքի մեղադրել չենք կարող:

Չեն հասկանայ: Ծիծաղելի կը լինի ու նաեւ ամօթալի:

...Ու որպէսզի այդպէս չլինի, հետաքրքրական գուգադիպութեամբ, աւելի ճիշդ օրինաչափութեամբ, մենք նորից անդրադառնում ենք ամենափրկիչ Ոսկեդարին՝ այս անգամ բանասիրութեան դոկտոր եւ բազմահմուտ գիտնական Հենրիկ Բախչինեանի աշխատասիրած եւ «Սարգիս Խաչենց. Փրինթինգտոն» հրատարակչությունների կողմից ներկայացուած Մովսէս Խորենացու, Ստեփանոս Սիւնեցու եւ Յովհան Մանդակունու օրհներգերի համապարփակ եւ չափազանց արժեքաւոր ժողովածուի տեսքով:

Ի դէպ, հայոց աստուածային շարականների կամ օրհներգերի այս ամբողջական ու համապարփակ աշխատասիրությունը, որն ամփոփ կերպով ներկայացնում է մեր վաղ միջնադարեան բանաստեղծութեան ողջ շքեղությունն ու հմայքը, վաստակաշատ գիտնականի եւ մեծավարկ հրատարակչատան սերտ համագործակցութեան առաջին պտուղը չէ: Առաջինը 2010-ին լույս տեսած «Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ, Օրհներգեր» աշխատությունն էր, որով սկիզբ առաւ Ոսկեդարի մշակութային անկրկնելի ժառանգությունը ընթերցողների բազմաշերտ լսարանին առաւել մատչելի եւ ամբողջական ձեւով ներկայացնելու առաքելությունը:

Այս մասին անկասկած դեռ շատ կը գրուի: Գրուելու են գիտական յօդուածներ եւ վերլուծություններ, հնչելու են շոյալ եւ անվերապահօրէն արժանի գնահատականներ, սակայն անգամ այս պահին, երբ դեռ թարմ են գրքից ստացուած տպաւորությունները, ակնյայտ է մի շատ կարեւոր բան՝ Հենրիկ Բախչինեանի այս ձեռնարկը վաղ միջնադարեան օրհներգութեան մեր բանասիրութեան մէջ մինչ օրս հրատարակուած թերեւս ամենակատարեալ ու ամբողջական հաւաքածուն է:

Սրանք գովեստի խօսքեր չեն բնաւ: Որեւէ ճշմարիտ ու վաստակաշատ գիտնական դրա կարիքն ամենեւին չունի: Սրանք առաւելապէս սովորական ընթերցողի եւ հայկական մշակութային ծովածաւալ ժառանգութեամբ մտահոգ հայ մարդու շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսքեր են, որ վարձահատոյց լինելու միջոց է սոսկ, գրականագէտի յիշատի տքնաջան աշխատանքի դիմաց...

«Մեսրոպ Մաշտոցին եւ Սահակ Պարթեւին վերագրուած օրհներգերը (շարականներ) առանձին գրքով արդէն ներկայացրել ենք մեր հանրութեանը,- գրքի առաջաբանում գրում է Հենրիկ Բախչինեանը ու շարունակում,- սոյն հատորով, որ նախորդի անմիջական շարունակությունն է, ներկայացնում ենք Սահակ-Մեսրոպեան դպրոցի երեք օրհներգուներին՝ Մովսէս Խորենացուն, Ստեփանոս Սիւնեցուն եւ Յովհան Մանդակունուն: Երկու ժողովածուները փաստօրէն ամփոփում են հինգերորդ դարի հայ ողջ օրհներգությունը, որ ներկայացնում է ժամանակի անհատական քերթությունը: Ըստ այսմ, ընթերցողն առաջին անգամ կարող է ամբողջաբար հաղորդակցուել մեր վաղմիջնադարեան բանաստեղծների հարուստ ժառանգութեանը»:

«Առաջին անգամ» արտայայտությունն, ի դէպ, գրքում ամենեւին էլ մուգ (bold) տառերով չի



գրուած: Դա արուած է մեր կողմից, որպէսզի մատնացոյց արուի գիտական այն խոր ու բազմաբովանդակ մօտեցումը, այն տքնաջան աշխատանքը, որին իր աւելի քան համեստ առաջաբանի մէջ ոչ մի բառով չի անդրադարձել Հենրիկ Բախչինեան- գրականագէտը: Թերեւս ճիշդ է արել, որովհետեւ նրբագգաց ընթերցողի համար ամէն ինչ պարզ կը դառնայ ընթերցանութեան առաջին իսկ էջերից:

Գրքի կարեւորագոյն առանձնայատկութիւններից եւ անվիճելի արժանիքներից է նաեւ (գոնէ մեր օրերում) ընթերցողին օրհներգերը մատուցելու ընտրուած ձեւը՝ լաւագոյն ձեւը: Ոսկեղենիկ գրաբարի կողքին գետեղուած են նաեւ աշխարհաբարի որակեալ եւ բնագրին բծախնդրօրէն մօտեցուած տարբերակները: Ինչ խօսք, որ այդպիսով Ոսկեղարի մշակութային գոհարները շատ աւելի մատչելի եւ դիւրընկալելի են դառնում (ցաւօք սա է իրականութիւնը) ընթերցողների անհամեմատ լայն շրջանակների համար: Լրջագոյն գիտնականի բարեխղճութեամբ եւ պատասխանատուութեամբ արուած ծանօթագրութիւններն ու ծաւալուն բացատրական յաւելումները կասկածի նշոյլ իսկ չեն թողնում առ այն, որ ցանկութեան դէպքում ուշադիր ընթերցողը կարող է յայտնաբերել եւ մասնիկը դառնալ այն շէնշող աշխարհի, որ մենք սովորաբար վաղմիջնադարեան հայ բանաստեղծութիւն կամ Ոսկեղար ենք անուանում:

Յ.Գ. Աշխատութիւնների տպագրութեան շնորհակալ գործին աջակցելու համար «Հայկական ծրագրեր» ընկերութեանը երախտիքի մեր խօսքն ուղղելուց առաջ եւ յետոյ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մէկ այլ կարեւոր փաստի եւս, որ այսօր դարձել է մեր իրականութեան թերեւս ամենաշահարկուող թեմաներից մէկը: Երկրի բարձրագոյն իշխանութիւնից մինչեւ ուսանողական հաւաքներ, մտաւորական ժողովներից մինչեւ ոստիկանական տարատեսակ ամփոփագրեր, լրատուամիջոցներից մինչեւ բազմազան ինքնակոչ հասարակական

կազմակերպութիւններ օրնիբուն համախմբման եւ ինքնամաքրման մասին են խօսում:

Ե՛ւ... Ինքնամաքրուե՛նք պարոնայք, ի՞նչն է խանգարում, մանաւանդ հիմա, երբ մեզ օդ ու ջրի նման անհրաժեշտ է վերադարձ դէպի մեր մշակութային ու հոգեւոր արմատները, իսկ դէպի ինքնամաքրում տանող ճանապարհի կամուրջներից մէկն էլ բանասիրութեան դոկտոր Հենրիկ Բախչինեանի ջանասեր աշխատասիրութեամբ մէկտեղուած հայոց անմահ շարականներն են...

Պէյրութ, 2012

Ադրիւր՝ ԱԶԳ- ՄՇԱԿՈՅԹ

Գիտաժողով՝ «Թանգարանը եւ գրաւոր հաղորդակցութիւնը» թեմայով

2012. Հոկտեմբեր 20-էն 25-ը Երևանի՝ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտի մէջ, պիտի կայանայ Թանգարաններու միջազգային խորհուրդի Կրթութիւն եւ մշակութային գործունէութիւն միջազգային կոմիտէի (ՄԵԿԱ) տարեկան 41-րդ գիտաժողովը: «Թանգարան եւ գրաւոր հաղորդակցութիւն. աւանդոյթ եւ նորարարութիւն» խորագրով գիտաժողովի նախաձեռնողներն ու կազմակերպիչներն են ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտէն եւ «Թանգարանների աշխատողների եւ բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ն՝ ՀՀ մշակոյթի նախարարութեան եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցութեամբ:



Գիտաժողովը իրականացուելու է UNESCO-ի կողմէ՝ Երեւանը 2012-ին գիրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու միջոցառումներու շրջանակէն ներս:

Կրթութեան եւ մշակութային գործունէութեան կոմիտէն ԻԿՕՄ-ի կազմի մէջ մտնող ամենահին եւ ամենամեծ միջազգային կոմիտէներէն է, որ ունի շուրջ 1300 անդամ, որոնք աշխարհի տարբեր թանգարաններու թանգարանային կրթութեան, մանկավարժութեան եւ մշակութային

գործունէութեան ակնառու մասնագէտներ են: Կոմիտէի տարեկան գիտաժողովները վերջիններուս համար մասնագիտական հանդիպման առիթ են, որուն ընթացքին թանգարանագիտական ոլորտէն ներս առկայ տարբեր հարցեր ու խնդիրներ կը քննարկուին:

«Թանգարանը եւ գրաւոր հաղորդակցութիւնը. աւանդոյթ եւ նորարարութիւն» խորագրով գիտաժողովը 5 օրուան մէջ կը վերածուի մի ինքնատիպ մասնագիտական հարթակի, որտեղ միջազգային մակարդակով կը քննարկուին թանգարաններուն մէջ ներկայացուող տարաբնոյթ տեքստերուն առնչուող խնդիրներ: Գիտաժողովի շրջանակներէն ներս, հայ մասնագէտներու համար տեղի կ'ունենան վարպետաց դասեր, որոնք կը վարեն աշխարհի հեղինակաւոր թանգարաններու մասնագէտները:

Գիտաժողովի ծրագիրը կ'ընդգրկէ գիտական զեկուցումներ, քննարկումներ, գործնական պարապմունքներ, ինչպէս նաեւ ճանաչողական ուղեւորութիւններ դէպի հայաստանեան թանգարաններ ու պատմամշակութային տեսարժան վայրեր: Գիտաժողովի հիմնական զեկուցողները ճանաչուած մասնագէտներ են ինչպէս աշխարհի հեղինակաւոր թանգարաններէն (Լուվր, Բրիտանական թանգարան եւ այլն), այնպէս ալ Հայաստանէն:

Գիտաժողովին մասնակցելու համար Երևան է ժամանելու նաեւ ԻԿՕՄ-ի նախագահ Հանս Մարթին Հինկը:

Գիտաժողովի համար ստեղծուել է առանձին կայք՝ ceca12.icom-armenia.org, որուն միջոցով



կը տարածուի տեղեկատուութիւն ու կ'իրականացուի մասնակիցներու գրանցումը: Արդէն 30 երկիրներու 50 թանգարաններէն գրանցուել է շուրջ 70 պատուիրակ:

Գիտաժողովը կայանալու է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու թանգարան ինստիտուտի մէջ, իսկ գործնական պարապմունքներն ու քննարկումները, ըստ համապատասխան թեմաներու, կը կազմակերպուին Հայաստանի շարք մը թանգարաններու մէջ:

Գիտաժողովը նաեւ հեռարձակուելու է համացանցային online ռեժիմով, որ հնարաւորութիւն կ'ընձեռէ բոլոր ցանկացողներուն հեռակայ մասնակցելու թանգարանային մշակոյթին նուիրուած այս ինքնատիպ միջոցառման:

Տեսակէտ

Ալիեւը Չպէտք է Մնայ Անպատիժ (Բաց Նամակ Հայաստանի Հանրապետութեան Նախագահին)

Սոնա Արշունեցի,

Հայ ժողովուրդը դարձեալ բախուեց անարդարութեան պատին. Պոտափեշտում, ՆԱԹՕ-ի հովանու ներքոյ անգլերէնի դասընթացների գործուղուած հայ սպայ Գուրգէն Մարգարեանին գազանաբար սպաննած (կացնահարած) ատրպէյճանցի Ռամիլ Սաֆարովը, որն Հունգարիայի արդարադատութեան կողմից 2006թ.



դատաւարտուեց ցմահ բանտարկութեան, ազատ արձակուեց ու յանձնուեց Ատրպէյճանին...

Դէ պարզ է, որ այս քայլը գործարք էր ու մեծ կաշառքի գնով իրականացուեց: Այս տարիների ընթացքում լրատուամիջոցները յաճախ էին անդրադառնում Ռամիլ Սաֆարովին Ատրպէյճան տեղափոխելու ջանքերին, իբր շարունակի պատիժը կրել Ատրպէյճանում: Բայց այդ ե՞րբ է եղել, որ թուրքի բերանից ճիշդ խօսք դուրս գայ, առաւել եւս, երբ խօսքը վերաբերում է «ազգային հերոս» հռչակուածին: Ի՞նչ է անսպասելի՞ էր Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից Ռամիլ Սաֆարովի ազատ արձակումը, ի

հարկէ՛ ոչ: Թէեւ խոստովանեմ, չափից շատ էինք վստահում Հունգարական արդարադատութեանը:

Վերջապէս առաջին անգամ մեր իշխանութիւնները բարբառեցին՝ Նախագահը աշխարհին ասաց, որ անկախ պետութիւն ենք.

Այսօր, երբ աշխարհի շատ պետութիւններ, անգամ Ամերիկան, Ռուսաստանը... շատ առաջատար լրատուամիջոցներ դատաւարտում են Հունգարիայի դաւադիր քայլը՝ Ռամիլ Սաֆարովի յանձնումը Ատրպէյճանին ու Ատրպէյճանի համաներում շնորհելը, մեր



իշխանութիւնները չունեցան դիւանագիտական այնքան հոտառութիւն, այնքան արհեստավարժութիւն, որ այս կատարուածի արժանի պատասխանը տան ոչ միայն Հունգարիային, այլ հենց Ատրպէյճանին: Տարիներ շարունակ ես այդ մասին գրում ու գրում եմ, որ Հայաստանը պէտք է ճանաչի Արցախի անկախութիւնը, կամ էլ վերամիաւորումը մայր հայրենիքին, (քանզի առիթներ շատ են եղել. այդ մասին գրել եմ իմ հեղինակած յօդուածներում. www.louysworld.com/archives/8303) իսկ այս պարագայում, երբ մեր իշխանութիւնները, Նախագահ Սերժ Սարգսեանի անմիջական գլխաւորութեամբ ի լուր աշխարհի յայտարարեցին դադարեցնել դիւանագիտական յարաբերութիւնները Հունգարիայի հետ. մեր բողոքն միակողմանի արտայայտուեց... մենք նորից դիւանագիտական պարտութիւն կրեցինք, քանզի հերթական անգամ երկաթը տաք-տաք ծեծելու առիթը բաց թողնուեց. այդ քայլին՝ (Հունգարիայի հետ դիւանագիտական խզումից յետոյ) պէտք է անմիջապէս յաջորդէր միւս շատ կարեւոր քայլը.

մեր թշնամին Ատրպէյճանն է ու նրան պէտք է առաջին համարժէք պատասխանը տրուէր:

Այս պարագայում՝ պատժելով Հունգարիային, Ալիեւն անպատիժ մնաց.

Այն սա Հայկական կողմի ամենամեծ խայտառակ դիւանագիտական պարտութիւնն է.

Ատրպէյճանին մեր համարժէք պատասխանը կը լինէր Արցախի ճանաչումը եւ վերամիաւորումը մայր հայրենիքին: Այս ֆոն-ի վրայ Հայկական կողմի այդ համարձակ քայլը համարժէք ու արդարացուած կը լինէր: Միջազգային կառոյցների կողմից էլ ճիշդ կ'ընկալուէր...

Պէտք էր ու հիմա էլ ուշացած չէ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼ,

որ Հայաստանը պաշտօնապէս դադարեցնում է Մինսկի խմբի շրջանակներում տարիներ ի վեր ձգձգուող, Ղարաբաղի կարգավիճակի շուրջ՝ բնոյթով իրենց սպառած բանակցութիւնները, ու ճանաչում է Ղարաբաղի անկախութիւնը, քանզի մարդասպանին արդարացնող Ատրպէյճանի Նախագահ Ալիեւի հետ բանակցությունների սեղանի շուրջ նստելու, բանակցելու ոչինչ չունի Հայաստանի նախագահը: Մի պետութեան ղեկավար, որը կարողանում է լկտիաբար հերոսացնել մարդասպանին ու ցմահ բանտարկութիւնը համաներմամբ փոխարինել, նման մակարդակի նախագահի հետ երբեք հնարաւոր չէ ընդհանուր յայտարարի գալ:

Ուստի՝ Հայաստանը դադարեցնում է Մինսկի շրջանակներում տարիներ ի ձգուող անպտուղ բանակցութիւնները եւ իրեն իրաւունք է վերապահում, որպէս պատերազմում յաղթած կողմ, պատերազմական բոլոր կանոնների համաձայն, Հայաստանը, որպէս Արցախի հայ ազգաբնակչության անվտանգութեան երաշխաւոր՝ ճանաչել Ղարաբաղի անկախութիւնը ...



Մարդասպան, սադիստ Ռամիլ Սաֆարովին «ազգային հերոս» հռչակած պետութիւնը երբեք չի կարող դառնալ Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան անվտանգութեան երաշխաւորը, մի պետութիւն, որտեղ ոճրագործ Սաֆարովների նոր հետեւորդներ են ծնւում ու դաստիարակւում ... ու ծնւում են դեռ, դահիճներ են ծնւում, դաւաղիր խարդախ թուրք մայրերի արգանդից աւաղ...



Մի պետութիւն, որտեղ մարդատեացութիւնն ու հայատեացութիւնն է իշխում, ինչպէ՞ս կարող է Ղարաբաղը լինել Ատրպէյճանի կազմում ու հայ ազգաբնակչութեան անվտանգութիւնը վստահել վրիժառու մարդասպաններին...

Եկել է ազգի համար ճակատագրական որոշումներ ընդունելու պատմական ճիշդ պահը եւ այն բաց թողնելը յանցագործութիւն է.

Նախագահից՝ Սերժ Սարգսեանից պահանջում է անյապաղ իմաստուն ու համարձակ որոշումներ կայացնել. ճանաչել Ղարաբաղի անկախութիւնը՝ աւելի ճիշդ վերամիաւորումը մայր հայրենիքին :

Ինչպէս 2008 թուականին այդ համարձակ քայլն արեց Ռուսաստանը, ընդունելով Աբխազիայի ու Օսիայի անկախութիւնը: Եթէ Հայաստանը չի ճանաչում Ղարաբաղի անկախութիւնը, ուրիշ պետութիւններից ինչպէ՞ս կարող ենք պահանջել: Այս օրերին ես անհամար քան սպասում էի, որ նախագահի յաջորդ քայլը կը լինէր Ղարաբաղի ճանաչումը, որից աւելի համարժէք պատիժ Ատրպէյճանին չէր կարող լինել, բայց սխալուեցի. Նախագահը Հունգարիային պատժելուց յետոյ լուռ է. երեւի բաւարարուած է միջազգային կառոյցների կողմից կատարուածը դատապարտող արձագանգներով:

Կարծում եմ, որ շատ պետութիւններ այս ֆոն-ի վրայ կարող է եւ միանան մեզ ու ճանաչեն Ղարաբաղի անկախութիւնը:

Ինչո՞ւ պէտք է Ատրպէյճանը օրից չոր դուրս գայ, ինչո՞ւ . մենք չպէտք է թոյլ տանք...

Աստուած մեր Նախագահին համարձակութիւն տայ կատարելու դիւանագիտական այս պատմական կարեւորագոյն քայլը, ա՛յ այդ ժամանակ կը զգանք, որ մեր նախագահն իրօք արժանի է երկրորդ, երրորդ անգամ վերընտրուելու ու վայելելու մեր ժողովրդի սէրն ու յարգանքը...

Այս պարագայում լռելը, կատարուածը հանդուրժելը դատապարտելի է. երկաթը տաք-տաք են ծեծում. հարկաւոր է անյապաղ գործել.

Ժամանակը ոսկի է.

Հայ ժողովուրդը միշտ էլ եղել է աշխարհի խարդախ խաղերի գոհը եւ ժամն է, որ ձերբագատուի խոնարհ ծառայի կարգավիճակից:

Յարգելի նախագահ Սերժ Սարգսեան, յաճախ եմ լսում ձեր հայրենասիրական ելոյթները. եկել է այդ աստեղնային պահը, ազգին ապացուցելու Ձեր նուիրութիւնը առ հայրենիք ոչ թէ խօսքով, այլ՝ գործով:

Աստուած մեր ազգին պահապան:

Հայկական Կուսակցութիւնները Ընելիք Ունի՞ն ...Անխուսափելի Հարցադրումը

Պարոյր Աղապաշեան,

Պէյրութ, 5 Սեպտեմբեր 2012

Խնդրե՛մ, վերջին տարիներուն, ինքզինք պարտադրող ուրիշ, բայց նոյնքան հրատապ հարցում մը, որ բարձրաձայն թէ այլապէս կը հնչուի ու կը լսուի բազմաթիւններէ, ընդ որոնց՝ նաեւ կուսակցականներէ:

Յստակացնե՛ք:

Այս թղթածրարը հիմնական է, թէ՛ ոչ:



Իսկ ինչո՞ւ ոչ, երբ մեր երիտասարդութիւնը, նախ՝ անտարբեր է հայկական կուսակցութիւններու նկատմամբ, իսկ ամենէն վտանգաւորը՝ սկսած է թափանցել (կամ “թափանցուիլ”) այլ օղակներէ ներս:

Հայկական կուսակցութիւնները, իրենց ամբողջգոյութեան ընթացքին, եղած են իրենց գաղափարախօսութեանց կրողները, նաեւ, իւրաքանչիւրը, իր դատած հայեացքով ու դիտարկումով, իր ժողովուրդին ու հայրենիքին ծառայողը:

Մեծ Եղեռնը եւ անոր յաջորդող տարիները, Սփիւռքի տարածքին հայկական կուսակցութեանց վերապահեցին առաջնորդող երախտաշատ դերեր՝ հայապահպանումէն մինչեւ հայակերտումի ոլորտներ, դպրոցաշինութենէն մինչեւ մշակութապահպանումի լծակներ,

համայնքածառայութենէն մինչեւ հայրենասիրական գործունէութիւններ:

Ո՞վ կրնայ ուրանալ վերոյիշեալները կամ կասկածի տակ առնել այդ իրագործումները, եւ ասոնք՝ ի դէմս հայ կուսակցականներու համեստ տոկոսաթիւին, հայութեան ընդհանուր քանակին հետ բաղդատած:

Նոյնիսկ իրենք զիրենք չեզոք նկատող կամ անտարբեր համարող անձեր-կողմեր, կը հետեւէին հայկական կուսակցութիւններու առած վճռական քայլերուն, երբ հարցը կը վերաբերէր հայութեան ընդհանրական շահերուն կամ նոյնիսկ “ճակատային” թեքումներուն ու հետեւումներուն:

Հայաստանի “անակնկալ” անկախութիւնը շատ բան փոխեց Սփիւռքահայութեան կեանքին մէջ: Տեղաշարժերը՝ իրենց կարգին: Համաշխարհայնացումի հետեւանքները՝ եւս: Կեանքի պայմանները՝ նոյնպէս:

Մտայնութիւնները եւս փոխուեցան: Գործելաձեւերը տարբերուեցան: Առաջ եկան նոր մտածողութեան ու հոգեբանութեան երիտասարդական փաղանգներ, իրենց բազմաբղէտ մտածումներով, տեսադաշտերով եւ աշխարհահայեացքներով:



Հայկական կուսակցութիւնները, որոնք հիմնադրուած էին հայ ժողովուրդի պարտաւորեցնող կարիքներէն (ազատագրական շարժումներէն մինչեւ հայապահպանումի գործօններ), յետագային, կրցա՞ն քայլ պահել արդի հոլովոյթներուն հետ, կրցա՞ն յարմարիլ նորագոյն զարգացումներուն, իրենց զանազան կալուածներով:

Անկեղծ ու լուրջ պէտք է ըլլալ: Մեծ մասամբ՝ Ո՛Չ:

Ո՛չ, ոչ թէ անոր համար որ այդ ճիգը կամ պահանջը չկար, այլ՝ գործող նոր դեկավարութիւններ չունեցան այդ պահերը օգտագործելու սրատեսութիւնը, մնացին կառչած իրենց վնասաբեր սովորամոլութիւններուն, չհասկցան (կամ չուզեցին ընդունիլ) վերափոխուելու կամ վերանորոգուելու հրամայականութիւնները:

Քննադատութենէ աւելի տխուր իրողութիւն մըն է ասիկա, որ կը մնայ հայկական կուսակցութիւններու այսօրուա՛ն մղձաւանջը, առաւել կամ նուազ չափերով վերագրելի բոլորին, անխտի՛ր:

Ոեւէ մէկը պէտք չէ գոհունակութիւնը կամ համոզուածութիւնը ունենայ, որ հայկական կուսակցութիւնները վերջացած են, իրենց դերը աւարտած է, քանի՛ կայ անկախ Հայաստան եւ միայն հոն է որ անոնք (կամ ուրիշներ) կրնան գործել:

Բայց, ներկայ դրուածքով եւ ընթացքով ալ, հայկական կուսակցութիւնները ինչպե՞ս կրնան երաշխաւորուած պահել իրենց գոյութեան գործօնները, երբ անոնք սկսած են կամաց-կամաց հեռանալ այն կենսաւիշէն, որ կը կոչուի երիտասարդութիւն, հերթափոխիդրօշակակիր, ջահակրութեանսերունդ:

Կը նշանակէ թէ՛ հայկական կուսակցութիւններու եւ այսպէս ըսած անոնց կենսունակութիւնը ապահովելու վստահուած նոր սերունդին միջեւ սկսած է առաջանալ մտահոգիչ վիճի մը:

Իսկ ատիկա արդեօ՞ք տեսանելի եւ զգալի չէ: Կուսակցութիւնները եւ մանաւանդ անոնց դեկավարութիւններու մեծ մասը, արդեօք անդրադարձա՞ծ են այս հակոտնեայ իրավիճակին:

Եթէ այո՛, ապա, ինչո՞ւ կը մնան ձեռնաձալ եւ չեն լծուիր արագ ու գործնական բարեկարգելի միջոցներու:

Եթէ ո՛չ, ապա, պէտք է ընդունիլ որ այլեւս սխալ բան մը կայ կուսակցութիւններէն ներս:

Երկու պարագաներուն ալ, հարցումը անխուսափելի է:

Հայկական կուսակցութիւնները, այս գործընթացով կամ կաղապարումով, ընելիք ունի՞ն, թէ՞ ամէն ինչ ձգուած է անցեալէն ժառանգուած գաղափարական թէ ինչքային “հարստութիւններուն” տէր դառնալուն, պատահական առաջնորդներու նշանակումին (կամ տեղադրման), աշխատանքային ժամանակավրէպ եղանակներու վրայ յամենալուն:



Այս հրատապ նիւթը, զոր կ' արծարծենք այսօր, շատ փշոտ է եւ ունի բազմաշերտ քննարկումներու անհրաժեշտութիւն, սակայն, կը կարծենք թէ, հայկական կուսակցութիւնները կամ (հայաստանաբնակներու որակումով) *աւանդական* կուսակցութիւնները, որպէսզի չմնան... աւանդութեան գերիները ու չապրին երազային անցեալի յուշերով, ուրիշ ելք չունին, բացի՝

- * Վերատեսելու ներկայի կարգավիճակը
- * Արդիականացնելու կանոնադրութիւնը
- * Վերանորոգելու անդամաշարքը
- * Կարելորդելու մտաւորականութիւնը
- * Վերակառչելու սկզբունքներուն
- * Ներգրաւելու երիտասարդութիւնը
- * Սիրաշահելու հասարակութիւնը
- * Վերագտնելու ժողովրդականութիւնը
- * Բիւրեղացնելու դեկավարութիւնները

Ոմանք կրնան սրտնեղիլ այս "սուր" խորհրդածութենէն, ուրիշներ՝ չհամաձայնիլ, սակայն, չորհրականութենէն ի՞նչ կը փոխուի, երբ կայ "ահագանգող իրավիճակ"ի մը վտանգաւոր սահանքը, որ ոմանց պարագային հասած եւ անցած է "կարմիր գիծ"ը:

Լռե՞լ, համակերպի՞լ, թե՞՞ ցնցել ու բարեփոխել:

Հո՛ւ է հարցերուն-հարցը:

Հո՛ւ է գիտակցութեան հրամայականութիւնը:

Հո՛ւ է գործի լծուելու անյետաձգելիութիւնը:

Մենք համոզուած չենք ու չենք ալ ուզեր համոզուիլ, որ հայկական կուսակցութիւնները ընելիք չունին, բայց գործել ներկայ ուղիով ու շառաւիղով, ուրիշ տեղ մը՝ խաւարամտութեամբ ու նեղմտութեամբ, այլ հորիզոնականի մը վրայ ալ ինքնասիրահարուածութեամբ եւ անձնակեդրոնութեամբ, ո՞վ կրնայ հաւաստիացնել, թէ ո՞րքան կրնան տեսել անոնք եւ ո՞րքան համաժողովրդական կրնան դառնալ ու մնալ...:

ՀԱՅԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԱՆՀԵՏԱՆԱ՞Յ

Յակոբ Պալեան

ՊԱՐԶ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

Հայագիր-հայաստառ հրատարակությունները աստիճանաբար կը նուագին. թերթերու եւ գիրքերու տպաքանակը մոմի պէս կը հալի, թերթեր կը փակուին, որոնց կրնակալի կ'ընկերանայ հրապարակային եւ այլ ելոյթներու ընթացքին հայերէն խօսքի անհետացումը, վասն արդիականութեան եւ հասկնալիութեան: Այս՝ մասնաւորաբար Սփիւռք(ներ)ի մէջ: Հետզհետէ նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան, անցեալին՝ ռուսերէն, հիմա նաեւ ամերիկերէն:



Եթէ անցեալին գրուածը եւ խօսքը կը թարգմանուէին օտարներու ծանօթացուելու եւ անոնց կողմէ հասկցուելու համար, միջազգային ճանաչում գտնելու նպատակով, այսօր այդ աշխատանքը հայաճնտնողները ունի որպէս թիրախ, նուագագոյն ժառանգութիւն փոխանցելու յոյսով: Բայց այս հասցէի փոփոխութիւնը բարձրաձայն չ'ըսուիր, որովհետեւ անհերքելի տեղատուութեան փաստ է, այլասերման տանող, եւ այդ ընդունիլ կ'անհանգստացնէ, կեղծիքի դիմակը վար կ'առնէ:

ՆԱՀԱՆՋ ԵՒ ՀԱՅ ԳԻՐՔՈՎ ՀԱՐԱՋԱՏՈՒԹԻՒՆ

Նահանջ՝ որ ո՞ր կանգ պիտի առնէ, մտահոգութիւն չի պատճառեր, հետեւաբար կասեցման անհրաժեշտութիւնը օրակարգ չ'ըլլար:

Նահանջ՝ որ խուճապային է, անվերադարձի կնիքով թաւալզլոր անկում, կը մտածուի միայն անմիջականի փշրանքներով գոհանալու մասին:

Ոչ յոռետեսութիւն, ոչ լաւատեսութիւն, այլ պճեղ մը իրատեսութիւն եթէ ունենանք, մեր նախաձեռնությունները տարբեր որակ կ'ունենան:

Հայ տպագրութեան Հինգհարիւրամեակին մասին կը խօսինք եւ կը գրենք, օտար լեզուներով պատկերազարդ էջեր լոյս կը տեսնեն, հայերէն գիրքերու կողքերու պատկերներով, կարծէք միայն հպարտանալու, եւ զանոնք որպէս այցեքարտ գործածելու համար:

Կողքերու ետին գտնուող հայերէն խօսքը եւ գիրը հարազա՞տ են մեզի, բան մը կ'ըսե՞ն, գիտե՞նք, թէ միայն գունաւոր էջեր կը զարդարեն, կահոյքի վաճառատան գրադարաններուն մէջ դրուած խաւաքարտէ դատարկ կողքերու պէս:

Երբեմն թիւեր կը տրուին լոյս տեսած գիրքերու մասին: Կը խօսի՞նք տպաքանակի, ցրումի եւ ծախուածներու համարանքի մասին:

Հայերէն գրուած էջը անցեալը, ներկան, հայ միտքը եւ հայ ընկերութիւնը կը բերէ մեզի, որպէսզի անոնցմէ մեկնելով մեր ինքնութեան մէջ թելածենք, շարունակենք մեր



բազմահազարամեայ երթը, որպէս ազգի մը շարունակութիւն: Այս գիտակցութիւնը հայկական համարուած հաւաքականութիւններու ո՞ր տոկոսին կողմէ կ'ըմբռնուի եւ կ'ապրուի: Ափսոս, վիճակագրութիւն կազմելու եւ ունենալու սովորութիւն չունինք, եւ այդ պատճառով ալ ենթակայական կը մնանք մեր դատումներուն մէջ:

Ի հարկէ, այս հաստատումները սրտցաւ զրոյցի մակարդակին պիտի մարին, եթէ ազգային տեսիլքի գաղափարախօսութիւն մը չունենանք, եւ ղեկավարութիւն(ներ)ը զայն չտանի իւրաքանչիւր Հայու յարկին տակ, չվերածէ համոզումի, եւ անոր հետեւող իրաւ յանձնառութեան, շահախնդրութիւններէ եւ փոշիկներէ տարբեր:

Մեծ բառերը կը սիրենք, ինչպէս ճառ զարդարող «գոյապայքար»ը: Ի՞նչ բանէ կրնայ սնունդ առնել ան: Այսօր ի՞նչ բանով կը սնանի:

Մտածումներու յստակացման համար նախ պէտք է ճշդել հայ մնալ, հայերէնը պահել, հայատառ թերթ եւ գրականութիւն ունենալ, անոնց համար հայերէն սորվեցնել եւ հայկական վարժարաններ պահել վերջին մոհիկաններու կոիւներ չե՞ն:

Ինչո՞ւ մղել այդ կոիւները: Վերջին մոհիկաններու կոիւր կրնա՞յ յաջողիլ, ինչպէ՞ս կրնայ յաջողիլ: Յոռեգոյն եւ ամենէն վնասակար պատասխանները զգացական եւ ամբոխավարական բան չնշանակող խօսքերն են:

Ժողովուրդ մը իր մշակոյթով է ազգ: Ազգ մը երբ իր ինքնութեան ստորագելիները կորսնցուցած կ'ըլլայ, ուրիշ բանի վերածուած կ'ըլլայ: Եթէ այս չէ զանազան մեծ գաղափարներու մեկնակետը, զրոյց եւ վիճարկում կը դադրին գոյութեան իրաւունք ունենալէ:

ԱՆՀԵՏԱՑԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄՇԱԿՈՅԹԸ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԻՐ Է

Անհետացած ժողովուրդի մը մշակոյթը կ'ապրի գիրքերու մէջ, կոթողներով, խօսող պեղումներով,

արձանագրութիւններով, առասպելներով: Անոնք, տուեալ ժողովուրդի մահէն ետք, կը դառնան համամարդկային ժառանգութիւն, ինչպէս Սումերները, Հիթիթները, Հռոմը, փարաւոններու Եգիպտոսը: Անոնց ապրած աշխարհներուն մէջ տարբեր աշխարհահայեցողութեամբ, տարբեր լեզուներով, տարբեր հաւատալիքներով ժողովուրդներ կ'ապրին, ներխուժողներ՝ որոնք նոր ինքնութեամբ հաւաքականութիւն կը գոյացնեն:

«Ինչո՞ւ մղել այդ կոիւները» հարցումին պատասխանը պահու մը պիտի տա՞ն տեսիլք ունեցողները: Ինչ որ կը կոչենք զանգուածներ, իրենք զիրենք կ'առաջնորդեն անմիջականի, բարօրութեան, վերապրումի հզօր ցանկութիւններով: Եթէ անոնց չներշնչուի ինքնութեան եւ շարունակութիւն ըլլալու գաղափարախօսութիւնը, եւ անոնք ըստ այնմ չապրին իրենց կեանքը, կը ծնին նոր հաւաքականութիւններ, աւելի ճիշդ անոնք նոր շապիկի պէս կը հագնին ուրիշներու ինքնութիւնը:



Մփիւռք(ներ)ը իր ոտքին տակ հայրենի հող չունի, հետեւաբար, տոկալու եւ տեւելու համար, զայն ոչ բոլորովին փոխարինող կռուաններու պէտք ունի: Որո՞նք են այդ կռուանները: Ինչպէ՞ս ունենալ եւ պահել զանոնք:

Դարերու խորքէն եկած հայ կոչուած հաւաքակութիւնները մէկութիւն ունենալու համար հասարակաց մտածումներ, արժէքներ, հաւատալիքներ, ասանդութիւններ, լեզու, եւ լայն առումով մշակոյթ պէտք է ունենան: Այն օրը, որ հաւաքականութիւն մը այդ «հասարակաց»ներէն կը հեռանայ, այլ բաներով կը լեցնէ անոնց տեղը, ինք ալ կը վերածուի այլ բանի:

Հասարակաց մեր արմատին մաս կը կազմէ լեզուն, հայերէնը, իր տարբերութիւններով եւ անցեալի բարբառներով: Այդ բառերը, եւ անոնցմով հիւստւած երգը, առասպելը, ինչպէս Վահագնի կամ Սասունցի Դաւիթի «վէպ»երը, թուական չունեցող հեռուններէն կու գան, եւ մենք մեզ կը տեսնենք անոնց մէջ: Ապա, կրկին, դարերու ընթացքին հայ մարդոց ստեղծած մշակոյթը մենք ենք:

Այդ մշակոյթը կը պառկի, հայ խօսքով ու գիրով, մեր գիրքերուն մէջ:

Մենք, որպէս շարունակութիւն, այդ գիրքերով ենք: Եթէ խօսքն ու գիրը չդաջուին տեւելու համար, անոնց տեղ պիտի գան, կու գան ուրիշներ, որոնք մենք չենք: Ժամանանակից մեծ գրող մը կ'ըսէ, իր ձեռով, որ օտարախօսութիւնը որովայնախօսութիւն է, օտարագիր եւ օտարաբարբառ գիրքը օտարին կը պատկանի:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԶՏԻԿ ՔԱՅԼԵՐ

Հետեւաբար, ազգային գաղափարախօսութիւն է հայերէն թերթը, հայերէն գիրքը, հայերէն երգը, հայերէն խօսքը: Մեր ղեկավարութիւն(ներ)ը եթէ այս հարցին նկատմամբ այս մօտեցումը չորդեգրէ, թափահարումներով կը փորձեն ուշացնել «շարունակութիւն ըլլալէ դադրելու հանգրուանը»: Այդքա՛ն:

Ազգային քաղաքականութիւնը, որ մարզին ալ վերաբերի, այստեղէն պէտք է սկսի, կամ քաղաքականութիւն պիտի չըլլայ:

Թէեւ, գիտակից անհատները, իրենց կարգին, մասնակցութեան պարզ ձեւերով, դրական ազդեցութիւն կրնան ունենալ: Օրինակ, հայերէն թերթը տուն բերելով, որպէս հայերէն գրիի եւ խօսքի արտայայտութիւն եւ հաւատարմութիւն: Իսկ եթէ իւրաքանչիւր հայ տարին մէկ հայերէն գիրք գնէ եւ կարդայ, ինչպէս ասկէ առաջ ըսած են, այդ կ'ըլլայ մեծ նպաստ հայ գրականութեան զարգացման եւ հայ գրողին:

Պզտիկ հրաշքները գումարուելով կ'ըլլան մեծ:

Այս յանդգնութիւնն է որ մեր ինքնութեամբ մեզ կրնայ պահել պատմութեան բեմին վրայ, այլապէս հայերէնը կ'ըլլայ մեռեալ լեզու, եւ հայ ազգն ալ որպէս անուն կը յիշուի պատմական ուսումնասիրութիւններու մէջ:

Հաշտուա՞ծ ենք այս ապագային հետ...

Յ.Պ.

Ատրպէյճանի կացնային քաղաքականութիւնը անկում է ապրում

Կոչումը բարձրացրած, աշխատավարձ ստացած և ներկայումս արձակուրդի մեկնած Ռամիլ Սաֆարովին, միգուցէ, թուում է, թէ ամէն ինչ հոյակապ է:



Նա հերոս է, այն էլ կենդանի... Բայց ի հիասթափութիւն այդ «հերոս-կացնամարդի», պէտք է նշել, որ նրա միանգամեայ օգտագործման գործընթացն աւարտուել է և հիմա նա այլեւս պէտք չէ ատրպէյճանական ամբողջատիրական համակարգին, աւելին՝ Սաֆարովն իր ներկայութեամբ խանգարում է վարչակարգին, քանզի Ատրպէյճանի քարկոծումը նախատեսուածից շատ եղաւ: Պահն էլ շատ յարմար է, հարկաւոր է աշխարհին ցոյց տալ հայերի ահաբեկիչ դէմքը և միաժամանակ հաւասարեցման նշաններ դնել: Կայ նաև մէկ այլ գործօն՝ սովորաբար բռնակալները չեն

սիրում «կենդանի հերոսներ», որոնց ազդեցութիւնը ժամանակի հետ աւելի է մեծանում և սկսում է ստուերել հենց տիրոջը: Տիրակալները գերադասում են նմանների մեռած տեսակը, մանաւանդ որ այդ մահը եւս կարելի է ծառայեցնել որոշակի շահերի: Այնպէս որ, բոլոր ճանապարհները տանում են այս կացնասերի ոչնչացմանը: Ատրպէյճանում այդ ուղղութեամբ արդէն քայլերը ձեռնարկուած են՝ մի կողմից յստակ մեղադրանքներ են հնչում հայկական կողմի ուղղութեամբ, միւս կողմից Սաֆարովի կերպարը հերոսացում է՝ առանց կոնկրետ իր ներկայիս կեանքին անդրադառնալուն, ասես նա արդէն մեռել է:

Գաղտնիք չէ, որ նման բարդ էթնոկենետիկ զարգացումների ժամանակաշրջանում ապրող հանրոյթում ծաւալում են սոցիալ-հոգեբանական բարդ գործընթացներ: Այս առումով ուշագրաւ է ատրպէյճանցի դոկտոր Այտին Ալի-գատէի վերջերս լոյս տեսած յօդուածը: Փիլիսոփայութեան, ընկերաբանութեան և իրաւունքի դոկտորը նշում է, որ ատրպէյճանցիները ներկայումս տառապում են «հայամանիա» հիւանդութեամբ:

Հետաքրքիր է նաեւ մէկ այլ ատրպէյճանական մտաւորականի՝ Ատրպէյճանի նախագահի նախկին խորհրդական, քաղաքագէտ Վաֆա Գուլուգատէի խօսքերը, որը նա ասել է բոլորովին վերջերս: «Ատրպէյճանցիները որպէս ազգ դեռեւս ամբողջութեամբ չեն ձեւաւորուել, դրա համար անհրաժեշտ է անցնել մի քանի փուլ: Առաջին փուլն ազգովին ինքնորոշուելն է: Երկրորդ և երրորդ փուլերը լեզուին և կրօնին տէր կանգնելն է, ինչն Ատրպէյճանում վերածուել է սպեկուլացիայի»:



Փաստօրէն ներկայիս «օրեցօր հզօրացող» Ատրպէյճանն ինքնութեան փնտռողներին մէջ է: Ազգագոյացման, ազգային պետութեան ստեղծման այս բարդ պատմական ժամանակահատուածում ատրպէյճանցի թուրք-թաթարների համար ցանկացած յաջողութիւն կամ յաղթանակ կարելո՞ր է թէկու՞զ դա լինի բակային ֆութպոլ կամ կացնահարում, հայակործանում, թէկու՞զ խաղերի մէջ միայն հայը պարտուի, իսկ իրենք «յաղթեն»: Այդ է պատճառը, որ ատրպէյճանական պետութիւնը պատերազմում պարտուելուց յետոյ, աւելի շատ հերոսներ ունի, քան յաղթանակած Հայաստանը: Դրանով է պայմանաւորուած նաեւ այն հանգամանքը, որ Ատրպէյճանում չափից շատ մեծ նշանակութիւն են տալիս ամէն մի փոքր յաղթանակի՝ անգամ ամենաաննշան ոլորտներում: Հենց անցեալ չունենալու բարդոյթներով տառապող երկիրը կարող է ստորաբար իւրացնել իր տարածքում եղած ամէն տեսակ մշակութային հետքեր, որոնք փաստում են այլոց գոյութիւնը: Միայն նման մտածելակերպ դաստիարակող հասարակութեան մէջ կարող են հերոսներ համարուել գիշերային կացնահարողները: Ատրպէյճանի մանուկները պէտք է տեսնեն, որ իրենց երիտասարդները ամենագեղեցիկն են, ամենաուժեղը, ամենահամարձակը և այլն, որ իրենք են յաղթում բոլոր մրցոյթներում և այլն: Ուստի,

Ռ.Սաֆարովի հերոսացումը թերարժէքութեան բարդոյթի հետեւանք է:

Ազգային ինքնութեան տեսանկիւնից է հարկաւոր բացատրել նաեւ Թուրքիայում «թուրքիայի քաղաքացին թուրք է» կամ «թրքութիւնը վիրաւորել» հասկացողութիւնները, որոնք անգամ ամրագրուած են օրէնքներով: Զարմանալի չէ, որ Թուրքիայում մինչեւ օրս հայերին սպանողների ծնողներին իշխանութիւնները շնորհաւորում են լաւ որդի դաստիարակելու համար : Նոյն տրամաբանութեան մէջ է նաեւ Ռ.Սաֆարովի հերոսացումը՝ թերարժէքութեան բարդոյթ ունեցողները այդպէս են վարում: Քանի որ երկու դէպքում էլ նոյն թուրքն է, ոչ մի տարբերութիւն չկայ, նոյնպիսի հերոսացուած է նաեւ Հրանդ Տինքին սպանողը:

Ստամպուլի «Ակօս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի սպանութեան կազմակերպիչներից մէկը՝ Եասին Հայալն իր ազգակիցներից բազմաթիւ շնորհաւորական ուղերձներ է ստացել՝ սպանութիւն գործելու համար:

Ահա, թէ ինչ խնդիրներ ունեն մեր հարեւանները: Ահա, թէ ում հետ են աշխարհի զօրեղները նոյն սեղանին ճաշի նստում:

Ռազմական փորձագէտ Արկադի Գրիգորեան

HayNews.am

Անցուդարձ

Հայ-թրքական արձանագրութեանց վաւերացումը «սերտօրէն կապուած է» ԼՂ-ի խնդրի լուծման հետ

Թուրքիոյ նախկին արտգործնախարար Եաշար Եաքըշը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցարոյցին՝ կարծիք յայտնած է, թէ հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացումը «սերտօրէն կապուած է»



Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հետ, եւ Թուրքիոյ խորհրդարանը երբեք չի շրջանցեր այս յոյժ կարեւոր հարցը:

«Իմ կարծիքով, դա շատ կարեւոր հարց է: Երբ արձանագրութիւնները պէտք է յայտնուէին խորհրդարան, ես ըսի, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին մէջ առանց որեւէ յառաջընթացի, շատ բարդ կ'ըլլայ: Անգամ եթէ կառավարութիւնը յանձնէր

արձանագրութիւնները խորհրդարանի վաւերացման, շատ մը պատգամաւորներ արձանագրութիւններու վաւերացման դէմ կը քուէարկէին: Երբ արձանագրութիւնները կը ստորագրուէին, պէտք էր որ առաջարկութեամբ հանդէս գար ոչ թէ թրքական, այլ հայկական կողմը. հենց ստորագրման արարողութեան ժամանակ, իր դիրքորոշումը յայտնէր որոշ հարցերու շուրջ: Մենք հայկական կողմի հետ նախնական համաձայնութեան եկանք, բայց մենք գիտէինք, որ առանց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցէն ներս դրական փոփոխութիւններու, կարելի էր որ դժուարութիւններ ծագէին՝ խորհրդարանին մէջ արձանագրութիւնները վաւերացնելու հարցով», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է Թուրքիոյ նախկին արտգործնախարարը, ով Իսթանպուլի մէջ մասնակցեր է «Ակադեմական գոլիցերա-կովկասեան ցանցի» գիտաժողովին:

Հարցին, թէ արդե՞օք իր ըսածը չի նշանակեր, որ թրքական կողմը արդէն իսկ նախապայմաններ ունէր, Եաշար Եաքըշը արձագանգեր է. - «Նախապայման չէի անուաներ սա: Նախապայմանը շատ բարձր է ըսուած, բայց պէտք է հաշուի առնել, որ դարաբաղեան խնդիրը շատ նուրբ հարց է: Ես չեմ պատկերացներ, թէ թրքական խորհրդարանին մէջ, ինչպէս կրնան հայ-թրքական արձանագրութիւնները վաւերացվել՝ առանց դարաբաղեան հարցէն ներս դրական տեղաշարժերու»:

Նախկին արտգործնախարարը աշխարհի տասնեակ երկիրներէն ժամանած գիտնականներու, քաղաքագետներու առջեւ ելոյթ ունենալով, նոյնպէս խօսած է Հայաստանի մասին՝ որպէս Սեւծովեան տարածաշրջանի երկիր՝ նշելով, որ հայերն առաջինն են քրիստոնէութիւնն ընդունելու որպէս պետական կրօն: Իսկ Լեռնային Ղարաբաղի մասին բաւականին ատրպէյճանամետ յայտարարութիւններ ըրած է ան:

Եաքըշը Թուրքիոյ արտաքին գերատեսչութիւնը ղեկավարեր է 2002-2003 թուականներուն՝ Ապտուլա Կիլիկն առաջ: Ան իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութենէն է, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մէջ, բազմիցս հանդէս է եկեր հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացման դէմ:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցին, ան ըսած է, թէ հայ-թրքական յարաբերութիւններն այժմ միայն հասարակական շփումներու փուլի մէջ են, պաշտօնական զարգացումները կապուած են արձանագրութիւններու հետ:

«Մտեղծուած պայմաններուն մէջ, մեծ էր վտանգը, որ արձանագրութիւնները չեն վաւերացուիր: Կառավարութիւնը չէր ցանկար յայտնուիլ իրավիճակի մը մէջ, երբ քննարկումները հայկական կողմի հետ աւարտած ըլլային, իսկ խորհրդարանը չվաւերացներ արձանագրութիւնները: Կը կարծեմ որ պէտք է սպասել մէկ այլ բարենպաստ քամիի, որ հնարաւորութիւն կ'ընձեռէ հանելու այս հարցը դարակներէն: Որքան կը հասկնամ, երկու կողմերն ալ բարենպաստ հող չէին նախապատրաստած գործընթացի յաջող ընթացքի համար», - ըսած է Թուրքիոյ նախկին արտգործնախարարն ու աւելցուցեր է. - «Եթէ մենք սպասենք ու ըսենք, թէ հիմա մեր հերթն է, յետոյ ձերը, շատ ժամանակ կը պահանջուի: Փոխարէնը պէտք է կարենանք գտնել փոխադարձաբար ընդունելի ու ըմբռնելի ոլորտներ եւ աւելցնենք զանոնք: Ողջմիտ մարդկանց միջոցով սա մի օր կ'աւարտի՝ վաղ թէ ուշ: Այդ իսկ պատճառով մենք պէտք է յոյս դնենք ողջմիտ մարդկանց վրայ, որոնք առաջ կը մղեն գործընթացը»:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՄՆ-Ի ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԴԱՇՆԱԿԻՑ Է

Ուաշինկթընի «Truman National Security Project» ազգային ապահովութեան հիմնարկի լրագրող եւ ռազմագետ Տէնիէլ Կէյնըրը, ով կովկասեան տարածաշրջանին ուսումնասիրութեան նպատակով Հայաստան այցելած է, հարցադրում մը կ'ընէ. ինչո՞ւ աշխարհի մէջ ԱՄՆ-ու դեսպանատուներէն մեծութեամբ երկրորդը կը գտնուի Հայաստան (ինչպէս ծանօթ է՝ ամենէն մեծը Իրաքի մէջ է):



Անմիջապէս պատասխանելով՝ Կէյնըրը կը գրէ, որ պատճառը երկրին՝ աշխարհագրական դիրքն է: «Հայաստանը, որ դէպի ծով ելք չունեցող՝ 3 միլիոն բնակչութեամբ երկիր մըն է, թերեւս աշխարհի մէջ ամենէն խրթին դրացնութիւնները ունի. սակայն ԱՄՆ-ու աչքով՝ ան թերեւս Ուաշինկթընի դաշնակից երկիրներու ցանկին մէջ կարելորագոյն դիրքերէն մէկը գրաւողներէն է՝ նախագահ Օպամայի արտաքին քաղաքական օրակարգը յառաջ տանելու համար»: Երկիրը, ըստ փորձագետին, գուրկ է բնական պաշարներէ՝ յատկապէս նաւթ, կազէ կամ թանկարժէք քարերէ, բայց ԱՄՆ-ը կը ջանայ ամրացնելու Հայաստանի դիրքերը տարածաշրջանին մէջ: Կէյնըրը կը գրէ, որ «Հայաստան տառացիօրէն կը գտնուի շարք մը երկիրներու միջեւ, զորս Ուաշինկթըն կը համարէ իր հիմնական նախապատուութիւններէն: Քանի որ նախագահ Օպամա կը փորձէ իրագործել իր արտաքին քաղաքական նպատակները՝ խոչընդոտել Իրանի հիւլէական ծրագիրը եւ ժողովրդավարութեան ծիլեր սերմանել Ռուսաստանի մէջ», հետեւաբար ան կը քաջալերէ Հայաստանը դիմակայելու եւ գոյատեւելու: Մինչ Հայաստանը կը փորձէ զարգացնել տնտեսական կապերը Արեւմուտքին՝ Եւրոպական Միութեան եւ ԱՄՆ-ու հետ, անոր «լաւագոյն ընկերները» կը մնան Ռուսաստանը եւ Իրանը: Յօդուածագրին կարծիքով՝ Հայաստան, իր հմուտ դիւանագիտութեան շնորհիւ, հակառակ իր սահմանափակ պաշարներուն, դարձած է աշխարհաքաղաքականութեան (géopolitique) վարպետ՝ ըլլալով

աշխարհի միակ երկիրը, որ, կրնանք ըսել, լաւ յարաբերութիւններ կը պահպանէ միաժամանակ ԱՄՆ-ու, Ռուսաստանի եւ Իրանի հետ:

ԿԱՐԵՒՈՐ ԴԱՇՆԱԿԻՑ Է

«ԽՍՀՄ-էն յետոյ ԱՄՆ-ը Թուրքիոյ կոչ ըրած է ընդլայնելու ազդեցութիւնը կովկասեան տարածաշրջանին մէջ. Մեսութ Երլմագ

Ռուսական Regnum լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ Թուրքիոյ նախկին (1991, 1996, 1997) վարչապետ Մեսութ Երլմագ ատրպէյճանցի լրագրողներու հետ զրոյցի ընթացքին՝ անդրադարձեր է Թուրքիոյ կովկասեան քաղաքականութեան.

«Խորհրդային Միութեան փլուզումէն յետոյ ԱՄՆ-ը Թուրքիոյ կոչ ըրաւ ընդլայնել սեփական ազդեցութիւնը տարածաշրջանէն ներս՝ նպատակ հետապնդելով նուազեցնել Իրանի ու Ռուսաստանի դերը: Սակայն ցաւով պէտք է նշեմ, որ այն ժամանակ Թուրքիան չկարողացաւ գլուխ բերել ասիկա: Ներկայիս Թուրքիան կը փորձէ ետ բերել այն ատենուայ կորսուածը:



2009 թուականին, Թուրքիան Ցիւրիխեան արձանագրութիւններու ստորագրմամբ փորձեց վերականգնել Հայաստանի հետ իր դիւանագիտական յարաբերութիւնները՝ նպատակ ունենալով տարածաշրջանէն ներս ստեղծել աշխարհաքաղաքական նոր իրավիճակ:

Բնականաբար, Թուրքիոյ համար կարեւոր է Հայաստանի հետ սահմանի բացումը, սակայն Ղարաբաղեան հակամարտութիւնը և Ատրպէյճանի տարածքի գրաւման շարունակումը Անգարային թոյլ չեն տար իրագործել այդ նախագիծը: Թուրքիան Հայաստանի հետ սահմանը փակեր է ի պատասխան ատրպէյճանական տարածքներու գրաւման, քանի որ չէր կրնար անտարբեր գտնուիլ եղբայրական Ատրպէյճանի խնդիրներու հանդէպ»:

Հայաստանը ԵՄ-էն 43 մլն եւրօ պիտի ստանայ՝ ԵՄ-ի հետ համարկումը շարունակելու համար



Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Սարգսեանը ու Եւրոպական միութեան ընդլայնման եւ հարեւանութեան քաղաքականութեան հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիլէն՝ Մեպտեմբերի 27-ին, Երեւանի մէջ, 2 համաձայնագիր կնքեցին՝ ԵՄ-ի կողմէ Հայաստանին 43 մլն եւրօ օժանդակութեան մասին: Յատկանշական է, որ համաձայնագրերու կնքումը ձգձգուեցաւ, որուն պատճառով Տ. Սարգսեանը ու Շ. Ֆիլէն լրագրողներուն ներկայացան մօտ 45 րոպէ ուշացումով: Եւրոպացի



դիւանագէտը կատակեց, որ ուշացումը նշան է այն բանին, թէ որքան կարեւոր ու բովանդակային քննարկումներ են ընթացել:


Ըստ Շ. Ֆիլէի՝ վերջին տարիներուն Հայաստանի մէջ, դրական փոփոխութիւններ են տեղի ունեցել, ինչ որ նպաստել է լրացուցիչ 15 մլն եւրօ յատկացնելու որոշման: Ըստ Շ. Ֆիլէի՝ քննարկուել են նաեւ 2013 թ. նախագահական ընտրութիւններու նախապատրաստական խնդիրները, այն համապատկերին մէջ, որ Հայաստանէն ներս տեղի ունեցող ժողովրդավարական բարեփոխումները շարունակական ըլլան:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը յայտարարած է, որ ԵՄ ֆինանսական եւ տեխնիկական օժանդակութիւնը հնարաւորութիւն կու տայ էապէս մեծցնելու կառավարութեան կարողութիւնները, ինչպէս ենթակառուցումներու հարցով, (առողջապահական, բուսասանիտարական, մաքսային ընթացակարգեր), այնպէս ալ դեմոկրատական ինստիտուտներու կատարելագործման:

«Այս փաստաթղթերի ստորագրութիւնը նոր թափ է հաւաքելու ԵՄ-ի հետ ինտեկրացման գործընթացներին», - ըսած է Տ. Սարգսեանը:

ARMENIACA ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԲԱՑՈՒՄԸ ՓԱՐԻՁԻ ՄԷՋ

«Նոր Յառաջ» թերթը կը գրէ, որ՝ Երեքշաբթի՝ Սեպտեմբեր 25ի երեկոյեան, ՀԲԸՄ-ի Փարիզի «Ալեք Մանուկեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Արմէնիաքա» ցուցահանդէսին բացման հանդիսաւոր արարողութիւնը:



Կեդրոնին երկու յարկերու պատերուն զետեղուած էին մեծ, երկար որմագղներ, ուր երկու լեզուներով՝ հայերէն եւ ֆրանսերէն՝ տեղ գտած էին հայկական ճարտարապետական ժառանգութեան ուսումնասիրութեան, ցուցակագրման եւ յաւերժացման գործին իրենց նպաստը բերած գիտնականներու, նուիրեալներու, կազմակերպութիւններու անունները, իրենց մասին բացատրութիւններ, իրենց լուսանկարածներէն...: Այսպէս յիշուած էին անունները, ի շարս այլոց, Ն. Մառի, Ա. Կրապարի, Նիքոլ եւ Ժան-Սիշէլ Թիէրիի, Ա. Հախնազարեանի, Ա. Զարեանի, Ա. Մանուկեանի, Հ. Վահրամեանի, Ա. Ալփակօ-Նովելլոյի, Փ. Տօնապետեանի, Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեան կեդրոնի (RAA), Միլանոյի Հայկական մշակոյթի ուսումնասիրման եւ փաստագրման կեդրոնի (CSDCA), եւ այլոց:

Ծայրէ ծայր լեցուած սրահին մէջ տեղ գրաւած էին նաեւ Հայաստանի Փարիզի դեսպան Վիգէն Զիտէչեան, դեսպանորդ Վահագն Աթաբեկեան, Ֆրանսայի Հայոց Թեմակալ առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան, բազմաթիւ այլ անձնաւորութիւններ:

Բացման խօսքը արտասանեց ՀԲԸՄ-Ֆրանսայի նախագահ Ֆիլիփ Փանոսեան: Ողջունելէ ետք ներկաները՝ կարճ բացատրութիւններ տուաւ ցուցահանդէսին մասին եւ ըսաւ, թէ ան պիտի ներկայացուի Ֆրանսայի այլ քաղաքներու մէջ ալ, ինչպէս նաեւ արտասահման:



Անոր յաջորդեց դեսպան Չիտեչեան, որ նոյնպէս կարճ ելոյթ մը ունեցաւ. ողջունեց «Արմէնիաքա»-ի նախաձեռնութիւնը եւ ընդգծեց կատարուած գործին կարեւորութիւնը:

Վերջին խօսք առնողը եղաւ Յարութիւն Գեորգեան, որ «Արմէնիաքա» ծրագրի համակարգողն է: Ան հանգամանալից կերպով ներկայացուց իր ղեկավարած գործը:

Բացատրեց, թէ «Արմէնիաքա»-ի նպատակն է՝ աւերիչներու անդադրում յարձակումներուն ենթակայ կամ իրենց ճակատագրին լքուած հայկական ճարտարապետական կոթողները յաւերժացնել գէթ կատարուած ուսումնասիրութիւններու, թուայնացուած լուսանկարներու, փաստագրերու միջոցով:

Ըսաւ, թէ նախաձեռնութեան գաղափարը ծնունդ առած է 40 տարի առաջ՝ Թիւրքի ամուլին կատարած գործը արժեւորելու նպատակով: Սկիզբը եղած է սոսկ ֆրանսական չափանիշով, ապա ընդլայնուած է եւրոպականին, եւ այսօր կը հանդիսանայ Եւրոպական Միութեան հովանաւորութիւնը վայելող ծրագիր մը: Ըսաւ նաեւ, թէ սկիզբի շրջանը աւելի ՀԲԸՄ-ի հովանաւորութիւնը վայելող նախաձեռնութիւն էր, այսօր շատ աւելի ընդարձակուած է դաշտը:

Յ. Գեորգեան, շեշտելու համար կատարուած աշխատանքին կարեւորութիւնը եւ անողոր ժամանակին դէմ պայքարը, ըսաւ, թէ այսօր գոյութիւն ունին լուսանկարներ՝ հայկական պատմական կոթողներու, որոնք արդէն անհետացած են: Լուսարձակի միջոցով ան ցոյց տուաւ կատարուած աշխատանքը՝ անհրաժեշտ բացատրութիւններով: Աւելցուց նաեւ, թէ Եւրոպական յանձնախումբէն 200.000 եւրոյի գումար մը ստացած են որպէս յատկացում, եւ առնուազն այդքան եւս պէտք է՝ կարենալ լաւագոյն ձեւով շարունակելու համար սկսուած գործը:

Ան իրաւացիօրէն նշեց նաեւ, որ այս «գործիքը» կրնայ կարեւոր դեր խաղալ Յեղասպանութեան 100-ամեակին:

Երեկոյթը վերջ գտաւ ընդունելութեամբ մը:

Այս առթիւ պատրաստուած է նաեւ գեղեցիկ թերթիկ մը: Ձեռնարկին միակ եւ յոյժ քննադատելի երեկոյթը այն է, որ թէ՛ որմնագդերուն եւ թէ՛ թերթիկին մէջ օգտագործուած արեւելահայերէնը՝ արեւելանական ուղղագրութեամբ է:

Ցուցահանդէսը բաց կը մնայ մինչեւ Հոկտեմբեր 26: Երկուշաբթիէն Ուրբաթ՝ ժամը 11էն 17.30. «Ալէք Մանուկեան» կեդրոն՝ 118 rue de Courcelles, Paris 17e: Ը. Թ.

Այլ լուրեր

ԱԼԻԵԻՒ՝ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԿԱՏԱՐԱԾ ԽՈՍՏՈՒՄԸ ԿԸ ՄԿՄԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԻԼ

Ազերայաճանի Տնտեսական զարգացման նախարար Շահին Մուսաթաֆաեւի զլխաւորութեամբ ազերայաճանցի գործարարներու պատուիրակութիւն մը Հոկտեմբերին Հունգարիա կ'երթայ:



Ըստ «Թրէնտ նիւզ»՝ ազերայաճանական գործակալութեան՝ պատուիրակութիւնը պիտի մասնակցի հունգար-ազերայաճանական գործարարական ֆորումին, որ կազմակերպուած է ազերայաճանական AZPROMO-ին կողմէ:

Ինչպէս ծանօթ է, մարդասպան Սաֆարովի յանձնումին առթիւ՝ շրջեցան նաեւ այն մասին լուրեր, ըստ որոնց՝ Ազերայաճան Հունգարիոյ՝ շուրջ 2-3 միլիառ տոլար պետական պարտքի «գնում»ի խոստում կատարած էր:

Որոշ փորձագէտներ այդ խոստումը, լուրերուն նկատմամբ վերապահ էին եւ չէին հաւատար, թէ Ալիեւ կը յարգէ այդ խոստումը, բայց ըստ երեւոյթին արդէն ան կը սկսի տալ իր պտուղները:

ՆԱԽԱԳԱՀ ՀՈԼԱՆՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԳԱԼ ՏԱՐՈՒԱՆ ՄԿԶԲԻՆ ԹՈՒՐԳԻԱ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Ըստ թրքական «Հիւրրիյէթ» օրաթերթին՝ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահը թուրք վարչապետ Էրտողանի կողմէ պաշտօնապէս Թուրքիա հրաւիրուած է, եւ ամենայն հաւանականութեամբ՝ այդ այցելութիւնը տեղի կ'ունենայ 2013 Փետրուար կամ Մարտ ամսուն:



Այնպէս կը թուի, թէ Էլիզէ ընդառաջած է հրաւերին:

Նշենք, որ G-20-ի Մեքսիքոյի վեհաժողովին՝ Էրտողան Հոլանտի դիտել տուած էր որ ֆրանսացի ոչ մէկ Հանրապետութեան նախագահ Թուրքիա այցելած է վերջին քսան տարիներու ընթացքին (Մարքոզի գացած էր որպէս G-20-ի նախագահ): Ըստ թրքական աղբիւրներու՝ Անգարա արդէն

պատրաստած է ապագայ այս հանդիպումին օրակարգին առանցքը, որ կը բաղկանայ հիմնական երկու նիւթ. Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը եւ Պատժելիութեան օրէնքը:

Հայաստանի և Ատրպեյճանի միջև պատերազմը վերսկսելու է. Հրանդ Բագրատեան

«Հայ ազգային քոնկրես» ընդդիմադիր դաշինքի անդամ, ԱԺ պատգամաւոր Հրանդ Բագրատեանը համոզուած է, որ Հայաստանի և Ատրպեյճանի միջև պատերազմը վերսկսելու է:



Սեպտեմբեր 20-ին կայացած մամուլի ասուլիսին, ան յայտարարեց, որ այս հանգամանքը արդէն բոլորի համար ակնյայտ է, քանի որ Ատրպեյճանը բացայայտօրէն կը պատրաստուի պատերազմի:

«Նրանք դրա մասին յայտարարում էլ են: Հենց յարմար առիթ լինի՝ պատերազմը կը սկսուի: Մարդիկ 40 միլիարդի գէնք են առել ու լուրջ պատրաստուում են», –

ըսաւ ան:

«Գնել են անօդաչու ինքնաթիռներ և պատրաստուում են Հայաստանը ումբակոծել: Իսկ մենք չունենք հեռահար հրետանի», – ըսաւ նա:

Հարցին, թէ, արդե՞ք, գերտէրութիւնները թոյլ կը տան, որ Ատրպեյճանը վերսկսի պատերազմը, ան պատասխանեց. «Իհարկէ թոյլ կը տան, որ նոր հաւասարակշռութիւն մտնի այս իրավիճակում»:

Բագրատեանը նաեւ յիշեցուց, որ Ատրպեյճանը արդէն պաշտօնապէս յայտարարեր է, որ կը պատրաստուի հեռահաղորդակցութեան հզօր ալեհաւաք գնել, որուն հիմնական նպատակը, ըստ Բագրատեանի, Հայաստան գտնուող մինչեւ վերջին գէնքի ու զինամթերքի մասին տեղեկութիւններ հաւաքելն է:

Լեոնային Ղարաբաղի Պաշտպանութեան նախարար. «Հակառակորդը պէտք է իմանայ, որ պատերազմը չի կարողանայ յաղթել»



«Ատրպեյճանը պէտք է իմանայ, որ չի կարողանայ յաղթել Լեոնային Ղարաբաղի դէմ պատերազմը»: Այս մասին յայտնեւ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարար Մովսէս Յակոբեանը լրագրողներու հետ զրոյցի ժամանակ:

Անդրադառնալով Հոկտեմբեր ամսուան մէջ նախատեսուած զինուորական հաւաքներուն՝ Լ.Ղ. պաշտպանական ծառայութիւններու ղեկավարը յայտնեւ է, որ Պաշտպանութեան բանակը մշտապէս

կ'իրականացնէ նման միջոցառումներ, սակայն այս տարի անոնք առաւել մասշտապային պիտի ըլլան:

Նախարարի խօսքով, նախատեսուած են նաեւ ուսումնավարժանքներ. «Նմանատիպ միջոցառումները ուղղուած են պատերազմի զգուշացմանը եւ կանխմանը: Բանակի գործունէութեան, բոլոր միջոցառումների, ուսումնավարժանքների եւ հաւաքների նպատակը այն է, որպէսզի հակառակորդը իմանայ, որ եթէ պատերազմ սկսուի, ապա կրկին պարտութիւն կը կրի»,- ըսեր է Մովսէս Յակոբեանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՋՆՁԵԼ ՏԵՐԱՀՈՉՄԱԿ 301Ը

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը՝ կոչով մը Ռուսաստանը, Հունգարիան, Պելառուսը եւ Թուրքիան կը հրաւիրէ նշանակալից քայլեր առնելու՝ մետիաներու ազատութեան ուղղութեամբ:



Աւելի ճշգրիտ ըլլալու համար, Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի Մշակոյթի, գիտութեան, կրթութեան եւ մետիաներու յանձնաժողովը Հոկտեմբեր 11ին հրապարակած է տեղեկագիր մը, զոր պատրաստած է շուէտացի Մաթս Եոհանսէն:

Միւս երկիրներու կատարուած դիտողութիւններու կարգին, Թուրքիոյ պատժական օրէնսգրքի թիւ 301 տխրահռչակ յօդուածը

գլխաւոր քննադատութեանց թիրախ կը դառնայ ու կը պահանջուի անոր անմիջական ջնջումը: Կըսուի թէ 2008ին Թուրքիոյ կատարած վերանայումը բան չէ փոխած զայն անարդար կերպով կիրարկելու կարելիութենէն: Տեղեկագրին մէջ յատուկ նշում կատարուած է նաեւ «Էրկէնէքոն»ի հարցը պրպտող լրագրողներու դէմ բացուած դատերու մասին. երեւոյթը որակուած է՝ «խնքին, մետիաներու ազատութեան ծանրակշիռ բռնաբարում»:

Այլազան

Թուրքիան փոխեր է 24.000 տեղանուն եւ կը խեղաթիւրէ պատմութիւնը. պատմաբան

Արեւմտեան Հայաստանի կամ, առհասարակ, Թուրքիոյ տարածքին վրայ գտնուող հայկական նախկին բնակավայրերու անունները շարունակական ձեւով և պետական մակարդակով կը փոխուին, այս մասին Tert.am-ին ըսած է պատմաբան Ռուբէն Մելքոնեանը՝ մանրամասնելով, որ այդ քաղաքականութիւնը կը տարուի դեռ անցեալ դարու սկիզբէն:

Իր խօսքով՝ հայաստանեան պատմաբաններու մօտաւոր հաշուարկները ցոյց են տուեր, որ փոխուեր է մօտ 24.000 հայկական տեղանուն, և կան ընդամենը մի քանի պահպանուածներ, որոնցմէ ամենէն յայտնիներն են՝ Մուշ, Վան, Սասուն:



«Եւ այսօր Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր, անգամ փոքր բնակավայրերի տեղանունները, բլուրները, ձորերը կրում են ոչ հայկական անուններ», – ըսած է ան:

«Ինչ վերաբերում է պահպանուածներին, ապա Թուրքիայի իշխանութիւնների հասցէին երկրի ազգային, ազգայնամոլական շրջանակներից անընդհատ քննադատութիւն է հնչում, որ անյարիր է Թուրքիա պետութեան մէջ ոչ թուրքական տեղանունների պահպանումը», – աւելցուցած է թուրքագետը:

Թրքական Sabah-ի փոխանցմամբ՝ Թուրքիոյ Պիթլիս նահանգի պաշտօնեաներու կողմէ հնչէր է առաջարկ՝ Վանայ լճի անունը կոչել Դատուանի ծով, Ահլաթի լիճ կամ Պիթլիս Վանի լիճ, ինչ որ անհանգստացուցեր է Վանի փոխքաղաքապետը և Վան նահանգի այլ պաշտօնեաները:

Ըստ այնմ՝ Վանի փոխքաղաքապետ Սապրի Ապին յայտարարեր է, որ շատ սխալ է Վանայ լճի անունը դնել Դատուանի ծով, քանի որ հնուց ի վեր լճի անունը յայտնի է որպէս Վանայ լիճ, և բոլոր զբօսաշրջիկները կու գան տեսնելու հենց Վանայ լիճը:

Սապրի Ապին Պիթլիս նահանգի պաշտօնեաներուն նաեւ կոչ է ըրած՝ Վանայ լճի անունը փոխելու փոխարէն, Վանայ լճի պահպանութեամբ զբաղիլ:

Անդրադառնալով թեմային՝ թուրքագետ Ռուբէն Մելքոնեանը ըսած է, որ տեղանուններու փոփոխութեան գործընթացը սկսեր է դեռ Էնվեր փաշայէն (1914 թ. հրաման): Արդարեւ, ան բոլոր նահանգապետներուն կը կարգադրէր փոխել, այսպէս կոչուած, «ոչ թուրքական հնչէղութիւն» ունեցող տեղանունները:

Արդէն Թուրքիոյ Հանրապետութեան Ժամանակաշրջանին, կը ստեղծուի Տեղանուններու փոփոխութեան յանձնաժողով, որ պարբերաբար կը փոխէ Արեւմտեան Հայաստանի տեղանունները:

«Համակարգը հետեւեալն է եղած. կամ լրիւ թրքացուցած են այդ տեղանունները կամ հայկական տեղանուններուն կցած են թրքական ածանցներ՝ անոնց տալով թրքական երանգ», – մանրամասնած է պատմաբանը:

«Վանայ լճի անունը փոփոխելն, առհասարակ, Թուրքիայի իշխանութիւնների այլատեսացութեան հերթական դրսեւորումներից է և, բացի այդ, պատմութեան խեղաթիւրման հերթական աղաղակող փաստն է: Վան անունն ունի հազարամեակների պատմութիւն և այդ անուանափոխութիւնն ուղղակի հաւասարագոր կը լինի պատմութեան խեղաթիւրմանը», – բացատրած է ան:

Պուայէ Խոստացած Է Հայոց Ցեղասպանութեան Մասին Նոր Օրինագիծ Ներկայացնել

Ֆրանսայի խորհրդարանին մէջ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծի հեղինակ, երեսփոխան Վալերի Պուայէ խոստացած է նոր օրինագիծ ներկայացնել:



Թրքական լրատուամիջոցները՝ յղում կատարելով «Նուվել տ'Արմենի» պարբերաբերին, կը հաղորդեն, որ Պուայէ յայտարարած է, որ կը փափաքի աւարտին հասցնել սկսած գործը: «Օրինագիծը անգամ մը եւս խորհրդարանի օրակարգ պիտի մտցնեմ: Մենք տակաւին յոյս ունինք: Առայժմ կը հետեւինք, թէ նախագահ Ֆրանսուա Հոլլանտ պիտի կատարէ՞ խոստումը, թէ՞ ոչ: Ան յայտարարած էր, որ օրինագիծը օրակարգ պիտի մտցուի, սակայն այսօր Թուրքիոյ նկատմամբ այլ քաղաքականութիւն կը վարէ», ըսած է Պուայէ:

ՍԱՖԱՐՈՎԻ ՀԱՐՑԸ ՎՏԱՆՔԱԾ Է ՄԱՄԷՏԵԱՐՈՎԻ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒՄԸ

Ռուսական fraza.ru կայքին համաձայն՝ Ազերպայճանի Արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարով յայտնուած է պաշտօնանկ ըլլալու վտանգին առջեւ՝ մարդասպան Ռամիլ Սաֆարովին պատճառով:



Մամետեարով արժանացած է Ազերպայճանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ անոր շրջապատի խիստ զայրոյթին, որովհետեւ ինք կտրականապէս դէմ արտայայտուած էր՝ մարդասպան սպան Հունգարիայէն տեղափոխելու եւ Ազերպայճանի մէջ զինքը հերոսացնելու գործողութեանց: Արտաքին գործոց նախարարը զգուշացուցած էր Ի. Ալիեւը, որ ցմահ բանտարկութեան դատապարտուած ոճրագործին ազատ արձակումը անուղղելի վնաս կրնայ հասցնել Ազերպայճանի միջազգային հեղինակութեան եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման բանակցութեանց: Ազերպայճանի մէջ արդէն իսկ լուրեր կը շրջին, թէ Մամետեարով կրնայ փոխարինուիլ իր առաջին տեղակալ Հաֆիզ Փաշաեւով:

Աթաթիւրքի յուշարձանի բացումը Հունգարիայի կառավարութեան երկակի ստանդարտների կիրառութեան ապացոյց

Հունգարիայում տեղադրուել է Քեմալ Աթաթիւրքի արձանը



2012թ. օգոստոսի 31-ին Հունգարիայի իշխանութիւնների՝ ատրպէյճանցի մարդասպանին արտայանձնելու իրողութիւնից յետոյ Հայաստանի Հանրապետութեան՝ Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնների խզումից ի վեր այդ երկիրը ջանքեր չի խնայում վերականգնելու դիւանագիտական յարաբերութիւնները:

Այս ուղղութեամբ պարբերաբար հայ և հունգար ժողովուրդների բարեկամութեան վաղեմութեան և ամրութեան վերաբերեալ ելոյթներ են ունենում հունգար մշակոյթի ու հասարակական գործիչներ՝ փորձելով գործել զգայական ոլորտում: Սակայն միանշանակ հակառակ տպաւորութիւն է ենթադրում իշխանական գործելակերպը, որի հերթական սաղրանքը Քեմալ Աթաթիւրքի կիսանդրու տեղադրումն էր Պուտափեշտում: Ինչպէս յայտնում է ՀՀ սփիւռքի նախարարութեան Եւրոպայի հայ համայնքների վարչութիւնից, թէև հունգարիայի հայ համայնքը խստօրէն դատապարտեց ու բողոքի ակցիա իրականացրեց արձանի տեղադրման կապակցութեամբ, այնուամենայնիւ այն արդէն Հունգարիայում թուրքերի պաշտամունքի վայրերից մէկն է:

Արձանի տեղադրման փաստը երբեմնի բարեկամ համարուող հայ ժողովրդի նկատմամբ հերթական փորձաքարն էր՝ լի յետագայ սաղորիչ գործարքներով: Յատկանշական է, որ թուրք գործիչների գործելակերպում բացակայում է նոյնիսկ ազգային հերոսների նկատմամբ պատկառանքը, նրանք պղծում են իրենց իսկ հերոսի արձանը, ապա մեղադրում հայերին:

Այսպիսով Հունգարիան ոչ առաջին անգամ հերոսացնում է մարդասպանին՝ Ցեղասպանութեան գործչին՝ հերթական անգամ ապացուցելով, որ պատրաստ է առօրէական քաղաքական-տնտեսական շահերը առաջնահերթ համարել համամարդկային արժեքներին, միջազգային իրաւունքի նորմերին:

Մեր ժամանակների պատմութիւնը ցոյց է տալիս, որ Հայկական հարցի և հայ ժողովրդի նկատմամբ ձեւաւորուել է հերթական տանդեմը՝ ի դէմս Հունգարիայի և թուրքատրպէյճանական կողմի, երկրներ, որոնք ունեն միեւնոյն արժեքային համակարգը՝ առաջնահերթօրէն բաղկացած մարդասպաններից:

ՄՓԻԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԻՍՏ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԺ ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ



Հոկտեմբեր 12ի առաւօտեան, յետ երկարատեւ հիւանդութեան, վախճանած է Երուսաղէմի Հայոց պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեան՝ 93 տարեկանին: Երուսաղէմի Հայոց պատրիարք ընտրուած էր 1990-ին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի վախճանումէն յետոյ՝ 1994-95 թուականներուն՝ մինչեւ Ամենայն Հայոց Գարեգին Ա.ի Կաթողիկոս ընտրութիւնը, եղած էր Կաթողիկոսական տեղապահ:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագոյն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու ողջ եկեղեցական դասը սգում են բազմավաստակ Պատրիարք Սրբազան Հօր մահը՝ աղօթելով, որ Տէրը Սուրբ Հոգու մխիթարութիւնը պարգեւի հաւատավոր մեր ժողովրդին եւ Իր խնամքի եւ օրհնութեան ներքոյ պահի Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը եւ նրա զինուորեալ միաբանութիւնը», ըսուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ այս առթիւ տարածած հաղորդագրութեան մէջ: